

ՄԻԶԱՔԱՐԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Միզաքարային հիվանդության ուղեցույցի նպատակն է օգնել պրակտիկ բժիշկներին, հիմնվելով ապացուցողական բժշկության տվյալների վրա, ճիշտ վարել միզաքարային հիվանդությունը և կիրառել այդ տվյալները կլինիկական պրակտիկայում, ինչպես նաև որոշակի կոնկրետ իրավիճակներում կայացնել հիմնավորված որոշում՝ ուշադրություն դարձնելով ամենաբարձր որակի գիտական տվյալներին և հիվանդի առանձնահատկություններին/նախասիրություններին:

Մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Հայաստանի Ուրոլոգիական Ասոցիացիայի անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն է հանդիսացել Եվրոպական Ուրոլոգիական ասոցիացիայի 2016թ միզաքարային հիվանդության ուղեցույցը (EAU Guidelines on Urolithiasis – 2016), ինչպես նաև Medline, EMBASE և Cochrane աղանց շտեմարանների տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս սկզբնաղբյուր հանդիսացող ուղեցույցում օգտագործվել է Օքսֆորդի ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգումը: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողն ու աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Հայկական Ուրոլոգիական ասոցիացիայի անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցը նախատեսված է ուրոլոգների, ընդհանուր պրակտիկայի բժիշկների, նեֆրոլոգների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական վերանայման և թարմացումների՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Այս ուղեցույցում ըստ ապացուցողական բժշկության վերջին տվյալների ներկայացվել և լուսաբանվել են միզաքարային հիվանդության էթիոլոգիան, տարածվածությունը, ռիսկի գործոնները, դասակարգումը, ախտորոշիչ հետազոտությունները, բուժման մեթոդները,

հատուկ խմբերում ախտորոշման և բուժման առանձնահատկությունները, հսկողությունն ու կանխարգելման մեթոդները: Ընդհանուր առմամբ ձևակերպվել է խորհուրդ, որոնցից

Հեղևություններ

Միջազգային փորձագետների մեծաքանակ խումբ եկել է համաձայնության միզաքարային հիվանդության վարման բազմաթիվ կարևոր սկզբունքների վերաբերյալ: Չնայած այն փաստին, որ որոշ խորհուրդներ ունեն թույլ ապացուցողական ուժ, այնուամենայնիվ, այս մեթոդաբանությամբ մշակված տեղեկատվությունը դա միզաքարային հիվանդությամբ հիվանդների բուժման արդյունքների բարելավման հիմքն է:

Բանալի բառեր

Միզաքարային հիվանդություն, ուղեցույց, Եվրոպական ուրոլոգիական ասոցիացիա, Հայկական ուրոլոգիական ասոցիացիա, ապացուցողական բժշկություն:

Պատասխանատու համակարգող

ԱՅԺ Գրաբսկի, բ.գ.թ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի “Ուրոլոգիայի և անդրոլոգիայի” ամբիոնի դոցենտ, Հայկական ուրոլոգիական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի Հանրապետության գլխավոր ուրոլոգ, “Իզմիրյան” ԲԿ-ի ուրոլոգիայի բաժանմունքի վարիչ:

Աշխատանքային խմբի անդամներ

- Հ.Ս. Դվոյան, ուրոլոգ, “Իզմիրյան” ԲԿ
- Շ.Բ. Դանիելյան, բ.գ.թ., ուրոլոգ, “Իզմիրյան” ԲԿ
- Գ.Վ. Ավանեսյան, ուրոլոգ, “Իզմիրյան” ԲԿ
- Հ.Վ. Ենոքյան, ուրոլոգ, “Իզմիրյան” ԲԿ
- Հ.Մ. Զուռնաչյան, բ.գ.թ., ուրոլոգ, “Իզմիրյան” ԲԿ
- Ա.Վ. Վարդանյան, ուրոլոգ, “Իզմիրյան” ԲԿ
- Ի.Մ. Շինդյան, ուրոլոգ, “Իզմիրյան” ԲԿ

- Ռ.Վ. Աղաջանյան, ուրոլոգ, "Իզմիրյան" ԲԿ
- Ա.Ա. Քոչարյան, ուրոլոգ-ռեզիդենտ, "Իզմիրյան" ԲԿ
- Գ.Գ. Շադյան, ուրոլոգ-ռեզիդենտ, "Իզմիրյան" ԲԿ

Շահերի բախման հայտարարագիր

Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարում են, որ սույն փաստաթղթի մշակման և ստեղծման համար չեն ստացել որևէ ֆինանսական աջակցություն դեղագործական և բժշկական տեխնիկայի կազմակերպություններից: Ուղեցույցում ներկայացվել են հաստատված արդյունավետությամբ բուժման մեթոդներն ու դեղորայքային միջոցները, առանց վաճառքային անուններ նշելու:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու համակարգողն իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր անդամներին, ինչպես նաև, սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհուրդը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին: Հատուկ շնորհակալություն ԵՈՒԱ ուղեցույցների գրասենյակի նախագահ պրոֆ. Ջեյմս Ն'Դոուն (Prof. Dr. James N'Dow) այս ուղեցույցի տեղայնացման և կիրառման հնարավորություն ընձեռնման համար:

Ուղեցույցները չեն կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ հիվանդի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում, սակայն օգնում են բժշկին կայացնել ճիշտ

որոշումներ՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր հիվանդի նախընտրությունները/առանձնահատկությունները:

Բովանդակություն

1. Նախաբան
2. Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն
3. Ուղեցույց
 - 3.1 Տարածվածություն, էթիոլոգիա, ռեցիդիվի ռիսկեր
 - 3.1.1 Ներածություն
 - 3.1.2 Քարերի բաղադրություն
 - 3.1.3 Քարառաջացման համար ռիսկի խմբեր
 - 3.2 Քարերի դասակարգում
 - 3.2.1 Քարերի չափերը
 - 3.2.2 Քարերի տեղակայումը
 - 3.2.3 Քարերի ռենտգեն բնութագրերը
 - 3.3 Ախտորոշիչ հետազոտություններ
 - 3.3.1 Ախտորոշիչ վիզուալիզացիա
 - 3.3.1.1 Սուր գոտկային ցավով/միզածորանի քարի կասկածով հիվանդների հետազոտումը
 - 3.3.1.2 Ռադիոլոգիական հետազոտությունը միզաքարային հիվանդության ժամանակ
 - 3.3.2 Մետաբոլիզմի հետ կապված հետազոտություններ
 - 3.3.2.1 Հիմնական լաբորատոր հետազոտություններ – ուրոլիթիազով պլանային (ոչ անհետաձգելի) հիվանդներ
 - 3.3.2.2 Քարի բաղադրության որոշում
 - 3.3.3 Ախտորոշումը հատուկ խմբերի և վիճակների դեպքում

- 3.3.3.1 Ախտորոշիչ վիզուալիզացիան հղիության ընթացքում
- 3.3.3.2 Երեխաներ
 - 3.3.3.2.1 Ախտորոշիչ վիզուալիզացիա
 - 3.3.3.2.2 Ուլտրաձայնային հետազոտություն
 - 3.3.3.2.3 Միզուղիների շրջադիտակային ռենտգենոգրաֆիա
 - 3.3.3.2.4 Ներերակային ուրոգրաֆիա (ՆԵՈւ)
 - 3.3.3.2.5 Սպիրալային կոմպյուտերային տոմոգրաֆիա (ԿՏ)
 - 3.3.3.2.6 Մագնիսառեզոնանսային ուրոգրաֆիա (ՄՌՈւ)
- 3.4 Միզաքարային հիվանդության մենեջմենտ (վարում)
 - 3.4.1 Երիկամային կամ միզաձորանային քար ունեցող հիվանդի մենեջմենտ
 - 3.4.1.1 Երիկամային խիթ
 - 3.4.1.2 Սեպսիսի և/կամ անուրիայի մենեջմենտը խցանող քարի դեպքում
 - 3.4.1.3 Ընդհանուր խորհուրդներ և նախազգուշացումներ քարերի հեռացման համար
 - 3.4.1.3.1 Հակաբակտերիալ թերապիա
 - 3.4.1.3.2 Հակաթրոմբային թերապիա և քարի բուժում
 - 3.4.1.3.3 Ճարպակալում
 - 3.4.1.3.4 Քարի բաղադրություն
 - 3.4.1.3.5 Քարային արահետ (Steinstrasse)
 - 3.4.2 Միզաքարային հիվանդության մենեջմենտի առանձնահատկությունները
 - 3.4.2.1 Բուժման ձևերը
 - 3.4.2.1.1 Կոնսերվատիվ բուժում /հսկողություն
 - 3.4.2.1.2 Դեղորայքային բուժում
 - 3.4.2.1.2.1 Պերկուտան (միջմաշկային) իրիգացիոն քիմիոլիզ (խեմոլիզ)
 - 3.4.2.1.2.2 Օրալ քիմիոլիզ
 - 3.4.2.1.3 Էքստրակորպորալ հարվածաալիքային քարափշրում (լիթոտրիպսիա) (ՀԱՔ)
 - 3.4.2.1.3.1 ՀԱՔ-ի հակացուցումներ
 - 3.4.2.1.3.2 Լավագույն կլինիկական փորձ
 - 3.4.2.1.3.3 ՀԱՔ-ի բարդություններ

- 3.4.2.1.4 Երիկամների քարերի հեռացման էնդուրոլոգիական մեթոդներ
 - 3.4.2.1.4.1 Պերկուտան նեֆրոլիտոտոմիա (ՊՆԼ)
 - 3.4.2.1.4.1.1 Հակացուցումներ
 - 3.4.2.1.4.1.2 Լավագույն կլինիկական փորձ
 - 3.4.2.1.4.1.3 Բարդություններ
 - 3.4.2.1.4.2 Ուրետերոռենոսկոպիան երիկամների քարերի համար (RIRS)
 - 3.4.2.1.4.3 Բաց և լապարասկոպիկ վիրաբուժություն երիկամների քարերի հեռացման համար
- 3.4.2.2 Երիկամների քարերի ակտիվ հեռացման ցուցումներ
- 3.4.2.3 Երիկամների քարերի ակտիվ հեռացման եղանակի ընտրություն
 - 3.4.2.3.1 Երիկամի ավազանի կամ վերին/միջին բաժակների քարեր
 - 3.4.2.3.2 Երիկամի ստորին բևեռի քարեր
 - 3.4.2.3.3 Երիկամի քարերի ակտիվ հեռացման եղանակի ընտրության վերաբերյալ խորհուրդ
- 3.4.3 Միզածորանային քարերի ժամանակ մենեջմենտի առանձնահատկությունները
 - 3.4.3.1 Բուժման ձևեր
 - 3.4.3.1.1 Կոնսերվատիվ բուժում/հսկողություն
 - 3.4.3.1.2 Դեղորայքային բուժում, դեղորայքային քարահեռացնող (էքսպուլսիվ) բուժում (ԴՔԲ)
 - 3.4.3.1.2.1 Դեղորայքային քարահեռացնող բուժումը էքստրակորպորալ հարվածաալիքային լիտոտրիպսիայից հետո
 - 3.4.3.1.2.2 Դեղորայքային քարահեռացնող բուժումը ուրետերոսկոպիայից հետո
 - 3.4.3.1.2.3 Դեղորայքային քարահեռացնող բուժումը և միզածորանային ստենտերը (նայել 3.4.3.1.4.1.2)
 - 3.4.3.1.2.4 Դեղորայքային քարահեռացնող բուժման տևողությունը
 - 3.4.3.1.3 ՀԱՔ
 - 3.4.3.1.4 Էնդուրոլոգիական մեթոդներ
 - 3.4.3.1.4.1 Ուրետերոսկոպիա (ՈՒՌՍ)

3.4.3.1.4.1.1 Հակացուցումներ

3.4.3.1.4.1.2 Լավագույն կլինիկական փորձը ուրետերոռենոսկոպիայի համար

3.4.3.1.4.1.3 Բարդություններ

3.4.3.1.4.2 Պերկուտան անտեգրադ ուրետերոսկոպիա

3.4.3.1.5 Միզածորանային քարերի լապարասկոպիկ հեռացում

3.4.3.2 Միզածորանային քարերի ակտիվ հեռացման ցուցումները

3.4.3.2.5.1 Արյան մակարդեղիության խանգարում

3.4.3.3 Միզածորանային քարերի ակտիվ հեռացման եղանակի ընտրությունը

3.4.4 Ռեզիդուալ (մնացորդային) քարերով հիվանդների մենեջմենտը

3.4.4.1 Բուժում

3.4.5 Հատուկ խմբերի հիվանդների մենեջմենտը

3.4.5.1 Հղիության ընթացքում միզաքարային հիվանդության և դրա հետ կապված խնդիրների մենեջմենտը

3.4.5.2 Որևէ եղանակով մեզի արտաբերմամբ (դերիվացիայով) հիվանդների քարերի մենեջմենտը

3.4.5.2.1 Էթիոլոգիա

3.4.5.2.2 Մենեջմենտ

3.4.5.2.3 Կանխարգելում

3.4.5.3 Նեյրոգեն միզապարկով հիվանդների մոտ միզաքարային հիվանդության մենեջմենտը

3.4.5.3.1 Էթիոլոգիա, կլինիկական պատկեր և ախտորոշում

3.4.5.3.2 Մենեջմենտ

3.4.5.4 Փոխապատվաստված երիկամների քարերի մենեջմենտ

3.4.5.4.1 Էթիոլոգիա

3.4.5.4.2 Մենեջմենտ

3.4.5.4.3 Քարերի հեռացման առանձնահատկությունները

3.4.6 Երեխաների մոտ ուրոլիթիազի մենեջմենտը

3.4.6.1 Քարերի հեռացում

3.4.6.1.1 Դեղորայքային քարահեռացնող բուժումը երեխաների մոտ

3.4.6.1.2 Էքստրակորպորալ հարվածաալիքային լիտոտրիպսիա

3.4.6.1.3 Էնդոուրոլոգիական մեթոդներ

3.4.6.1.3.1 Պերկուտան նեֆրոլիտոտրիպսիա (ՊՆԼ)

3.4.6.1.3.2 Ուրետերոսկոպիա

3.4.6.1.3.3 Բաց կամ լապարասկոպիկ վիրաբուժություն

3.4.6.1.3.4 Հատուկ նկատառումներ ռեցիդիվների կանխարգելման համար

4. Հսկողություն. Նյութափոխանակության հետազոտում և ռեցիդիվի կանխարգելում

4.1 Ընդհանուր նյութափոխանակային նկատառումներ հիվանդների կլինիկական հետազոտման համար

4.1.1 Հիվանդի ռիսկի գնահատում

4.1.2 Մեզի նմուշառում

4.1.3 Սպեցիֆիկ նյութափոխանակային հետազոտության ժամանակահատված

4.1.4 Լաբորատոր արժեքների միջակայք

4.1.5 Ռիսկի ցուցանիշներ և լրացուցիչ ախտորոշիչ գործիքներ

4.2 Ընդհանուր նկատառումներ ռեցիդիվի կանխարգելման համար

4.2.1 Հեղուկի ընդունում

4.2.2 Սննդակարգ

4.2.3 Կենսակերպ

4.2.4 Խորհուրդ ռեցիդիվի կանխարգելման համար

4.3 Քարին բնորոշ նյութափոխանակային հետազոտություն և ռեցիդիվի դեղորայքային կանխարգելում

4.3.1 Ներածություն

4.4 Կալցիումի օքսալատային քարեր

4.4.1 Ախտորոշում

4.4.2 Պատճառների և հետևանքների մեկնաբանում

4.4.3 Հատուկ բուժում

4.4.4 Խորհուրդներ մեզի բաղադրության հատուկ խանգարումներով հիվանդների դեղորայքային բուժման համար

4.5 Կալցիումի ֆոսֆատային քարեր

- 4.5.1 Ախտորոշում
- 4.5.2 Պատճառների և հետևանքների մեկնաբանում
- 4.5.3 Դեղորայքային բուժում
- 4.5.4 Խորհուրդ կալցիումի ֆոսֆատային քարերի բուժման համար
- 4.6 Կալցիումական քարերի հետ կապված խանգարումներ և հիվանդություններ
- 4.6.1 Հիպերպարաթիրոիդիզմ
- 4.6.2 Գրանուլեմատոզ հիվանդություններ
- 4.6.3 Առաջնային հիպերօքսալուրիա
- 4.6.4 Աղիքային հիպերօքսալուրիա
- 4.6.5 Երկկամա-խողովակային ացիդոզ
- 4.6.6 Նեֆրոկալցինոզ
 - 4.6.6.1 Ախտորոշում
- 4.7 Միզաթթվային և ամոնիումի ուրատային քարեր
- 4.7.1 Ախտորոշում
- 4.7.2 Հետևանքների մեկնաբանում
- 4.7.3 Հատուկ բուժում
- 4.8 Ստրումիտային և ինֆեկցիոն քարեր
- 4.8.1 Ախտորոշում
- 4.8.2 Բնորոշ սպեցիֆիկ բուժում
- 4.8.3 Խորհուրդ ինֆեկցիոն քարերի բուժական միջոցառումների համար
- 4.9 Ցիստինային քարեր
- 4.9.1 Ախտորոշում
- 4.9.2 Հատուկ բուժում
 - 4.9.2.1 Ցիստինային քարերի դեղորայքային բուժում
- 4.9.3 Խորհուրդ ցիստինային քարերի բուժման համար
- 4.10 2,8-դիհիդրօքսիադենինային և քսանտինային քարեր
- 4.10.1 2,8-դիհիդրօքսիադենինային քարեր
- 4.10.2 Քսանտինային քարեր
- 4.10.3 Հեղուկի ընդունում և սննդակարգ
- 4.11 Դեղորայքային քարեր

4.12 Մատրիքային (կադապարային) քարեր

4.13 Անհայտ բաղադրության քարեր

Հապավումներ

ԱՄ՝ ապացուցման մակարդակ

ԽԱ՝ խորհրդատվության աստիճան

ԵՈՒԱ՝ Եվրոպական ուրոլոգիական ասոցիացիա

ՈՒՌՍ /URS/՝ ուրետերոռենոսկոպիա

ՀԱՔ՝ հարվածաալիքային քարափշրում

ՄՔՀ՝ միզաքարային հիվանդություն

ԴՔԲ՝ դեղորայքային քարահեռացնող բուժում

ԱՀԿՇ՝ առանց կոնտրաստավորման համակարգչային շերտագրություն

ՈՒՁՀ՝ ուլտրաձայնային հետազոտություն

ՄՇՌ՝ միզուղիների շրջադիտակային ռենտգենոգրաֆիա

ՆԵՈՒ՝ ներերակային ուրոգրաֆիա

ՄՈՒԻ՝ միզուղիների ինֆեկցիա

ՊՆԼ /PNL/՝ պերկուտան նեֆրոլիտոտոմիա

SFR՝ քարից ազատման ցուցանիշ

RTA՝ երիկամա-խողովակային ացիդոզ

RIRS՝ ռետրոգրադ ներերիկամային վիրահատություն

18 Նախաբան

Միզաքարային հիվանդությունը հայտնի է եղել և նկարագրվել է հնագույն ժամանակներից: Ներկայումս, նույնպես, այն մնում է միզասեռական համակարգի ամենատարածված հիվանդություններից մեկը՝ գրավելով երրորդ տեղն ըստ հանդիպման հաճախականության: Յուրաքանչյուր տարի աշխարհում 1000 բնակչից 1-ը ՄՔՀ կապակցությամբ ստանում է հիվանդանոցային բուժօգնություն: Միզուղիների քարերի հայտնաբերման հաճախականությունը տատանվում է 1%-ից մինչև 15%: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում դիտվում է միզաքարային հիվանդության հիվանդացության բարձրացման միտում ոչ միայն երիտասարդ տարիքի, այլ նաև տարեց անձանց մոտ: Միզաքարային հիվանդության բազմապատճառային բնույթը և արմատական բուժման բացակայությունը վկայում են տվյալ խնդրի հրատապության մասին: Մինչդեռ Հայաստանում ՄՔՀ-ի հիվանդացության և տարածվածության վերաբերյալ լայնածավալ համաճարակաբանական հետազոտություններ չեն անցկացվել:

Հայկական ուրոլոգիական ասոցիացիայի մասնագետները պատրաստել են միզաքարային հիվանդության այց ուղեցույցը, որպեսզի օգնեն ուրոլոգներին, հիմնվելով ապացուցողական բժշկության տվյալների վրա, վարել միզաքարային հիվանդությունը և կիրառել դրանք կլինիկական պրակտիկայում: Ուղեցույցն ընդգրկում է հիվանդության այն հիմնական ասպեկտները, որոնք դեռևս բարձր հիվանդացության պատճառ են հանդիսանում, չնայած տեխնոլոգիայի և գիտության զարգացմանը:

Հարկ է նշել, որ կլինիկական ուղեցույցում ներկայացվել են ամենահավաստի տվյալները, որոնք հասանելի էին մասնագետներին: Սակայն, ուղեցույցի խորհուրդներին ուղղակի հետևելը միշտ չէ, որ բերում է լավագույն արդյունքի: Ուղեցույցները երբեք չեն կարող փոխարինել կլինիկական փորձին, և յուրաքանչյուր հիվանդի համար անհրաժեշտ է ցուցաբերել բուժման անհատական մոտեցում: Այնուամենայնիվ, օգնում են բժշկին կայացնել ճիշտ որոշումներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հիվանդի նախընտրությունները/առանձնահատկությունները:

2. Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Հայկական ուրոլոգիական ասոցիացիայի և մասնավորապես "Իզմիրյան" Բ/Կ-ի ուրոլոգների կողմից: Փաստաթղթի հիմքն է հանդիսացել Եվրոպական Ուրոլոգիական ասոցիացիայի 2016թ միզաքարային հիվանդության ուղեցույցը (EAU Guidelines on Urolithiasis – 2016), ինչպես նաև Medline, EMBASE և Cochrane աղանց շտեմարանների տվյալները: Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունը ընդգրկել է բանալի բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում: Որոնման ժամանակային շրջանակն է՝ 2010 – 2017թթ.: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն, պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում, ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն, ապացույցների ուժի և որակի գնահատականներ և այլ), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու:

Տեղեկատվության որակը գնահատելիս սկզբնաղբյուր հանդիսացող ուղեցույցում օգտագործվել է Օքսֆորդի ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգումը: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողն ու աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Հայկական Ուրոլոգիական ասոցիացիայի անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցը նախատեսված է ուրոլոգների, ընդհանուր պրակտիկայի բժիշկների, նեֆրոլոգների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական վերանայման և թարմացումների՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

3. Ուղեցույց

3.1 Տարածվածություն, ծագումնաբանություն, ռեցիդիվի ռիսկեր

3.1.1 Ներածություն

Միզաքարային հիվանդության տարածվածությունը կախված է աշխարհագրական, կլիմայական, էթնիկական, գենետիկական և սննդային գործոններից: Հիվանդության ռեցիդիվի ռիսկը հիմնականում պայմանավորված է այն հիվանդությամբ կամ խանգարումով, որը բերել է քարառաջացմանը: Այսպիսով, միզաքարային հիվանդության տարածվածությունը տատանվում է 1-20% սահմաններում: Կյանքի բարձր կենսամակարդակ ունեցող երկրներում, ինչպես օրինակ Շվեդիայում, Կանադայում կամ ԱՄՆ-ում, միզաքարային հիվանդության տարածվածությունն առավել բարձր է (մեծ 10%-ից): Վերջին 20 տարվա ընթացքում դիտվել է հաճախականության աճ մինչև 37% (աղյուսակ 3.1.1):

Աղյուսակ 3.1.1 Միզաքարային հիվանդության տարածվածությունն ու հաճախականությունը Եվրոպական երկու երկրներում

	Գերմանիա 2000 (%)	Իսպանիա 2007 (%)
Տարածվածություն	4.7	5.06
Կանայք	4.0	Տվյալ չկա
Տղամարդիկ	5.5	Տվյալ չկա
Հաճախականություն	1.47	0.73
Կանայք	0.63	Տվյալ չկա
Տղամարդիկ	0.84	Տվյալ չկա

Քարերն ըստ առաջացման պատճառի դասակարգվում են. ինֆեկցիոն կամ ոչ ինֆեկցիոն պատճառներից, գենետիկական խանգարումներից և դեղորայքի կողմնակի ազդեցություններից (դեղորայքային քարեր) (աղյուսակ 3.1.2):

Աղյուսակ 3.1.2: Քարերի դասակարգումը ըստ էթիոլոգիայի*

Ոչ ինֆեկցիոն քարեր
• Կալցիումի օքսալատային
• Կալցիումի ֆոսֆատային
• Միզաթթվային
Ինֆեկցիոն քարեր
• Մագնեզիումի և ամոնիումի ֆոսֆատային
• Կարբոնատ ապատիտային
• Ամոնիումի ուրատային
Գենետիկական պատճառներ
• Ֆիստինային
• Քսանտինային
• 2.8- դիհիդրօքսիադենինային
Դեղորայքային քարեր

*Տես 4.4.2 ենթաբաժին

3.1.2 Քարի բաղադրությունը

Քարի բաղադրությունը հետագա ախտորոշման և բուժման մենեջմենտի հիմքն է հանդիսանում: Քարերը հաճախ ձևավորվում են մի քանի բաղադրիչներից: 3.1.3 աղյուսակում թվարկված են կլինիկորեն հաճախ հանդիպող բաղադրիչները և դրանց հանքային կոմպոնենտները:

Աղյուսակ 3.1.3 Քարի բաղադրությունը

Քիմիական անվանումը	Հանքային նյութի անունը	Քիմիական բանաձևը
Կալցիումի օքսալատի մոնոհիդրատ	Վեվելլիտ	$\text{CaC}_2\text{O}_4 \cdot \text{H}_2\text{O}$
Կալցիումի օքսալատի դիհիդրատ	Վեդելլիտ	$\text{CaC}_2\text{O}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$
Հիմնային կալցիումի ֆոսֆատ	Ապատիտ	$\text{Ca}_{10}(\text{PO}_4)_6 \cdot (\text{OH})_2$
Կալցիումի հիդրօքսիլ ֆոսֆատ	Կարբոնատային ապատիտ	$\text{Ca}_5(\text{PO}_3)_3 \cdot (\text{OH})$
b - եռկալցիումական ֆոսֆատ	Վիտլոկիտ	$\text{Ca}_3(\text{PO}_4)_2$
Կարբոնատ ապատիտ ֆոսֆատ	Դալլիտ	$\text{Ca}_5(\text{PO}_4)_3\text{OH}$

Կալցիումի հիդրոգեն ֆոսֆատ	Բրուշիտ	$\text{PO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$
Կալցիումի կարբոնատ	Արագոնիտ	CaCO_3
Օքտակալցիումի ֆոսֆատ		$\text{Ca}_8\text{H}_2(\text{PO}_4)_6 \cdot 5\text{H}_2\text{O}$
Միզաթթու	Ուրիցիտ	$\text{C}_5\text{H}_4\text{N}_4\text{O}_3$
Միզաթթվի դիհիդրատ	Ուրիցիտ	$\text{C}_5\text{H}_4\text{O}_3 \cdot 2\text{H}_2\text{O}$
Ամոնիումի ուրատ		$\text{NH}_4\text{C}_5\text{H}_3\text{N}_4\text{O}_3$
Միզաթթվի նատրիումական մոնոհիդրատ		$\text{NaC}_5\text{H}_3\text{N}_4\text{O}_3 \cdot \text{H}_2\text{O}$
Մագնեզիումի ամոնիումային ֆոսֆատ	Ստրովիտ	$\text{MgNH}_4\text{PO}_4 \cdot 6\text{H}_2\text{O}$
Մագնեզիումի ֆոսֆորաթթվային եռհիդրատ		$\text{MgHPO}_4 \cdot 3\text{H}_2\text{O}$
Մագնեզիում-ամոնիում- ֆոսֆատային մոնոհիդրատ	Դիտմարիտ	$\text{MgNH}_4(\text{PO}_4) \cdot 1\text{H}_2\text{O}$
Ցիստին		$[\text{SCH}_2\text{CH}(\text{NH}_2)\text{CO}$ $\text{OH}]_2$
Գիպս	Կալցիումի սուլֆատի դիհիդրատ Ցինկի ֆոսֆատի	$\text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$ $\text{Zn}_3(\text{PO}_4)_2 \cdot 4\text{H}_2\text{O}$

	տետրահիդրատ	
Քսանտին		
2,8- Դիհիդրօքսիադենին		
Սպիտակուցներ		
Խոլեստերոլ		
Կալցիտ		
Կալիումի ուրատ		
Եռմագնեզիումի ֆոսֆատ		
Մելամին		
Մատրիքս		
Դեղորայքային քարեր	●Ակտիվ միացություններ, որոնք բյուրեղացվում են մեզում	
	●Բաղադրամասեր, որոնք բացասաբար են ազդում մեզի բաղադրության վրա (բաժին 4.11)	
Քարեր օտար մարմինների վրա		

3.1.3 Քարագոյացման ռիսկի խմբերը

Քարագոյացման ռիսկային կարգավիճակի գնահատումը հատուկ նշանակություն ունի, քանի որ նրանով որոշվում է ռեցիդիվի և քարի կրկնակի աճի հավանականությունը, և այն պարտադիր է դեղորայքային բուժման իրականացման համար:

Հիվանդների 50%-ի մոտ կյանքի ընթացքում լինում է միայն մեկ ռեցիդիվ: Քարի ռեցիդիվի բարձր հավանականություն ունեն հիվանդների քանակի 10%-ից քիչ ավելը: Քարի տիպը և հիվանդության ծանրությունը կանխորոշում են ռեցիդիվի բարձր կամ ցածր հավանականությունը:

Աղյուսակ 3.1.4. Քարագոյացման բարձր ռիսկ [15-25]

Ընդհանուր գործոններ
Միզաքարային հիվանդության առաջացումը վաղ հասակում (հատկապես երեխաների և դեռահասների մոտ)
Միզաքարային հիվանդության ընտանեկան անամնեզը
Բրուշիտ պարունակող քարեր
Միզաթթու և ուրատ պարունակող քարեր
Ինֆեկցիոն քարեր
Միակ երիկամ (միակ երիկամը ինքնին չի հանդիսանում կրկնակի քարագոյացման ռիսկի գործոն, սակայն այդ դեպքում մեծ նշանակություն ունի հնարավոր ռեցիդիվի

կանխարգելումը)
Հիվանդություններ, որոնք կապված են միզաքարային հիվանդության հետ
Հիպերպարաթիրեոիդիզմ
Մետաբոլիկ համախտանիշ
Նեֆրոկալցինոզ
Երիկամների պոլիկիստոզ հիվանդություն
Ստամոքս-աղիքային ուղու հիվանդություններ (օրինակ՝ աղիճ աղի-զստաղիքային շրջանցող բերանակցում, աղիքի ռեզեկցիա, Կրոնի հիվանդություն, մալաբսորբցիոն վիճակներ, մեզի դերիվացիայից հետո աղիքային հիպերօքսալուրիա) և բարիատրիկ վիրաբուժություն
Սարկոիդոզ
Ողնաշարի վնասվածքներ, նեյրոգեն միզապարկ
Գենետիկական պատճառներ
Ցիստինուրիա (A, B և AB տիպեր)
Առաջնային հիպերօքսալուրիա (ԱՀ)
Երիկամա-խողովակիկային ացիդոզ (ԵԽԱ) տիպ I
2,8-Դիհիդրօքսիադենինուրիա
Քսանտինուրիա
Լեշ-Նիհենի համախտանիշ
Մուկովիսցիդոզ
Քարագոյացմանը նպաստող դեղամիջոցներ

Քարագոյացմանը նպաստող անատոմիական արատներ
Մեդուլյար սպունգանման երիկամ (Խողովակիկային էկտազիա)
Ավազան-միզածորանային սեգմենտի (ԱՄՍ) նեղացում
Բաժակների դիվերտիկուլ, բաժակների կիստաներ
Միզածորանի նեղացումներ
Միզապարկ-միզածորանային հետիոսք
Պայտածև երիկամ
Ուրերթերոցելե

3.2 Քարերի դասակարգումը

Միզային քարերը դասակարգվում են ըստ չափերի, տեղակայման, ռենտգեն բնութագրի, առաջացման էթիոլոգիայի, բաղադրության և ռեցիդիվի ռիսկի:

3.2.1 Քարի չափը

Քարերը հիմնականում չափվում են մեկ կամ երկու հարթություններում և ըստ չափի դասակարգվում են՝ մինչև 5, 5-10, 10-20 և > 20 մմ առավելագույն տրամագծով:

3.2.2 Քարի տեղակայումը

Քարերը կարող են դասակարգվել ըստ անատոմիական դիրքի՝ երիկամի վերին, միջին և ստորին բաժակների, երիկամի ավազանի, միզածորանի վերին,

միջին, ստորին հատվածների և միզապարկի քարեր: Միզապարկի քարերի բուժումը այստեղ չի քննարկվում:

3.2.3 Ռենտգեն բնութագիր

Քարերը կարող են դասակարգվել ըստ ռենտգեն տեսքի (միզուղիների շրջադիտակային ռենտգենոգրաֆիա) (Աղյուսակ 3.2.1), որը, հանքանյութերի պարունակությունից կախված, կարող է տարբեր լինել: Առանց կոնտրաստավորման համակարգչային շերտագրությունը (ԱԿՀՇ) կարող է կիրառվել քարերի, ըստ խտության, ներքին կառուցվածքի և բաղադրության, դասակարգման համար, ինչն իր հերթին կիրառվում է բուժման ժամանակ:

Աղյուսակ 3.2.1 Ռենտգեն բնութագիր

Ռենտգեն-պոզիտիվ	Թույլ ռենտգեն-պոզիտիվ	Ռենտգեն-նեգատիվ
Կալցիումի օքսալատի դիհիդրատ	Մագնեզիում ամոնիում ֆոսֆատ	Միզաթթու
Կալցիումի օքսալատի մոնոհիդրատ	Ապատիտ	Ամոնիումի ուրատ
Կալցիումի ֆոսֆատներ	Ցիստին	Քսանտին

		2,8-Դիհիդրօքսիադենին
		Դեղորայքային քարեր (4.11 բաժին)

Քարերի դասակարգումը ըստ էթիոլոգիայի, բաղադրության և ռեցիդիվի ռիսկի քննարկվում են 3.1 բաժնում:

3.3 Ախտորոշիչ հետազոտություններ

3.3.1 Ախտորոշիչ վիզուալիզացնող հետազոտություններ

Համապատասխան վիզուալիզացնող մեթոդի ընտրությունը, որը կարող է տարբեր լինել միզածորանի կամ երիկամի քարերի դեպքում, պայմանավորված է կլինիկական վիճակով:

Ստանդարտ հետազոտումը ներառում է հիվանդության պատմության մանրակրկիտ ուսումնասիրումը և ֆիզիկալ հետազոտումը: Միզածորանի քարով հիվանդի մոտ սովորաբար առկա է բնորոշ գոտկային ցավ, սրտխառնոց և երբեմն տենդ, բայց կարող է նաև լինել անախտանիշ [29]:

Ուլտրաձայնային հետազոտությունը (ՈՒՁՀ) պետք է կիրառվի որպես առաջնային վիզուալիզացնող ախտորոշիչ մեթոդ: Ցավերի թուլացումը կամ ցանկացած այլ անհետաձգելի իրավիճակ չպետք է պատճառ հանդիսանան վիզուալիզացիայի հետաձգման: ՈՒՁՀ-ը հանդիսանում է անվտանգ (չկա ճառագայթման վտանգ), բազմակի կիրառելի և ոչ թանկարժեք վիզուալիզացման մեթոդ: Այն կարող է տարբերակել բաժակների, ավազանի, ավազան-միզածորանային և միզապարկ-միզածորանային (ՈՒՁՀ լիքը միզապարկով) սեգմենտների քարերը, ինչպես նաև վերին միզուղիների լայնացման առկայությունը:

ՈԻՁՀ-ն ունի 45% զգայունություն և 94% սպեցիֆիկություն միզածորանի քարերի և 45% զգայունություն և 88% սպեցիֆիկություն երիկամի քարերի համար [30][31]:

Միզուղիների շրջադիտակային ռենտգենոգրաֆիայի (ՄՇՌ) զգայունությունը և սպեցիֆիկությունը կազմում են համապատասխանաբար 44-77% և 80-87% [32]: ՄՇՌ անհրաժեշտ է կատարել, եթե պլանավորվում է առանց կոնտրաստավորման համակարգչային շերտագրություն (ԱԿՀՇ)[33], սակայն այն (ՄՇՌ) օգնում է քարի ռենտգեն պոզիտիվ կամ նեգատիվ լինելը պարզելու և հետագա հսկողության ընթացքում համեմատություններ կատարելու համար:

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Անհետաձգելի վիզուալիզացնող հետազոտություն ցուցված է կատարել բարձր ջերմության, կամ միակ երիկամի, և կասկածելի ախտորոշման դեպքերում:	4	Ա

3.3.1.1 Գոտկային շրջանի սուր ցավով/ միզածորանի քարի կասկածով հիվանդների հետազոտումը

Առանց կոնտրաստավորման համակարգչային շերտագրությունը դարձել է գոտկային շրջանի սուր ցավի հետազոտման ստանդարտ մեթոդ և փոխարինում է ներերակային ուրոգրաֆիային (ՆԵՈԻ): Ոչ կոնտրաստային համակարգչային շերտագրությունը կարող է որոշել քարի տրամաչափը և խտությունը: Քարի բացակայության դեպքում անհրաժեշտ է կատարել այլ հետազոտություններ՝ պարզելու համար որովայնային ցավի պատճառը: Ուրոլիթիազի սրացման

կասկածով հիվանդների հետազոտման համար ՈԿՀ-ն ավելի ճշգրիտ է, քան ն/ե պիելոգրաֆիան [34]:

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Նախնական ՈԻՁՀ-ից հետո, գոտկային շրջանի սուր ցավով հիվանդների քարի ախտորոշումը հստակեցնելու համար օգտագործեք ԱԿՀՇ, քանի որ այն ավելի բարձրակարգ հետազոտման մեթոդ է, քան ՆԵՈԻ-ն:	1a	A

ՆԵՈԻ- ներերակային ուրոգրաֆիա. ԱԿՀՇ-առանց կոնտրաստավորման համակարգչային շերտագրություն. ՈԻՁՀ- ուլտրաձայնային հետազոտություն

Առանց կոնտրաստավորման համակարգչային շերտագրությունը կարող է հայտնաբերել միզաթվային և քսանտինային քարերը, որոնք համարվում են ռենտգեն նեգատիվ: Սակայն ԱԿՀՇ-ով չեն հայտնաբերվում ինդինավիրային քարերը [35]: ԱԿՀՇ-ը թույլ է տալիս որոշել քարի խտությունը, ներքին կառուցվածքը, քար-մաշկ հեռավորությունը, քարը շրջապատող անատոմիան, որոնցից յուրաքանչյուրն ազդում է բուժման մեթոդի ընտրության վրա [28, 36-38]: ԱԿՀՇ-ի առավելությունների հետ մեկտեղ, պետք է նաև հաշվի առնել, որ այն թույլ չի տալիս գնահատել երիկամների ֆունկցիան, միզային համակարգի անհատական անատոմիական առանձնահատկությունները, ինչպես նաև ուղեկցվում է ճառագայթման բարձր դոզայով (Աղյուսակ 3.1):

Ճառագայթման ռիսկը կարելի է նվազեցնել ցածր-դոզավորմամբ համակարգչային շերտագրության կիրառմամբ [39]: Ինչպես ցույց է տվել Պոլետիի հետազոտությունը, 30-ից ցածր մարմնի զանգվածի ինդեքսով (ՄՁԻ) հիվանդների մոտ ցածր դոզավորմամբ համակարգչային շերտագրության զգայունությունը

միզաձորանի 3 մմ-ից փոքր քարերի ախտորոշման համար կազմում է 86%, իսկ 3 մմ-ից մեծ քարերի համար՝ 100% [40]: Նիեմանի կողմից կատարված պրոսպեկտիվ հետազոտությունների մետաանալիզի արդյունքում միզաքարային հիվանդության ախտորոշման համար ցածր դոզավորմամբ ՀՇ-ի զգայունությունը կազմում է 96,6% (95% CI: 95,0-97,8) սպեցիֆիկությունը՝ 94,9% (95% CI: 92,0-97,0):

Աղյուսակ 3.3.1 Ճառագայթման դոզան վիզուալիզացնող հետազոտությունների ժամանակ [42-45]

Մեթոդ	Ճառագայթում (mSv)
Միզուղիների շրջադիտակային քնոգրաֆիա	0,5-1
ՆԵՈՒ	1,3-3,5
Սովորական դոզավորմամբ ԱԿՀՇ	4,5-5
Ցածր դոզավորմամբ ԱԿՀՇ	0,97-1,9
Կոնտրաստավորումով ՀՇ	25-35

3.3.1.2 Երիկամի քարերով հիվանդների ճառագայթային հետազոտումը

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Կատարել կոնտրաստավորումով հետազոտություն, եթե պլանավորվում է քարի հեռացում և, եթե անհրաժեշտ է գնահատել երիկամի հավաքող համակարգի անատոմիան:	3	A
Կիրառել կոնտրաստավորումով ՀՇ-ը բարդ դեպքերում, քանի որ այն հնարավորություն է տալիս հավաքող համակարգի 3D վերակառուցման, ինչպես նաև քարի խտության և քար-մաշկ	2a	C

հեռավորության չափման: ՆԵՈՒ-ն նույնպես կարող է կիրառվել:		
---	--	--

ՀՀ- Համակարգչային շերտագրություն. ՆԵՈՒ- Ներերակային ուրոգրաֆիա

3.3.2 Լաբորատոր հետազոտություններ

Միզաքարային հիվանդության սուր դրսևորումներով հիվանդներին, վիզուալիզացնող հետազոտությունների հետ համատեղ անհրաժեշտ է նշանակել արյան և մեզի կենսաքիմիական նվազագույն հետազոտություններ: Տվյալ փուլում խորհուրդները միանման են ինչպես ցածր, այնպես էլ բարձր ռիսկի խմբի հիվանդների համար:

Աղյուսակ 3.3.2 Խորհուրդներ. ՄՔՀ-ով շտապ օգնության կարիք ունեցող հիվանդների հիմնական լաբորատոր հետազոտությունները

Խորհուրդ	ԽԱ
----------	----

Մեզ

Մեզի նստվածքի հետազոտում դիպստիկ թեստի միջոցով • էրիթրոցիտներ • լեյկոցիտներ • նիտրիտներ • մեզի մոտավոր pH-ը Մեզի միկրոսկոպիա և/կամ ցանքս	A*
---	----

Արյուն

Արյան շիճուկի հետազոտություն • կրեատինին • միզաթթու	A*
---	----

• իոնիզացված կալցիում • նատրիում • կալիում Արյան ընդհանուր հետազոտություն • C-ռեակտիվ սպիտակուց	
Կատարել մակարդեղիության հետազոտում (ՄՆՀ, ԱՄԹԺ), եթե պլանավորված է կամ հավանական է որևէ միջամտություն:	A*

**Խորհրդարկությանը տրվել է ավելի բարձր ԽԱ համաձայն աշխատանքային խմբի համաձայնեցված կարծիքի*

ՄՆՀ- միջազգային նորմալացված հարաբերակցություն. ԱՄԹԺ- ակտիվացված մասնակի թրոմբոպլաստինային ժամանակ

3.3.2.1 ՄՔՀ-ով հիվանդների հիմնական լաբորատոր հետազոտությունները՝ ոչ շտապ դեպքեր

ՄՔՀ-ով բոլոր հիվանդներին նշանակված կենսաքիմիական հետազոտությունների ծավալը նույնն է: Սակայն, եթե որևէ միջամտություն չի պլանավորվում, ապա նատրիումի, կալիումի, C-ռեակտիվ սպիտակուցի և արյան մակարդեղիության ժամանակի հետազոտությունները կարող են չիրացվել:

Առավել յուրահատուկ հետազոտման ծրագիր պետք է անցնեն կրկնակի քարագոյացման բարձր ռիսկով հիվանդները[16]: Քար-սպեցիֆիկ նյութափոխանակային հետազոտությունները քննարկվում են Գլուխ 4-ում:

Ճիշտ ախտորոշելու ամենադյուրին տարբերակը դուրս եկած քարի հետազոտումն է հուսալի անալիտիկ մեթոդի օգնությամբ (Տես՝ 3.2.2): Քարի բաղադրության հիման վրա կարելի է որոշել նյութափոխանակության հնարավոր խանգարումները:

3.3.2.2 Քարի բաղադրության հետազոտություն

Քարի բաղադրության հետազոտությունը պետք է կատարվի բոլոր առաջնային ախտորոշված ՄՔՀ-ով հիվանդներին:

Կլինիկական պրակտիկայում քարի կրկնակի հետազոտության անհրաժեշտություն լինում է հետևյալ դեպքերում՝

- դեղորայքային կանխարգելման ֆոնի վրա առաջացած ռեցիդիվի
- ինվազիվ մեթոդով քարի լրիվ հեռացումից հետո վաղ ռեցիդիվի
- երկարատև քար չունենալուց հետո ուշ ռեցիդիվի դեպքերում[48]

Հիվանդին պետք է տեղեկացնել, որ անհրաժեշտ է մեզը ֆիլտրել՝ ստանալու համար հետազոտության համար անհրաժեշտ կոնկրետներ: Քարի դուրսբերումը և նորմալ երիկամային ֆունկցիայի վերականգնումը անհրաժեշտ է հաստատել համապատասխան հետազոտություններով:

Քարի բաղադրության հետազոտման հուսալի անալիտիկ մեթոդներն են ինֆրակարմիր սպեկտրոսկոպիան (ԻԿՍ) և ռենտգեն ճառագայթների դիֆրակցիան (ՌՃԴ)[49-51]: Համարժեք արդյունք կարող է տալ բևեռացնող միկրոսկոպիան, սակայն միայն համապատասխան փորձ ունեցող կլինիկաներում: Հեղուկ-քիմիական հետազոտությունը ընդհանուր առմամբ համարվում է հնացած[49]:

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Առաջնային ախտորոշված ՄՔՀ-ով հիվանդներին կատարել քարի բաղադրության հետազոտություն հաստատված մեթոդի օգնությամբ (ՌԴ կամ ԻԿՍ)	2	A
Քարի բաղադրության կրկնակի հետազոտություն պետք է կատարել	2	B

• ռեցիդիվի առաջացման դեպքում, չնայած դեղորայքային կանխարգելմանը • քարի ամբողջական հեռացումից հետո վաղ ռեցիդիվի դեպքում • ուշ ռեցիդիվի դեպքերում երկար ժամանակահատված քար չունենալուց հետո, քանի որ քարի բաղադրությունը կարող է փոխվել [47]		
--	--	--

ԻԿՍ - ինֆրակարմիր սպեկտրոսկոպիա. ՌԴ - ռենտգեն դիֆրակցիա

3.3.3 Ախտորոշումը հապուկ խմբերում և պայմաններում

3.3.3.1 Ախտորոշիչ վիզուալիզացիան հղիության ժամանակ

Հղիների մոտ ախտորոշիչ վիզուալիզացնող հետազոտությունները կարող են ասոցացվել տերատոգեն ռիսկերի և չարորակ նորագոյացությունների (պտղի մոտ) զարգացման հետ: Պտղի համար ռիսկը կախված է գեստացիոն հասակից և ճառագայթման աստիճանից: Ռենտգեն հետազոտությունները հղիության առաջին եռամսյակում պետք է կատարվեն միայն այն դեպքում, երբ ակտերնատիվ մյուս մեթոդներով հնարավոր չէ ախտորոշել [52-53]:

ՈւձՀ-ն հանդիսանում է երիկամային խիթի կասկածով հիվանդների հետազոտման վիզուալիզացնող հիմնական մեթոդը (անհրաժեշտության դեպքում փոփոխելով երիկամային դիմադրողականության ինդեքսը և կիրառելով տրանսվագինալ կամ լցված միզապարկով տրանսսաբդոմինալ ՈւձՀ): Պետք է հաշվի առնել, որ հղիության ժամանակ նորմալ ֆիզիոլոգիական փոփոխությունները կարող են նմանակել միզուղիների խցանմանը [54]:

Մագնիսառեզոնանսային շերտագրումը (ՄՌՇ) կարող է կիրառվել որպես երկրորդ ընտրության հետազոտություն՝ պարզելու համար միզուղիների խցանման աստիճանը, և քարերը որպես լցման դեֆեկտ վիզուալիզացնելու համար [55,56]:

Ցածր դոզավորմամբ ՀՇ պրոտոկոլները իջեցնում են ճառագայթման

դոզաները և նեկայումս խորհուրդ են տալիս կիրառել այն որպես ամենավերջին ընտրության տարբերակ [57]:

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Կիրառեք ՈՒՁՀ-ն որպես հղիների ախտորոշիչ վիզուալիզացիայի նախընտրելի հետազոտություն	1a	A*
Հղիների մոտ կիրառեք ՄՌՇ-ն որպես երկրորդ ընտրության հետազոտություն	3	C
Հղիների մոտ կիրառեք ցածր դոզավորմամբ ՀՇ-ն որպես ընտրության ամենավերջին տարբերակ	3	C

**Խորհրդարկությանը տրվել է ավելի բարձր ԽԱ համաձայն աշխատանքային խմբի համաձայնեցված կարծիքի*

ՈՒՁՀ-ուլտրաձայնային հետազոտություն. ՄՌՇ-մագնիսառեզոնանսային շերտագրում. ՀՇ-համակարգչային

շերտագրություն:

3.3.3.2 Երեխաներ

Միզային քարերով երեխաների մոտ ռեցիդիվի ռիսկը բարձր է: Դրանով է պայմանավորված ստանդարտ ախտորոշիչ հետազոտությունների կիրառումը՝ նախատեսված բարձր ռիսկի խմբի հիվանդների համար (Բաժին 3.1.3 և Գլուխ 4):

Ապացույցների ամփոփում	ԱՄ
Երեխաների մոտ քարառաջացմանը նպաստող առավել տարածված ոչ նյութափոխանակային պաթոլոգիաներն են միզապարկ-միզաձորանային	4

հետհոսքը, ավազան-միզաճորանային հատվածի նեղացումը, նեյրոգեն միզապարկը և միզարձակության այլ խանգարումները:	
--	--

Խորհուրդ	ԽԱ
Բոլոր երեխաների մոտ կատարեք ամբողջական նյութափոխանակային հետազոտությունները՝ ելնելով քարի բաղադրությունից:	A
Հավաքեք քարանյութը /քարի կտորներ/ քարի տեսակը պարզելու համար:	A*

**Խորհրդադրվողները տրվել է ավելի բարձր ԽԱ համաձայն աշխատանքային խմբի համաձայնեցված կարծիքի*

3.3.3.2.1 Ախտորոշիչ վիզուալիզացիան

Երեխաների մոտ միզաքարային հիվանդության ախտորոշիչ հետազոտության ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել, որ նրանք կարող են չկատարել ցուցումները, նրանց համար անահրաժեշտ լինի անզգայացման որևէ տարբերակ, և նրանք զգայուն են իոնիզացնող ճառագայթման նկատմամբ [60-62]: Կրկին հետևել ALARA սկզբունքին (խելամիտ հասանելի ցածր մակարդակի սկզբունք):

3.3.3.2.2 Ուլտրաձայնային հետազոտություն

ՌԻՉՀ-ն մանկաբուժության մեջ հանդիսանում է վիզուալիզացման հիմնական մեթոդը [60]: Նրա առավելություններն են հանդիսանում ճառագայթման և անզգայացման անհրաժեշտության բացակայությունը: Վիզուալիզացիան իր մեջ պետք է ներառի ինչպես լցված միզապարկը հարակից դիստալ միզաճորաններով,

այնպես էլ պրոքսիմալ միզածորանները:

Գունային դոպլերոգրաֆիայով ՈՒՁՀ-ն թույլ է տալիս համեմատել միզածորանային արտամզումները և երկու երիկամների աղեղնաձև զարկերակների դիմադրողականության ինդեքսը, ինչի հիման վրա կարելի է պատկերացում կազմել խցանման աստիճանի մասին: Սակայն ՈՒՁՀ-ն չի հայտնաբերում երեխաների քարերի մոտ 40%-ը [66-69] (<Մ.4), և երիկամի ֆունկցիայի մասին տալիս է սահմանափակ տեղեկատվություն:

3.3.3.2.3 Շրջադիտակային նկարներ (ՄՇՌ)

ՄՇՌ-ն թույլ է տալիս հայտնաբերել քարերը և որոշել նրանց ռենգեն բնութագիրը, ինչպես նաև հեշտացնում է հետագա հսկողությունը:

3.3.3.2.4 Ներերակային ուրոգրաֆիա (ՆԵՌԻ)

ՆԵՌԻ-ի ժամանակ ճառագայթման դոզան համեմատելի է միկցիոն ցիստոուրեթրոգրաֆիայի ժամանակ ճառագայթման դոզայի հետ (0.33 մՁվ) [70]: Սակայն կոնտրաստ նյութի ներարկումը համարվում է այս մեթոդի գլխավոր թերությունը:

3.3.3.2.5 Սպիրալային համակարգչային շերտագրություն (<Շ)

Ցածր դոզավորմամբ <Շ թարմեցված ուղեցույցների համաձայն վերջիններս ունեն ճառագայթային դոզավորման ցածր մակարդակ [45][71]:

Սպիրալային հետազոտության կիրառման դեպքում երեխաների մոտ չեն հայտնաբերվում քարերի միայն 5%-ը [57,64,71]: Ժամանակակից գերարագ <Շ սարքավորումների կիրառման դեպքում սեդացիայի կամ անզգայացման կարիք հազվադեպ է լինում:

3.3.3.2.6 Մագնիսառեզոնանսային ուրոգրաֆիա (ՄՌՌԻ)

Մագնիսառեզոնանսային ուրոգրաֆիան չի կարող կիրառվել միզային քարերի հայտնաբերման համար: Սակայն այն տալիս է մանրակրկիտ տեղեկություններ հավաքող համակարգի անատոմիայի, միզածորաններում խցանման կամ նեղացման տեղակայման և երիկամների պարենխիմալի մորֆոլոգիայի մասին:

Խորհուրդ	ԽԱ
Երեխաների մոտ քարի կասկածի դեպքում կիրառեք ՌԻՁՀ-ն որպես վիզուալիզացիայի ընտրության առաջին մեթոդ: Այն պետք է ներառի երիկամները, լիքը միզապարկը և նրանց հարակից միզածորանային հատվածները:	B
Եթե ՌԻՁՀ-ն չի տրամադրում անհրաժեշտ տեղեկություն, ապա կատարեք ՄՇՌ (կամ ցածր դոզավորմամբ ՌԿՀՇ)	B

ՌԻՁՀ-ուլտրաձայնային հետազոտություն. ՌԿՀՇ- ոչ կոնտրաստային համակարգչային շերտագրություն

3.4 Հիվանդության վարումը

3.4.1 Երիկամի կամ միզածորանի քարերով հիվանդների վարումը

Բուժման տակտիկայի ընտրությունը վերին միզուղիներ քարերի դեպքում հիմնված է մի քանի ընդհանուր ասպեկտների վրա՝ քարի բաղադրություն, քարի չափս և ախտանիշներ:

3.4.1.1 Երիկամային խիթ

Ցավազրկում

Ցավազրկումը երիկամային խիթի բուժման առաջին փուլն է [73, 74]:

Ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղամիջոցները (ՈՍՀԴ), ներառյալ մետամիզոլը (դիպիրոնի հոմանիշն է) արդյունավետ են երիկամային խիթով հիվանդների մոտ [75, 76], և ունեն ավելի լավ ցավազրկող արդյունք քան օփիոիդները: ՈՍՀԴ ստացող հիվանդը մոտակա ժամանակահատվածում հետագա ցավազրկման կարիք չի ունենում:

Պետք է հաշվի առնել, որ դիկլոֆենակի և իբուպրոֆենի կիրառումը բարձրացնում է կորոնար խնդիրների ռիսկը: Դիկլոֆենակը հակացուցված է այն հիվանդներին ովքեր ունեն խրոնիկական սրտային անբավարարություն (Նյու Յորքի Առողջապահական Ասոցիացիա դաս II-IV), սրտի իշեմիկ հիվանդություն, պերֆերիկ զարկերակային- և ցերեբրովասկուլյար հիվանդություն: Հիվանդներին ովքեր ունեն սրիտ-անոթային խնդիրներ դիկլոֆենակը պետք է նշանակել երկար կշռադատելուց հետո: Քանի որ ռիսկը բարձրանում է դեղաչափին և կիրառման տևողությանը համարժեք, ապա պետք է կիրառվի ամենացածր դեղաչափը ամենակարճ տևողությամբ [77, 78]:

Եթե նշանակվում է օփիոիդ, ապա ցանկալի է որ դա չլինի պետիդինը, քանի որ օփիոիդները, հատկապես պետիդինը, ՈՍՀԴ-ի հետ համեմատած ավելի հաճախ են առաջացնում փսխումներ և նրանց կիրառումից հետո կարճ ժամանակահատվածում առաջանում է կրկնակի ցավազրկման անհրաժեշտություն:

Հերթական երիկամային խիթի կանխարգելումը

Միզածորանի քարերի հեշտ դուրսբերումը քննարկվում է 3.4.3.1.2 բաժնում:

Միզածորանի քարով հիվանդների մոտ, որի ինքնուրույն դուրսբերման հավանականությունը մեծ է, ՈՍՀԴ հաբերի և մոմիկների (օրինակ՝ նատրիումի դիկլոֆենակ, 100-150մգ/օր, 3-10 օր) կիրառումը կարող է հանել բորբոքումը և նվազեցնել ցավի կրկնման ռիսկը [77, 78]: Չնայած դիկլոֆենակը կարող է ազդել երիկամի ֆունկցիայի վրա արդեն իսկ առկա երիկամային անբավարարության դեպքում, սակայն դիկլոֆենակը չի առաջացնում ֆունկցիայի խանգարում երիկամի

նորմալ ֆունկցիայով հիվանդների մոտ [83] (ՀՄ. 1բ):

Համաձայն կրկնակի կույր ալացերո-վերահսկվող հետազոտությունների արդյունքների երիկամային խիթի կրկնակի նոպաներ ավելի հազվադեպ առաջանում են այն հիվանդների մոտ, ովքեր բուժման առաջին յոթ օրերին ստանում են ՈՍՀԴ (ՈՍՀԴ չստացողների հետ համեմատած): Ալֆա-բլոկատորների ամենօրյա կիրառումը նույնպես բերում է կրկնակի երիկամային խիթի առաջացման ռիսկի նվազեցմանը:

Եթե անզգայացումը հնարավոր չէ ապահովել դեղամիջոցներով, ապա հարկավոր է դրենավորել երիկամը միզածորանի սթենոտավորման կամ միջմաշկային նեֆրոստոմիայի միջոցով, կամ հեռացնել քարը:

Խորհուրդ	ԽԱ
Անհրաժեշտ է անհապաղ թուլացնել ցավը երիկամային խիթի ժամանակ	A
Ցանկացած դեպքում, եթե դա հնարավոր է, որպես առաջին ընտրության դեղամիջոց պետք է առաջարկել ՈՍՀԴ, օրինակ՝ մետամիզոլ (դիպիրոն): Որպես այլընտրանքային միջոց, սիրտ-անոթային ռիսկի գործոններից կախված, դիկլոֆենակ*, ինդոմետացին կամ իբուպրոֆեն**:	A
Առաջարկվում է հիդրոմորֆին, պենտազոցին կամ տրամադոլ որպես ընտրության երկրորդ միջոց:	C
Կիրառեք ալֆա-բլոկատորներ երիկամային խիթի կրկնման կանխարգելման համար՝ տեղեկացված հիվանդների դեպքում:	C

*Նապրոխումի դիկլոֆենակը վատ ազդեցություն ունի երիկամային անբարարությամբ հիվանդների կծիկային ֆիլտրացիայի արագության (ԿՖԱ) վրա (ՀՄ. 2ա):

**Խորհուրդ է տրվում որպես հակազդում երիկամային խիթից հեքո կրկնակի ցավերին

Ապացույցների ամփոփում	ԱՄ
Միզածորանի ախտանիշային քարերի դեպքում, քարի շտապ հեռացումը որպես բուժման առաջին ընտրության տարբերակ նպատակահարմար է կիրառել միայն առանձին դեպքերում (տես՝ տեկստ):	1b

3.4.1.2 Սեպսիսի և/կամ անուրիայի վարումը խցանված երիկամի դեպքում

Միզային ուղիների ինֆեկցիայի (ՄՈԻԻ) բոլոր նշաններով երիկամի խցանումը և/կամ անուրիան ուրոլոգիական շտապ դեպքեր են: Ինֆեկցված հիդրոնեֆրոզի ժամանակ, որն առաջացել է մեկ երիկամի կամ երիկամների երկկողմանի քարով խցանման հետևանքով, հետագա բարդություններից խուսափելու նպատակով անհրաժեշտ է շտապ դեկոմպրեսիա:

Դեկոմպրեսիա

Ներկայումս գոյություն ունեն վերին միզուղիների դեկոմպրեսիայի երկու մեթոդներ .

- Միզածորանային ռենտգեն-պոզիտիվ սթենոտ տեղադրում
- Միջմաշկային նեֆրոստոմիկ խողովակի տեղադրում

Չկան բավականաչափ տվյալներ որոնք կհաստատեն միջմաշկային նեֆրոստոմիայի առավելությունը վերընթաց սթենոտավորման նկատմամբ: Ինչպես նաև չկան բավականաչափ տվյալներ, որոնք կհաստատեն սթենոտավորումից հետո բարդությունների առաջացման ավելի բարձր ռիսկի մասին քան միջմաշկային նեֆրոստոմիայից հետո [84, 85]:

Միայն մեկ ՌԿՀ [86] է գնահատում դեկոմպրեսիան սուր ինֆեկցված հիդրոնեֆրոզի ժամանակ: Միջմաշկային նեֆրոստոմիայից հետո առաջացած բարդությունները նկարագրվում են ավելի ոչ հակասական, իսկ միզածորանի սթենոտավորումից հետո բարդությունները նկարագրվում են ոչ այդքան լավ [84]:

Քարի վերջնական հեռացումը պետք է հետաձգվի այնքան ժամանակ, քանի դեռ ինֆեկցիան կմաքրվի հակաբակտերիալ բուժման ամբողջ կուրսի արդյունքում:

Երեխաների մոտ միզաձորանային սթենտերը, սուր անուրիաների ժամանակ, կարող են ունենալ որոշակի առավելություն միջմաշկային նեֆրոստոմայի հետ համեմատած [87]:

Ապացուցման ընդհանրացում

ԱՄ

Երիկամների հավաքող համակարգի բեռնաթափման համար 1b միզաձորանային ստենտերը և պերկուտան նեֆրոստոմային կատետրները հավասարապես արդյունավետ են:

Խորհուրդ

ԱՄ

ԽԱ

Շտապ բեռնաթափել հավաքող համակարգը խցանող քարով 1b համակցված սեպսիսի դեպքում՝ կիրառելով պերկուտան դրենավորում կամ միզաձորանային ստենտավորում:

Ձգձգել քարի բուժական միջոցառումները, մինչև սեպսիսի 1b վերացումը A

Հետագա միջոցառումները

Խցանված և ինֆեկցված միզային համակարգի շտապ բեռնաթափումից հետո՝ ինչպես արյան, այնպես էլ մեզի նմուշները անհրաժեշտ է ուղարկել ցանքս-անտիբիոտիկոգրամային զգայունության հետազոտման և անտիբիոտիկները անհրաժեշտ է սկսել դրանից անմիջապես հետո կամ շարունակել, եթե արդեն նախաձեռնված է եղել: Այդ ռեժիմը պետք է վերազնահատել ելնելով ցանքս-անտիբիոտիկոգրամայի հետազոտման տվյալներից: Ինտենսիվ խնամքը կարող է դառնալ անհրաժեշտ:

խորհուրդ

A*

Բեռնաթափումից հետո(կրկին)հավաքել մեզը անտիբիոտիկոգրամմայի զգայունության հետազոտման համար:

Անմիջապես սկսել հակամիկրոբային բուժում(Նաև ինտենսիվ խնամք, եթե անհրաժեշտ է):

Վերանայել հակամիկրոբային բուժման սխեման՝ կախված հետագա անտիբիոտիկոգրամմայի տվյալներից:

**Արդիականացված է մասնագիտացված խմբի փոխհամաձայնության հիմնավորմամբ*

3.4.1.3. Ընդհանուր խորհուրդներ և քարի հեռացման զգուշավորության չափանիշները

3.4.1.3.1. Հակամիկրոբային բուժումը

Միզային համակարգի ինֆեկցիան միշտ անհրաժեշտ է բուժել, եթե պլանավորված է քարի հեռացումը: Խցանումով և կլինիկական արտահայտված ինֆեկցիայով հիվանդների մոտ ստենտի կամ պերկուտան նեֆրոստոմայի միջոցով դրենավորումը պետք է իրականացնել մի քանի օր՝ մինչև քարի հեռացումը սկսելը:

խորհուրդ

ԽԱ

Ստանալ մեզի ցանքսը կամ կատարել մեզի նստվածքի հետազոտություն՝ A*
մինչև ինչ-որ բուժում պլանավորելը

**Արդիականացված է մասնագիտացված խմբի հետևյալ փոխհամաձայնությունը*

Շուրջվիրահատական հակամիկրոբային կանխարգելումը

Ուրետերոսկոպիկ կամ պերկուտան քարահեռացումից հետո զարգացող ինֆեկցիայի վտանգի համար չկան հստակ ապացույցներ [88,89]: Պերկուտան նեֆրոլիթոտոմիա կատարած մեծաքանակ տվյալների բազայով հիվանդների հետազոտությամբ հաստատվել է, որ մեզի ցանքսի նախնական բացասական

տվյալների պայմաններում անտիբիոտիկոպրոֆիլակտիկան հավաստիորեն իջեցնում է հետվիրահատական տենդի և այլ բարդությունների հաճախականությունը[90]: Միանվագ դեղաչափի նշանակումը եղել է բավարար[91]:

Խորհուրդ

ԱՄ

ԽԱ

Բացառել կամ բուժել միզուղիների ինֆեկցիան մինչև 1b
քարահեռացումը

A

Առաջարկել կիրառել ներվիրահատական հակամիկրոբային 1b
կանխարգելում բոլոր այն հիվանդներին, որոնք ենթարկվելու
են էնդուրոլոգիական բուժման

A*

ՄՈՒԻ=միզուղիների ինֆեկցիա

Հակամակարդիչ թերապիան և քարի բուժումը

Հեմոռագիկ դիաթեզով կամ հակամակարդիչ բուժում ստացող հիվանդներին, մինչև քարահեռացման որոշում կայացնելը, կամ քարահեռացման ժամանակ, անհրաժեշտ է ուղարկել ընդհանուր պրակտիկայի թերապևտի մոտ՝ համապատասխան բուժական միջոցառումների համար[92-96]: Հիվանդները, որոնք ունեն չկարգավորված արյունահոսության դիաթեզ՝ հետազայում ունեն արյունահոսության կամ հարերիկամային հեմատոմայի առաջացման բարձր վտանգ(բարձր վտանգի միջամտություն).

· հարվածա-ալիքային քարափշրում (SWL) (հարերիկամային հեմատոմայի հարաբերական վտանգը բարձրանում է 4.2 անգամ հակամակարդիչ/հակաագրեգանտ բուժման ընթացքում) [97] [LE: 2]);

- պերկուտան նեֆրոլիթոտրիպսիա;
- պերկուտան նեֆրոստոմիա;
- լապարասկոպիկ վիրահատություն;
- բաց վիրահատություն [92,98,99].

Հիմնական կոագուլոպաթիայի կարգավորումից հետո հարվածա-ալիքային քարափշրումը համարվում է կիրառելի և անվտանգ[100-104]: Չկարգավորված արյունահոսության խանգարումների կամ շարունակական հակամակարդիչ բուժման դեպքերում, ի տարբերություն ՀԱՔ-ի կամ պերկուտան նեֆրոլիթոտրիպսիայի՝ ուրետերոռենոսկոպիան(ՈՒՌՍ) կարող է առաջարկել այլընտրանքային մոտեցում, քանի որ այն համակցվում է հիվանդացության ցածր աստիճանի հետ[105-109]: Միայն ճկուն ուրետերոսկոպիայի տվյալներն են ակնառու ցույց տալիս ուրետերոռենոսկոպիայի առավելությունը միզածորանային մոտակա քարերի բուժման ընթացքում [106,110]:

Աղյուսակ 3.4.1. Վտանգի աստիճանակարգը արյունահոսության համար[94-96,111]

Ցածր վտանգի արյունահոսության միջամտություններ	Ճկուն ցիստոսկոպիա			
	Միզածորանային կատետրիզացիա			
	Միզածորանային ստենտի հեռացում			
Բարձր վտանգի արյունահոսության միջամտություններ	ՈՒրետերոսկոպիա			
	Հեռահար	հարվածա-ալիքային քարափշրում		
		Պերկուտան նեֆրոստոմա		
		Պերկուտան նեֆրոլիթոտրիպսիա		

Աղյուսակ 3.4.2. Հակամակարդիչ բուժման առաջարկվող ռազմավարությունը քարի հեռացման ժամանակ [94-96] (Համագործակցելով միայն սրտաբանի հետ)

	Արյունահոսության ն վտանգ	Թրոմբոէմբոլիայի վտանգ		
		Ցածր վտանգ	Միջին վտանգ	Բարձր

				վտանգ
Վարձարին Դաբիգատր ան Ռիվարոքսա բան Ապիքսաբա ն	Ցածր վտանգի միջամտություն	Կարող է շարունակվել INR(ՄՆՕ) փոքր է 2.5-ի թերապևտիկ սահմանագծից	Կամրջող թերապիա	Կամրջող թերապի ա
	Բարձր վտանգի միջամտություն	Կարող է ժամանակավոր դադարեցվել համապատասխա ն ժամանակահատվ ածում: Խստորեն խորհուրդ է տրվում կամրջող թերապիա	Կամրջող թերապիա	Կամրջող թերապի ա
Ասպիրին	Ցածր վտանգի միջամտություն	Շարունակել	Շարունակել	Պլանայի ն վիրահա տություն՝ հետաձգ ել: Անհետա ձգելի վիրահա տություն՝

				շարունակել
	Բարձր վտանգի միջամտություն	Դադարեցնել	Պլանային վիրահատություն՝ հետաձգել: Անհետաձգելի վիրահատություն՝ շարունակել, եթե դա հնարավոր է	Պլանային և վիրահատություն՝ հետաձգել: Անհետաձգելի վիրահատություն՝ շարունակել
Թիենոպիրիդինի միջնորդներ (P2Y12 ընկալիչների ինհիբիտորներ)	Ցածր վտանգի միջամտություն	Դադարեցնել միջամտությունից 5 օր առաջ և վերանայել դեղաչափի վերաբեռնավորումը 24-72 ժամվա ընթացքում: Discontinue 5 days before intervention. Resume within 24-72 hours with a loading dose.	Շարունակել	Պլանային և վիրահատություն՝ հետաձգել: Անհետաձգելի վիրահատություն՝ շարունակել
	Բարձր վտանգի	Դադարեցնել	Պլանային	Elective

	միջամտություն	միջամտությունից 5 օր առաջ Discontinue 5 days before intervention and resume within 24-72 hours with a loading dose.	վիրահատություն՝ հետաձգել: Անհետ աձգելի վիրահատություն՝ դադարեցնել վիրահատությունից 5 օր առաջ և վերանայել դեղաչափի վերաբեռնավորումը 24-72 ժամվա ընթացքում: Elective surgery: postpone. Non-deferrable surgery: discontinue 5 days before procedure and resume within 24-72 hours with a loading dose. Bridging therapy - GPIIb/IIIa inhibitors if aspirin is discontinued.	surgery: postpone. Non-deferrable surgery: discontinue 5 days before procedure and resume within 24-72 hours, with a loading dose. Bridging therapy - GPIIb/IIIa inhibitors.
--	---------------	--	--	--

Խորհուրդ	ԱՄ	ԽՄ
Երբ առկա են բաժակային անախտանիշային քարեր՝ առաջարկել	4	C

Խորհուրդ	ԱՄ	ԽՄ
հիվանդների ակտիվ հետևում, որոնք ունեն թրոմբային բարդությունների բարձր վտանգ		
Բարձր աստիճանի վտանգով հիվանդներին կատարել թերապևտիկոնսուլտացիա՝ ժամանակավոր դադարեցնելու կամ /ծածկելու, հաղթահարելու bridging/ հակաթրոմբային թերապիան	3	B
Կիրառել ռետրոգրադ ճկուն ուրետերոռենոսկոպիա եթե քարահեռացումը կարևոր է և հակաթրոմբային թերապիան հնարավոր չէ դադարեցնել, քանի որ այն ուղեկցվում է քիչ բարդություններով:/less morbidity/.	2a	A*

**Արդիականացված է մասնագիտացված խմբի փոխհամաձայնության հիմնավորմամբ*

3.4.1.3.3.Գերքաշը

Գերքաշը անէսթեզիոլոգիական տեսանկյունից կարող է պատճառ հանդիսանալ բարձր վտանգի, ինչպես նաև ՀՀԱԲ-ից ու ՊՆԼ-ից հետո ապահովել հաջողության ցածր մակարդակ։.

3.4.1.3.4.Քարի բաղադրությունը

Բրուշիտից, կալցիումի օքսալատի մոնոհիդրատից ցիստինից բաղկացած քարերը , ինչպես նաև համակարգչային տոմոգրաֆիայով NCCT բարձր խտության քարերը առանձնակի դժվարություններ են հարուցում[36]: Պերկուտան նեֆրոլիթոտոմիան կամ ուրետերոռենոսկոպիան այլընտրանք են մեծ, ՀՀԱԲ-կայուն քարերի հեռացման համար:

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Հաշվի առնել քարի բաղադրությունը, մինչև քարի հեռացման որոշում ընդունելը(հիվանդի անամնեզի տվյալները, նախորդ քարերի հետազոտման տվյալները, հետազոտությունը կամ HU ցուցանիշը առանց կոնտրաստի ՀՇ հետազոտմամբ): Քարերը,	2-4	B

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
որոնց խտությունը >1,000 HU առանց կոնտրաստ ՀՇ հետազոտությամբ՝ ունեն փշրվելու փոքր հավանականություն:		
Փորձել լուծել ռենտգենթափանցիկ քարերը (Տե՛ս 3.4.2.1.2.2 բաժնում)։	2a	B

3.4.1.3.5.Քարային արահետ

Քարային արահետը քարաբեկորների կամ ավազահատիկների /մանրախճի/ կուտակումն է միզածորանում, որը չի անցնում ողջամիտ ժամկետում և խոչընդոտում է մեզի արտահոսքը[112]: Քարային արահետը հանդիպում է ՀԱԲ-ի 4-7% դեպքերում[113] և քարային արահետի ձևավորման հիմնական գործոնը համարվում է քարի չափերը [114]: Միզածորանային ստենտի տեղադրումը 15մմ-ից > քարերի դեպքում կանխում է քարային արահետի առաջացում [115]:

Քարային արահետի հիմնական խնդիրը միզածորանի խցանումն է, որը կարող է 23% դեպքերում ընթանալ համր[116,117]: Երբ քարային արահետը ընթանում է առանց ախտանիշների՝ կոնսերվատիվ/պահպանողական/ բուժումը նախնական տարբերակն է: Բժշկական վտարող /expulsion/ թերապիան զգալիորեն մեծացնում է քարերի տեղահանումը և նվազեցնում է էնդոսկոպիկ միջամտությունների անհրաժեշտությունը[118,119]:

Ապացույցների ամփոփում	ԱՄ
Բժշկական վտարող թերապիան մեծացնում է քարային արահետի քարերի տեղահանման [118].	1b
Քարային արահետի հետագա բուժումը ցուցված է, երբ ինքնաբուխ անցումը քիչ հավանական է	4
Հարվածա-ալիքային քարափշրումը ցուցված է անախտանիշային և ախտանիշային դեպքերում, երբ չկան միզուղիների ինֆեկցիայի նշաններ և երբ առկա են մեծ քարաբեկորներ [120].	4

Ապացույցների ամփոփում		ԱՄ
Ուրբեմերոսկոպիան արդյունավետ է քարային արահետի բուժման համար [121].		3
Պերկուտան նեֆրոստոմային խողովակի կամ միզաձորանային ստենտի տեղադրումը ցուցված է միզաձորանի ախտանիշային խցանման դեպքում՝ միզուղիների ինֆեկցիայի առկայությամբ կամ բացակայությամբ :		4
Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Միզուղիների ինֆեկցիայով/տենդով զուգակցված քարային արահետի բուժումը նախընտրելի է անցկացնել պերկուտան նեֆրոստոմայով:	4	C
Քարային արահետը բուժել հեռահար հարվածա-ալիքային քարափշրման կամ ուրեթերոռենոսկոպիայի միջոցով, երբ երբ առկա են մեծ քարաբեկորներ:	4	C

3.4.2. Քարի կառավարման յուրահատկությունը երիկամային քարերի պարագայում

Փոքր, չխցանող անախտանիշային քարերի իրական ընթացքը անորոշ է և պրոգրեսիվման վտանգը անհասկանալի է:

Դեռևս ձեռք չի բերվել փոխհամաձայնություն հետևման ժամանակաընթացքի, միջամտության տեսակի և ժամկետների համար: Բուժման տարբերակներ են՝ հետևումը, քիմիոլիզիսը/քիմիոտարալուծում/ կամ քարի ակտիվ հեռացումը:

3.4.2.1. Բուժման տեսակները

3.4.2.1.1. Կոնսերվատիվ բուժում(Հետևում)

Երիկամային քարերի հետևումը, հատկապես բաժակներում՝ կախված է նրանց իրական բնույթից(3.4.2.2.):

Ապացույցների ամփոփում	ԱՄ
Մինչ այժմ վիճելի է՝ արդյոք երիկամային քարերը պետք է բուժվեն, թե ամենամյա հետևելը բավարար է անախտանիշային բաժակային քարերի	

դեպքում, որոնք կայուն են մնում 6 ամսվա ընթացքում:	
Խորհուրդ	ԽԱ
Պարբերաբար հետևել այն դեպքերում, երբ երիկամային քարերը բուժված չեն(նախնական 6 ամսից և ամենամյա հետևում ախտանիշներին ու քարի իրավիճակին [US, KUB or CT])	A*

**Արդիականացված է մասնագիտացված խմբի փոխհամաձայնության հիմնավորմամբ*

CT=համակարգչային չոմոգրաֆիա; KUB=kidney, bladder, ureter (plain film); US=սոնոգրաֆիա

3.4.2.1.2. Դեղորայքային բուժում

3.4.2.1.2.1. Պերկուտան իրիգացիոն քիմիոլիզ

Ներկայումս պերկուտան քիմիոլիզը հազվադեպ է կիրառվում: Պերկուտան իրիգացիոն/ոլոդմամբ/ քիմիոլիզը կարող է տարբերակ հանդիսանալ ինֆեկցիոն կամ միզաթթվային քարերի պարագայում [122,123]: Ստրուվիտային քարերի տարալուծման համար կարող է կիրառվել Suby G լուծույթ(10% հեմիացիդրին; pH 3.5-4)[124]:

Միզաթթվային՝ բայց ոչ նատրիումի կամ ամոնիումի ուրատային բաղադրությամբ քարերը կարող են լուծվել ներքին ընդունման քիմիոլիզի միջոցով: Նախորդ քարի անալիզը կարող է տեղեկատվություն տրամադրել քարի բաղադրության մասին: Մեզի pH որոշումը և քարի ռենտգեն բնութագրերը կարող են տեղեկատվություն տալ քարի տեսակի մասին: Ներքին ընդունման քիմիոլիզը հիմնված է հիմային ցիտրատի կամ նատրիումի բիկարբոնատի կիրառման միջոցով մեզի հիմնայնացման վրա[123,125]: pH-ի տվյալները պետք է կարգավորվեն 7,0-7,2-ի սահմաններում: Քիմիոլիզը առավել արդյունավետ է բարձր pH –ի պարագայում, որը կարող է բերել կալցիում-ֆոսֆատային քարերի առաջացման: Բուժման ընթացքում ռենտգեն-թափանցիկ քարերի հետևումը սոնոգրաֆիայի տիրույթում է, սակայն կարող է

անհրաժեշտ լինել կրկնակի, ոչ կոնտրաստային համակարգչային շերտագրում /NCCT/:

Այն դեպքերում, երբ առկա է հավաքող համակարգի միզաթթվային խցանում՝ ցուցված է ներքին ընդունման քիմիոլիզ, միզային դրենաժավորմամբ [126]: Միզածորանային հեռակա քարերի դեպքում հիմնայնացման համակցումը տամսուլոգինի հետ ցուցաբերում է ամենաբարձր քարից-ազատման արդյունքի մասնաբաժին [126]:

Խորհուրդ	ԽԱ
Տեղեկացնել հիվանդին՝ թե ինչպես փոփոխի հիմնայնացման դեղորայքի չափաբաժինը համապատասխան մեզի pH-ի, որը համարվում է տվյալ դեղորայքի ուղղակի հետևանք	A
Տեղեկացնել հիվանդին, թե ինչպես պետք է վերահսկել մեզի pH-ը, օրը 3 անգամ մակարդակի չափման տեստով /dipstik/ (կանոնավոր ընդմիջումներով)	A
Հետևողականորեն դիտարկել ռենտգենթափանցիկ քարերի վիճակը բուժման ընթացքում և ավարտին	A*
Տեղեկացնել հիվանդին իր կարգապահության կարևորությունը	A

*Արդիականացված է մասնագիտացված խմբի փոխհամաձայնության հիմնավորմամբ

3.4.2.1.3. Արտամարմնային հարվածա-ալիքային քարափշրում (SWL)

Հաջողությունը կախված է քարափշրման սարքի արդյունավետությունից և հետևյալ գործոններից՝ չափից, տեղակայվածությունից (միզածորանային, կոնքային կամ բաժակային), ինչպես նաև քարերի բաղադրությունից (կարծրությունից) (Բաժին 3.4.3.2);

Հիվանդի մարմնակազմվածքից (Բաժին 3.4.2.2);

ՀԱՔ արդյունավետությունից(գործունեության լավագույն փորձը best practice, տես ստորև):

Այդ գործոններից յուրաքանչյուրն ունի էական ազդեցություն ՀԱԲ-ի կրկնակի բուժման արագության և վերջնական արդյունքի վրա:

3.4.2.1.3.1 Արտամարմնային ՀԱԲ-ի հակացուցումները

Կան մի շարք հակացուցումներ արտամարմնային ՀԱԲ-ի կիրառման համար այդ թվում.

հղիությունը՝ ի հաշիվ պտղին վերաբերվող պոտենցիալ հետևանքների [127];

արյունահոսության դիաթեզները, որոնք կարող են կոմպենսացվել/փոխլրացվել/բուժումից առնվազն 24 ժամ առաջ և 48 ժամ հետո [128];

անվերահսկելի միզուղիների ինֆեկցիաները /UTIs/;

կմախքի զարգացման ծանր արատները և արտահայտված ճարպակալումը, որը խանգարում է թիրախավորել քարը;

զարկերակային անևրիզմաները՝ քարի մոտակայքում [129];

քարից հեռակա անատոմիական խցանումները:

3.4.2.1.3. Գործունեության լավագույն փորձը

Ստենտավորում

Սահմանված կարգով ներքին ստենտերի կիրառումը մինչև ՀԱԲ-ն չի բարելավել SFR-ը[130] (LE: 1b): յլ ստենտը կանխում է երիկամային խիթի վտանգը և խցանումը, բայց չի կրճատում քարային արահետի ձևավորումը կամ ինֆեկցիոն բարդությունները[131]:

Պեյսմեյկեր

Պեյսմեյկերով հիվանդներ կարող են բուժվել ՀԱԲ-ի միջոցով՝ պայմանով, որ պետք է ձեռք առնվեն համապատասխան տեխնիկական անվտանգության միջոցներ; Հիվանդները, որոնց իմպլանտացված է կարդիովերտեր-դեֆիբրիլյատոր՝ պետք է կառավարվեն հատուկ հետևողականությամբ(գործադրման ռեժիմը ժամանակավորապես կրկնաձրագրավորել ՀԱԲ բուժման ընթացքում): Սակայն դա կարող է անհրաժեշտ չլինել նոր սերնդի քարափշրման սարքերի պարագայում[132]:

Հարվածային ալիքի արագությունը

Հարվածային ալիքի հաճախականության նվազեցումը 120-ից մինչև 60-90 հարվածային ալիք/րոպեում բարելավում է SFR -ը[83,133-137]: Հարվածային ալիքի

հաճախականության բարձրացմամբ մեծանում է հյուսվածքների վնասման հավանականությունը [138-142]:

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Կիրառել հարվածային ալիքի 1.0-1.5 Հց հաճախականություն:	1a	A

Հարվածային ալիքների քանակը, էներգիայի կարգավորումը և կրկանի բուժման փուլերը

Հարվածների քանակը, որոնք կարող են հասցվել ամեն փուլում կախված են քարափշրման սարքի տեսակից և հարվածային ալիքի էներգիայից: Չկա փոխհամաձայնություն հարվածային ալիքների առավելագույն քանակի վերաբերյալ: ՀԱՔ-ի գործադրումը՝ ցածր էներգիայի ցուցանիշներով հզորության սաստկության գործադրման փուլայնությամբ(և ՀԱՔ ընդմիջվող հաջորդականությամբ), կարող է բուժման ընթացքում հանգեցնել աստիճանաբար զարգացող անոթասեղմման [140], որը կանխում է երիկամային վնասումը[143,144]: Կենդանիների փորձերում[145] և հեռանկարային ռանդոմիզացված հետազոտություններում[146] ներկայացվում են SFRs-ի լավագույն արդյունքներ(96% vs. 72%) հզորության սաստկության աստիճանական փուլային գործադրման պարագայում, բայց որևէ տարբերություն չի հայտնաբերվել ՀԱՔ-ից հետո քարափշրման կամ բարդությունների նկատելիության առումով, անկախ նրանից թե ինչ սաստկություն է գործադրվել[147]:

Չկան փաստարկող տվյալներ ՀԱՔ-ի կրկնակի կատարման փուլերի ընդմիջումների վերաբերյալ: Սակայն կլինիկական փորձը ցույց է տալիս, որ կրկնակի կատարումները իրագործելի են(сeанс կատարահերթ):

Ապացույցների ամփոփում	ԱՄ
Կլինիկական փորձը ցույց է տալիս, որ կրկնակի կատարումները իրագործելի են (միզաձորանային քարերի դեպքում 1 օրվա ընթացքում).	4

Ձայնային հաղորդման բարելավումը

Բուժական գլխիկի և հիվանդի մաշկի միջև պատշաճ ակուստիկ շղթայակցումը շատ կարևոր է: Շղթայակցման դոնդողում թերությունները(օդային բարձիկները) անդրադարձնում են հարվածային ալիքների 99% -ը[148]: Ուլտրաձայնային դոնդողը թերևս առավել լայնորեն կիրառվողն է և առավել հասանելի է որպես շղթայակցման միջոց[149]:

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Ապահովել շղթայակցման միջոցի ճիշտ կիրառում, որովհետև դա շատ կարևոր է հարվածային ալիքի արդյունավետ տեղափոխման համար:	2a	B

Բուժական միջոցառման հսկողությունը

Բուժման արդյունքները կախված են վիրահատող բժշկից, և լավագույն արդյունքների են հասնում փորձառու կլինիցիստները: Բուժական միջոցառման ընթացքում տեղակայման տեսանելիության հետևողական հսկողությունը տալիս է որակյալ արդյունք[150]:

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Ապահովել պատշաճ ֆյուրոսկոպիկ կամ ուլտրասոնոգրաֆիկ շրջադիտարկում/մոնիտորինգ/ բուժական միջոցառման ընթացքում:	3	A*

**Արդիականացված է մասնագիտացված խմբի փոխհամաձայնության հիմնավորմամբ*

Հետևողական ցավազրկումը բուժման ընթացքում կարևոր է կանխելու համար ցավ-կախյալ շարժումները և ավելորդ շնչառական էքսկուրսիաները[151-153]:

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Ապահովել պատշաճ ցավազրկում, քանի որ դա բարելավում է	4	C

բուժման արդյունքները՝ ի հաշիվ լիարժեք թիրախավորման, կապված շարժումների և ավելորդ շնչառական էքսկուրսիաների սահմանափակման հետ:		
--	--	--

Հակամիկրոբային կանխարգելում

ՀԱՔ-ից առաջ չկա համընդհանուր ընդունված հակամիկրոբային կանխարգելման խորհուրդ: Չնայած կանխարգելում խորհուրդ է տրվում ներսային ստենտերի տեղադրման դեպքում՝ բուժումը նախորոք պլանավորելիս և բարձր միկրոբային գերբեռնվածության պարագայում (օրինակ՝ մշտական կատետր, նեֆրոստոմա կամ ինֆեկցիոն քարեր) [154-156]:

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
ինֆեկցիան քարերի կամ բակտերիուրիայի պարագայում նախորոք՝ մինչև ՀԱՔ-ն սկսելը, նշանակում են անտիբիոտիկներ:	4	C

Դեղորայքային բուժումը արտամարմնային հարվածա-ալիքային քարափշրումից հետո

Դեղորայքային վտարող թերապիան ՀԱՔ-

ից հետո միզածորանի և երիկամների քարերի դեպքում

նպաստում է վտարման արագացմանը և բարձրացնում է SFRs, ինչպես նաև նվազեցնում է լրացուցիչ ցավազրկման պահանջները [157-166] (Բաժին 3.4.2.1.2.1.2):

3.4.2.1.3.3 Արտամարմնային հարվածա-ալիքային քարափշրման բարդությունները Ի համեմատություն ՊՆԼ-ի և ՈՒՌՍ-ի՝ ՀԱՔ-

ի պարագայում առավել հազվադեպ են հանդիպում ընդհանուր բարդություններ [167,168] (Աղյուսակ 3.4.1):

Աղյուսակ 3.4.1: ՀԱՔ-ի հետ կապված բարդություններ [113,116,169-181]

Բարդությունները			%	Գրականական աղբյուրներ

Բարդությունները			%	Գրականական աղբյուրներ
Քարաբեկորների հետ կապված	Քարային արահետ		4 - 7	[113,116,169]
	Մնացորդային քարաբեկորի աճի ավելացում		21 - 59	[170,171]
	Երիկամային խիթ		2 - 4	[172]
Ինֆեկցիոն	Բակտերիուրիա՝ ոչ ինֆեկցիոն քարերի դեպքում		7.7 - 23	[170,173]
	Սեպսիս		1 - 2.7	[170,173]
Հյուսվածքային ազդեցություն	Երիկամային	Ախտանիշային հեմատոմա	< 1	[174]
		Անախտանիշ հեմատոմա	4 - 19	[174]
	Սիրտ-անոթային	Ռիթմի խանգարում	11 - 59	[170,175]
		Սրտի հիվանդագին իրադրություններ	Դեպքի ներկայացումներ	[170,175]
	Աղեստամոքսային	Աղիքի թափաժակում	Դեպքի ներկայացումներ	[176-178]

Բարդությունները			%	Գրականական աղբյուրներ
		Լյարդի, փայծաղի հեմատոմա	Դեպքի ներկայացումներ	[178-181]

ՀԱԲ-ի և գերճնշման կամ դիաբետի միջև կապը հաստատված չէ: Հրապարակված տվյալները հակասական են, սակայն ոչ մի ապացույց չի հաստատում այն վարկածը, որ ՀԱԲ-ն կարող է առաջացնել երկարատև բացասական ազդեցություններ[6,182-186]: 3.4.2.1.4.

Երիկամային քարերի հեռացման էնդոուրոլոգիական տեխնիկաներ

3.4.2.1.4.1. Պերկուտան նեֆրոլիթոտոմիա (PNL)

Պերկուտան նեֆրոլիթոտոմիայի մնում է որպես ստանդարտ ընթացակարգ խոշոր երիկամային քարերի պարագայում: Տարբեր կոշտ և ճկուն էնդոսկոպեր հասանելի են, իսկ ընտրությունը հիմնականում կախված է վիրաբուժի նախասիրությունից: Ստանդարտ մուտքի ուղիներն են՝ 24-30 F: Փոքր մուտքի հարմարանքները՝ < 18 French –ից, սկզբնական շրջանում կիրառվել են մանկաբուժական գործունեությունում, սակայն ներկայումս առավել տարածում են գտնում մեծահասակների համար: Մանրանրբիկ համակարգերի արդյունավետությունը թվում է թե բարձր է, սակայն պահանջվում է երկարատև վիրահատական ժամանակ, և առավելությունները՝ ի համեմատություն ստանդարտ ՊՆԼ-ի, ընտրված հիվանդախմբի համար դեռևս պետք է ապացուցել [187]: Կան մի շարք ապացույցներ, որ փոքր ուղիները առաջացնում են քիչ արյունահոսական բարդություններ, բայց հետագա հետազոտությունները պետք է գնահատեն այդ հարցը: Փոքր չափերի գործիքները կրում են ներերիկամային ավազանային ճնշման բարձրացման վտանգ[7] [188-192]:

3.4.2.1.4.1.1. Հակացուցումները

Հիվանդները, որոնք ստանում են հակամակարդիչ թերապիա՝ անհրաժեշտ է հետևողականորեն հսկել վիրահատությունից առաջ և հետո: Հակամակարդիչ

բուժումը անհրաժեշտ է ընդհատել մինչև ՊՆԼ-ն [105]: Այլ կարևոր հակացուցումները ներառում են.

չբուժված միզուղիների ինֆեկցիան;

ուռուցքը՝ նախատեսվող մուտքի ուղու շրջանում;

երիկամի պոտենցիալ չարորակ ուռուցքը;

հղիությունը (Բաժին 3.4.3.1):

3.4.2.1.4.1.2. Ներմարմնային քարափշրման լավագույն կլինիկական փորձը/գործունեությունը/

Ներմարմնային լիթոտրիպսիա մի շարք մեթոդներ հասանելի են (սարքեր քննարկվում են Բաժին 3.4.1.2.1.1.5-ում):

ՊՆԼ-ի ընթացքում ուլտրաձայնային և պնևմատիկ համակարգերը կիրառվում են հիմնականում կոշտ նեֆրոսկոպիայի ընթացքում: Երբ կիրառվում են մանրանրբիկ գործիքներ՝ լազերային քարափշրման դեպքում հանդիպում է քարի միգրացիայի ցածր հավանականություն, քան պնևմատիկ քարափշրման պարագայում[193]:

Ճկուն էնդոսկոպերը պահանջում են լազերային քարափշրում, որպեսզի հնարավոր լինի թեքել ծայրակալը և Ho:YAG լազերը դարձել է ստանդարտ՝ ինչպես ուրետերոսկոպիայի դեպքում [194]:

Էլեկտրոհիդրավլիկ լիթոտրիպսիան ունի բարձր արդյունավետություն, բայց այլևս չի դիտարկվում որպես առաջին գծի մեթոդ՝ հնարավոր կողմնակի վնասումներ առաջացնելու պատճառով[195]:

Խորհուրդ	ԽԱ
Կիրառել ուլտրաձայնային, բալիստիկական և Ho:YAG սարքեր՝ ՊՆԼ-ի ընթացքում ներմարմնային քարափշրման համար:	A*
Երբ կիրառվում են ճկուն գործիքներ՝ օգտագործել Ho:YAG լազեր, քանի որ ներկայումս այն ամենաարդյունավետ սարքն է:	

*Արդիականացված է մասնագիտացված խմբի փոխհամաձայնության հիմնավորմամբ

Ho:YAG=holmium:yttrium-aluminium-garnet; PNL=percutaneous nephrolithotomy.

Նախավիրահատական պատկերումը

Նախամիջամտական հետազոտությունները ամբողջացված են Բաժին 3.3.1-ում, մասնավորապես ՊՆԼ-ի դեպքում՝ երիկամների և նրանց շրջակայքի սոնոգրաֆիան կամ համակարգչային տոմոգրաֆիան, պլանավորվող միջմաշկային ուղու շրջանակներում հարակից օրգանների տեղակայվածության մասին տեղեկատվություն են տրամադրում(օրինակ՝ փայծաղ, լյարդ, հաստ աղի, թոքամիզ և թոքեր)[196]:

Խորհուրդ	ԽԱ
Իրականացնել նախամիջամտական պատկերում՝ ներառելով, եթե հնարավոր է կոնտրաստ նյութ, իրականացնել հետընթաց/ռետրոգրադ/ հետազոտություն միջամտության սկզբում, գնահատել քարի խտությունը, հավաքող համակարգի անատոմիան, որպեսզի ապահովվի երիկամային քարին հասնելու անվտանգ մուտք:	A*

**Արդիականացված է մասնագիտացված խմբի փոխհամաձայնության հիմնավորմամբ*

Հակամիկրոբային բուժում

Տե՛ս քարի հեռացման ընդհանուր խորհուրդները և քարի հեռացման նախազգուշական միջոցները(Տե՛ս բաժին 3.4.1.4.1):

Հիվանդի դիրքավորումը

Ինչպես ներհակված, այնպես էլ արտահակված դիրքերը հավասարապես անվտանգ են:

Չնայած նրան, որ մեջքային դիրքը/արտահակված/ տալիս է որոշ առավելություններ, այն պահանջում է, որ համապատասխան սարքավորումները լինեն հասանելի հիվանդի ճիշտ դիրքավորման պարագայում, ինչպես օրինակ ռենտգեն սարքը և վիրահատական սեղանը: Բազմաթիվ հետազոտություններ ցույց չեն տվել մեջքային դիրքային ՊՆԼ-ի առավելությունները վիրահատության ժամանակաընթացքի

տևողության առումով: Որոշ տվյալներով քարից ազատման/stone-free/ հավանականությունը փոքր է որովայնային դիրքում/ներհակված դիրքում/, չնայած վիրահատական տևողության ընթացքի երկարացմանը: Ներհակված դիրքավորումը տալիս է պոնկցիայի առավել շատ հնարավորություններ և այդ պատճառով նախընտրելի է վերին բևեռի կամ բազմակի մուտքերի պարագայում[197-199]: Միզաքարային հիվանդության ուղեցույցների մասնագիտական խորհուրդը՝ այս թեման գնահատելու համար կներկայացնի մեթոդական վերանայումներ:

Պոնկցիան/Ծակումը/

Մուտքի ուղիում հաստ աղու տեղակայվածությունը կարող է հանգեցնել հաստ աղու վնասման: Նախավիրահատական ՀՇ-ն/համակարգչային շերտագրումը/ կամ ներվիրահատական ՌԻՁՀ-ն թույլ են տալիս տարբերակել այդ հյուսվածքները մաշկի և երիկամի միջև և նվազեցնում են աղիքի վնասման հավանականությունը[200,201]:

Լայնացում

Պերկուտան մուտքի ուղու լայնացումը կարող է իրականացվել մետաղական տեխնիկայ/աստղադիտակ/ ու եզակի(փուլային, սերիական) լայնիչներով և կամ փուլիկային լայնիչներով: Չնայած նրան, որ առկա են տվյալներ, որոնք ներկայացնում են հերթականությամբ՝ մեկական քայլերով լայնացման առավելությունը այլ մեթոդներից, արդյունքների տարբերությունը ամենայն հավանականությամբ կապված է վիրաբույժ փորձի, այլ ոչ թե կիրառվող տեխնոլոգիաների հետ[200]:

Նեֆրոստոմա և ստենտ

Որոշումը, թե արդյոք անհրաժեշտ է տեղադրել նեֆրոստոմային խողովակ ՊՆԼ գործողության ավարտին՝ կախված է մի շարք գործոններից, որոնք ներառում են.

- մնացորդային քարերի առկայությունը;
- երկրորդ զննումով միջամտության հավանականությունը;

- արյան ներվիրահատական զգալի կորուստը;
- մեզի էքստրավազացիան;
- միզաձորանային խցանումը;
- պոտենցիալ կայուն բակտերիուրիան՝ կապված ինֆեկցիոն քարի հետ;
- միակ երիկամ
- հեմոռագիկ դիաթեզ
- պլանավորվող պերկուտան քիմիական քարալուծում (լիթոլիզ):

Փոքր տրամաչափի նեֆրոստոմաներն հետվիրահատական ցավի տեսանկյունից ունեն առավելություն (202-203):

Խողովակազուրկ ՊՆԼ կատարվում է առանց նեֆրոստոմիկ խողովակի տեղադրման: Երբ չի տեղադրվում նեֆրոստոմիկ խողովակ, կամ միզաձորանային ստենոտ, պրոցեդուրան կոչվում է ամբողջական խողովակազուրկ ՊՆԼ: Չբարդացած դեպքերում, վերջին միջամտությունը կարիք ունի կարճատև հոսպիտալիզացիա, առանց որևէ խնդրի [204-206]:

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Չբարդացած դեպքում, խողովակազուրկ (առանց նեֆրոստոմիկ խողովակի) կամ ամբողջական խողովակազուրկ (առանց նեֆրոստոմիկ խողովակի կամ միզաձորային ստենոտի) ՊՆԼ միջամտությունը հուսալի այլընտրանք է:	1b	A

ՊՆԼ = պերկուտան նեֆրոլիթոտոմիա:

3.4.2.1.4.1.3 Բարդությունները

ՊՆԼ հետ կապված հաճախ հանդիպող հետվիրահատական բարդություններն են տենդը և արյունահոսությունը, մեզի արտահոսքը, մնացորդային քարերի հետ կապված խնդիրները (աղյուսակ 3.4.2):

Աղյուսակ 3.4.2 ՊՆԼ հետ կապված բարդություններ [207]:

Բարդությ ունները	Փոխներ արկում	Էմբոլի զացիա	Ուրի նումա	Տե նդ	Սեպ սիս	Կրծքավ անդակի բարդությ յուններ	Օրգա նների վնասո ւմ	Մահաց ություն	Ա Մ
(աստիճա նը)	(0-20%)	(0- 1.5%)	(0- 1%)	(0- 32. 1%)	(0.3 - 1.1%)	(0-11.6%)	(0- 1.7%)	(0- 0.3%)	1 a
N=11.929	7%	0.4%	0.2%	10. 8%	0.5 %	1.5%	0.4%	0.05%	

Վիրահատության հետ կապված տենդը կարող է հանդիպել նույնիսկ այն դեպքերում, երբ նախավիրահատական մեզը ստերիլ է և ստացել է անտիբիոտիկային պրոֆիլակտիկա, քանի որ հենց երիկամի քարերը կարող են հադիսանալ ինֆեկցիայի աղբյուր: Ներվիրահատական քարի կուլտուրայի որոշումը կարող է օգտակար լինել հետվիրահատական անտիբիոտիկի ընտրության հարցում [208,209]: Հետվիրահատական սեպսիսի կանխարգելման կարևոր գործոններն են ներվիրահատական իրիգացիոն ճնշումը <30 մմ Hg և հետվիրահատական շրջանում մեզի արտահոսքի ադեկվատ ապահովումը: ՊՆԼ-ից հետո արյունահոսությունը կարելի է բուժել նեֆրոստոմիկ խողովակը կարճ ժամանակով փակելով: Ծանր արյունահոսության դեպքում կարող է անհրաժեշտ լինել զարկերակի ճյուղի սուպերսելեկտիվ էմբոլիզացիայի:

3.4.2.1.4.2 Ուրեթերոռենոսկոպիան երիկամի քարերի դեպքում (RIRS)

Տեխնոլոգիական հաջողությունների (փոքր տրամաչափի էնդոսկոպիական գործիքների ի հայտ գալը, թեքվող մեխանիզմների զարգացումը, օպտիկական որակի և գործիքների կատարելագործումը) և մեկանգամյա գործիքների ներմուծումը

նպաստեցին ՈՒՌՍ-ի ակտիվ կիրառմանը երիկամի և միզածորանի քարերի դեպքում: Հիմնական տեխնոլոգիական զարգացումը համարվում է RIRS [210-212]: Թվային սկոպիայի կիրառմամբ կարելի է վիրահատական ժամանակը կարճացնել՝ նկարահանման որակի բարձրացման պատճառով: Ավելի լավ պրակտիկայի համար տես բաժին 3.4.3.1.4.1.2. – Միզածորանի քարեր-ՈՒՌՍ:

Այն քարերը, որոնք չի հաջողվում է հեռացնել ամբողջությամբ, անհրաժեշտ է կոտրել: Եթե կա դժվարություն քարին հասնելու համար և կոտրել երիկամի ստորին բևեռում, անհրաժեշտ է քարը տեղաշարժել ավելի հարմարավետ բաժակ [214]:

Խորհուրդ	ԽԱ
ՊՆԼ և ՀԱՔ դեպքում ճկուն ՈՒՌՍ-ի օգտագործումը տարբերակ չի համարվում (նույնիսկ 2 սմ-ից մեծ քարերի դեպքում): Այնուամենայնիվ, այդպիսի դեպքերում առկա է հետագա միջամտության և միզածորանային ստենտի տեղադրման անհրաժեշտության բարձր ռիսկ: Բարդ քարերի դեպքում բաց կամ լապարոսկոպիկ մոտեցումը կիրառել որպես հնարավոր այլընտրանք	B

ՊՆԼ = պերկուտան նեֆրոլիթոտոմիա; ՀԱՔ = հարվածաալիքային քարափշրում;
ՈՒՌՍ = ուրեթերոստոմոսկոպիա:

3.4.2.1.4.3. Բաց և լապարոսկոպիկ վիրահատությունները երիկամների քարերի հեռացման նպատակով

ՀԱՔ և էնդուրոլոգիական վիրահատությունների (ՈՒՌՍ և ՊՆԼ) կատարելագործումը նշանակալի իջեցրել են քարերի բաց և լապարոսկոպիկ վիրահատությունների ցուցումները [215-221]: Գոյություն ունի ընդհանուր կարծիք, որ բարդ քարերի շատ դեպքեր, այդ թվում մասնակի և լրիվ մարջանաձև քարերը, առաջնային մոտեցումը ՊՆԼ է: Ի լրումն, ՊՆԼ և RIRS կոմբինացված մոտեցումը կարող է լինել հարմար այլընտրանք: Այնուամենայնիվ, որոշ քանակով

պերկուտան միջամտությունների դեպքում հնարավոր չէ հասնել հաջողության, կամ եթե բազմաթիվ էնդոուրոլոգիական միջամտություններ կատարվել են ոչ հաջողությամբ; բաց կամ լապարոսկոպիկ վիրահատությունը կարելի է համարել բուժման տարբերակ [222-229]:

Խորհուրդներ	ԱՄ	ԽԱ
Առաջարկել քարի հեռացման բաց կամ լապարոսկոպիկ վիրահատություն հազվադեպ դեպքերում, երբ ՀԱՔ, (ճկուն) ՈՒՌՍ և ՊՆԼ ձախողվել է, կամ հնարավոր չէ հաջողությամբ կատարել	3	C
Երբ փորձառությունը թույլ է տալիս, վիրահատությունը կատարել լապարոսկոպիկ, մինչև անցումը բաց վիրահատության, մասնավորապես երբ քարն ունի կենտրոնական տեղակայում:	3	C

ՊՆԼ = պերկուտան նեֆրոլիթոտոմիա; ՀԱՔ = հարվածաալիքային քարափշրում;
 ՈՒՌՍ = ուրեթերոտոմոսկոպիա:

3.4.2.2. Երիկամի քարերի ակտիվ հեռացման ցուցումները

- Քարի մեծացում;
- Քարառաջացման բարձր ռիսկով հիվանդներ;
- Քարով առաջացած օբստրուկցիան;
- Ինֆեկցիա;
- Սիմպտոմատիկ քարեր (օր. ցավ կամ հեմատուրիա);
- Քարեր >15 մմ;
- Քարեր <15մմ, երբ հսկողությունը նախընտրելի տարբերակ չէ;
- Հիվանդի նախընտրությունը;
- Սոմատիկ հիվանդությունները;
- Հիվանդի սոցիալական վիճակը (օր. մասնագիտությունը կամ ճանապարհորդելը);
- Բուժման ընտրություն

Երիկամի քարերով ասիմպտոմատիկ հիվանդների մոտ սիմպտոմատիկ էպիզոդիկամ միջամտության անհրաժեշտության ռիսկը տարվա ընթացքում կազմում է ~10-25%, [231-234], որը համապատասխանում է գումարային 5-տարվա մոտ 48.5% հավանականության: >2 տարվա կլինիկական հսկողությամբ պրոսպեկտիվ Ռ-ՎՀ նշում են, որ ՔԱԱ, գանգատների, լրացուցիչ բուժման անհրաժեշտության, կյանքի որակի, երիկամի ֆունկցիայի կամ կլինիկայում մնալու առումով ՀԱՔ և հսկողության միջև չկա նշանակալի տարբերություն, երբ համեմատել են <15 մմ բաժակի ասիմպտոմատիկ քարերը [235]: Չնայած որոշ հեղինակներ խորհուրդ են տալիս այդպիսի քարերի պրոֆիլակտիկ բուժում՝ երիկամային խիթի, արյունամիզության, ինֆեկցիայի կամ քարի մեշացման կանխարգելման նպատակով, այնուամենայնիվ գրականության մեջ առկա են հակասական տվյալներ [231, 233, 236]: ՀԱՔ-ից հետո գրեթե 5 տարվա հսկողության ընթացքում 2 հետազոտություններ ցույց են տվել, որ փոքր ռեզիդուալ ֆրագմենտներով հիվանդների մինչև 25% կարիք ունեն բուժման [171, 237]:

Խորհուրդ	ԱՄ
Չնայած, բաժակի քարի բուժման հարցը առ այսօր անպատասխան է, քարի մեծացումը, de novo օբստրուկցիան, ուղեկցող ինֆեկցիան, և սուր և/կամ խրոնիկ ցավը համարվում են բուժման ցուցումներ [230, 238, 239]:	3

3.4.2.3. Երիկամների քարերի ակտիվ հեռացման պրոցեդուրայի ընտրությունը

Ընդհանուր խորհրդատվության և նախազգուշությունների համար տես բաժին

3.4.1.3.

3.4.2.3.1. Երիկամի ավազանի կամ վերին/միջին բաժակի քարեր

Հարվածաալիքային քարափշրումը, ՊՆԼ և RIRS երիկամի քարի բուժման մատչելի տարբերակներն են: Մինչդեռ ՊՆԼ արդյունավետությունը պրակտիկորեն կախված չէ քարի չափսից, ՀԱՔ կամ ՌԻՌՍ ժամանակ ՔԱԱ հակադարձ համեմատական է

քարի չափսի հետ [240-243]: Հարվածաալիքային քարափշրման արդյունքում կարելի է հասնել ՔԱԱ լավ արդյունքների մինչև 20 մմ քարերի դեպքում, բացառությամբ ստորին բաժակի քարերի [242,244]: Էնդոուրոլոգիան համարվում է այլընտրանքային բուժման մեթոդ, քանի որ կրկնակի միջամտությունների անհրաժեշտությունը քիչ է և հետագայում ավելի կարճ ժամկետում են դառնում քարից ազատ վիճակ: >20 մմ չափսի քարերի բուժումը անհրաժեշտ է սկսել ՊՆԼ մեթոդով, քանի որ ՀԱՔ-ի դեպքում հաճախ պահանջվում են բազմաթիվ բուժումներ, և առկա է միզաձորանի խցանման (կոլիկա կամ քարե արահետ) ռիսկ՝ լրացուցիչ միջամտության անհրաժեշտությամբ (նկար 3.4.1) [167]: Ռետրոգրադ երիկամային վիրահատությունը (RIRS, ՌԵՎ) խորհուրդ չի տրվում որպես առաջին գծի բուժում >20 մմ չբարդացած քարերի դեպքում, քանի որ ՔԱԱ ցածր է, և առկա է հետագա միջամտությունների անհրաժեշտություն [245-247]: Այնուամենայնիվ, կարող է լինել առաջին գծի բուժման տարբերակ այն դեպքում, երբ ՊՆԼ տարբերակ չէ կամ հակացուցված է:

3.4.2.3.2. Երիկամի ստորին բևեռի քարեր

ՀԱՔ հետո քարից մաքրման աստիճանը ստորին բաժակի քարերի դեպքում ավելի ցածր է, քան այլ ներերիկամային տեղակայման դեպքում: Չնայած այդ դեպքում քարի դեզինտեգրացիայի (քարափշրման) արդյունավետությունը չի նվազում, համեմատած այլ տեղակայման քարերի հետ, ֆրագմենտները հաճախ մնում են բաժակների մեջ և նպաստում են ռեցիդիվային քարերի առաջացմանը:

Հետազոտությունների արդյունքների համաձայն ստորին բևեռի քարերի ՀԱՔ-ի դեպքում ՔԱԱ կազմում է 25-95%: Ներկայիս որոշ հետազոտություններ առաջարկվում են էնդոսկոպիկ միջամտությունը որպես նախընտրելի մեթոդ, նույնիսկ 1 սմ-ից փոքր քարերի դեպքում [167, 240-244, 247-254]:

Ստորև ներկայացված գործոնները կարոն են բացասական ազդեցություն ունեն քարերի բուժման արդյունավետության վրա.

- սուր ինֆուզիոն փոփոխություններ (բաժակի վզիկի և ավազանի միջև) անկյուն;
- երկար բաժակ;

- բաժակի նեղ վզիկ (նեղ ինֆունդիբուլում) (Աղյուսակ 3.4.4) [140, 250]:

Այլ անատոմիական պարամետրերը դեռևս պետք է ապացուցվեն: Նպաստող միջոցառումների մակարդակը, ինչես օրինակ ինվերսիան, վիբրացիան կամ հիդրատացիան, գտնվում են քննարկման թույլում:

Աղյուսակ 3.4.4. Ստորին բաժակի քարերի համար ՀԱՔ արդյունավետության անցանկալի գործոններ [140, 250, 251, 255]:

Գործոններ, որոնք ՀԱՔ դարձնում են քիչ հավանական

Հարվածաալիքային կայուն քարեր (կալցիումի օքսալատ մոնոհիդրատ, բրուշիտ, կամ ցիստին).

Ուղիղ ինֆունդիբուլոպելվիկալ անկյուն.

Երկար ստորին բլեռի բաժակ (>10 մմ).

Նեղ ինֆունդիբուլում (բաժակի նեղ վզիկ) (<5 մմ).

Եթե առկա են բացասական գործոններ (պրեդիկտորներ) ՀԱՔ համար, ՊՆԼ և RIRS կարող են համարվել ողջամիտ այլընտրանք, նույնիսկ փոքր քարերի դեպքում [248]: Ռետրոգրադ երիկամային վիրահատությունը կարող է ունենալ ՀԱՔ համեմատելի արդյունավետություն [167,244]: Կլինիկական հետազոտությունների համաձայն՝ RIRS-ի քարից մաքրման աստիճանը ավելի բարձր է, համեմատած ՀԱՔ-ի հետ, սակայն ինվազիվությունը բարձր է: Կախված վիրահատողի հմտությունից, մինչև 3 սմ քարերը կարող է բուժել RIRS մեթոդով [250, 256-258]: Այնուամենայնիվ հաճախ անհրաժեշտ է լինում հետագա միջամտության:

Բարդ քարերի դեպքում, բաց կամ լապարոսկոպիկ մոտեցումը համարվում են հնարավոր այլընտրանք (տես համապատասխան գլուխը):

3.4.2.3.3. Խորհուրդներ երիկամի քարերի ակտիվ հեռացման պրոցեդուրայի ընտրության համար


խորհուրդներ	ԽԱ
խորհուրդ է տրվում ՀԱՔ և էնդոուրոլոգիա (ՊՆԼ, RIRS) որպես բուժման տարբերակ, երիկամի ավազանի և վերին կամ միջին բաժակի <2 սմ քարերի դեպքում	B
>2 սմ մեծ քարերի դեպքում կատարել ՊՆԼ որպես առաջին գծի բուժում	B
Երբ ՊՆԼ տարբերակ չէ, մեծ քարերի (>2 սմ) բուժման դեպքում խորհուրդ է տրվում ճկուն ՈՒՌՍ կամ ՀԱՔ: Սակայն, այդպիսի դեպքերում հետագա միջամտության և միզաձորանային ստենոտի տեղադրման անհրաժեշտության ռիսկը բարձր է:	B
Ստորին բևեռի դեպքում, խորհուրդ է տրվում ՊՆԼ կամ RIRS, նույնիսկ >1 սմ քարերի դեպքում, երբ ՀԱՔ արդյունավետությունը սահմանափակված է (կախված ՀԱՔ-ի համար ցանկալի և ոչ ցանկալի գործոններից)	

ՊՆԼ = պերկուտան նեֆրոլիթոտոմիա; RIRS ՌՆԵՎ=ռետրոգրադ ներերիկամային վիրահատություն; ՀԱՔ = հարվածաալիքային քարափշրում; ՈՒՌՍ = ուրեթերոստոսկոպիա:

Նկար 3.4.1: Երիկամի քարի բուժման ընթացակարգ

Երիկամի քար

(բոլորը, իսկ ստորին
բաժակի քարերը 10-20
մմ)




10-20 մմ → ՀԱՔ կամ
Էնդոուրոլոգիա

<10 մմ → 1. RIRS կամ ՀԱՔ
2. ՊՆԼ

Ստորին բաժակի քար

>20 մմ և <10 մմ. ինչպես
վերևում



Էնդոուրոլոգիա տերմինը ներառում է բոլոր ՊՆԼ և ՌԻՌՍ միջամտությունները

ՊՆԼ = պերկուտան նեֆրոլիթոտոմիա; RIRS ՌՆԵՎ=ռետրոգրադ ներերիկամային վիրահատություն; ՀԱՔ = հարվածաալիքային քարափշրում; ՌԻՌՍ = ուրեթերոռենոսկոպիա:

3.4.3. Միզածորանի քարերի սպեցիֆիկ մենեջմենթ

3.4.3.1. Բուժման տեսակները

3.4.3.1.1. Կոնսերվատիվ բուժում/հսկողություն

Չափսից կախված քարի ինքնուրույն թափվելու վերաբերյալ կան սահմանափակ տվյալներ [259]: Հաստատված է, որ մինչև 4 մմ քարերի 95% թափվում են 40 օրվա ընթացքում [6]:

Հսկողությունը թույլատրելի է տեղեկացված այն հիվանդների մոտ, ում մոտ չի զարգացել բարդություն (ինֆեկցիա, կայուն ցավ, երիկամի ֆունկցիայի վատացում):

Խորհուրդներ	ԱՄ	ԽԱ
Այն հիվանդների մոտ, որոնց մոտ ախտորոշվել է փոքր* միզածորանային քար, եթե ակտիվ հեռացումը ցուցված չէ (Բաժին 3.4.2.3), պարբերաբար հետազոտությամբ հսկողությունը համարվում է առաջնային բուժման տարբերակ:	1a	A
Այդ հիվանդների խորհուրդ է տրվում համապատասխան դեղորայքային բուժում՝ հսկողության ընթացքում նպաստելով քարի թափվելուն: *Տես դասակարգման տվյալները [6]:		

Հիմնվելով մատչելի հավաստի տվյալների վրա՝ քարի ճշգրիտ սահմանային չափսը, որը կարող է ինքնուրույն թափվել, հնարավոր չէ ներկայացնել: ≤ 10 մմ կարող է համարվել լավագույն չափսը [6]: Ուստի, աշխատանքային խումբը որոշել է քարի չափսը չընդգրկել այս խորհրդատվության մեջ և սահմանափակել “փոքր” տերմինը, առաջարկելով ≤ 6 մմ չափսը:

Աշխատանքային խումբը գիտակցում է այն փաստը, որ քարի ինքնուրույն հեռացման հավանականությունը նվազում է քարի չափսի մեծությունից կախված և, որ անհատական հիվանդների մոտ առկա են տարբերություններ:

3.4.3.1.2. Դեղորայքային բուժում, դեղորայքային քարահեռացող բուժում (ԴՔԲ)

Դեղորայքային քարահեռացնող բուժումը պետք է կիրառել միայն տեղեկացված հիվանդներին: Բուժումը անհրաժեշտ է ընդհատել, երբ զարգանում է բարդություններ (ինֆեկցիա, կայուն ցավ, երիկամի ֆունկցիայի վնասում): Երբ ԴՔԲ-ի ժամանակ կիրառվում է ալֆա-բլոկատորներ, հնարավոր են կողմնակի արդյունքներ, օր. ռետրոգրադ էյակուլյացիա և հիպոտենզիա [82]:

Մետա-անալիզները ցույց են տվել, որ միզաձորանի քարով այն հիվանդներին, ում նշանակվել է ալֆա-բլոկատորներ կան նիֆեդիպին, քարերը թափվում են ավելի քիչ կոլիկայի էպիզոդներով, քան այն հիվանդները, որոնք չեն ստացել նմանատիպ բուժում [82, 261]:

Փոքր, մեկ կենտրոնում կատարված հետազոտության վրա հիմնված մետա-անալիզը պետք է մեկնաբանվի զգուշությամբ, նույնիսկ եթե արդյունքը ստատիստիկորեն նշանակալի է: Այս սահմանափակումներով հանդերձ, ԴՔԲ խորհուրդ է տրվում ԵՎՈԻԱ-ի միզաքարային հիվանդության ուղեցույցի աշխատանքային խմբի կողմից: Ներկա հավաստիությունը հաստատելու նպատակով ահնրաժեշտ է հետազա մեծ, մուլտիցենտր ՌՎՀ: Պիկարդի և այլոց կողմից ներկայիս հրատարակված տվյալները, որոնք հիմնված են մեթոդաբանորեն բարձր որակի, ճշգրիտ գաղտիությամբ հետազոտությունների վրա, ցույց են տալիս, որ տամսուլոսինը և նիֆեդիպինը արդյունավետ չեն միզաձորանային քարի պատճառով միզաձորանային կոլիկայի ակնկալվող մենեջմենթի մեջ [262]: Չնայած որ հիմնականում չեն ուսումնասիրվել, այս հետազոտությունը լուրջ հարց է առաջացնում ԴՔԲ արդյունավետության մեջ ալֆա- կամ կալցիումական խողովակների բլոկատորների կիրառությունը; ոչ միայն միզաձորանային քարերի կամ ֆրագմենտների արագ հեռացման համար, այլ նաև ցավի սահմանափակման հատկության համար:

Խորհուրդ	ԱՄ
Փոքր եզակի կենտրոնում արված մեծ քանակով հետազոտություններում ապացուցել են, որ ԴՔԲ արագացնում է միզաձորանի քարերի և ՀԱՔ առաջացած ֆրագմենտների ինքնուրույն թափումը, և սահմանափակում է	1a

ցավը [82, 119, 166, 261, 263-267]:	
Լայնածավալ մուլտիցենտր բարձր որակով կատարված հետազոտությունները ապացուցել են, որ տամսուլոգինը և նիֆեդիպինը չունեն քարահեռացնող արդյունք և չեն սահմանափակում միզածորանային քարերով հիվանդների ցավը:	1b
Սահմանափակ քանակով հիվանդների հետազոտությունների վրա հիմնվելով [268, 269] (<S. 1b), չկա խորհուրդ ԴՔԲ սխեմայում կորտիկոստերոիդները ալֆա-բլոկատորների հետ միասին կիրառության համար:	1b
Ներկայումս չկան հավաստի տվյալներ, որոնք կհաստատեն ԴՔԲ ժամանակ կորտիկոստերոիդները որպես մոնոթերապիա նշանակման արդյունավետությունը: Տվյալներն անբավարար են կորտիկոստերոիդները ալֆա-բլոկատորների հետ զուգակցված որպես արագացմանը նպաստող լրացուցիչ միջոց կիրառման համար [268-270]	1b
Հիվանդները, որոնք որոշել են փորձել ինքնուրույն թափել կամ ԴՔԲ, պետք է ցավը լավ վերահսկեն, չլինի սեպսիսի կլինիկական նշաններ, և երիկամային ֆունկցիան լինի ադեկվատ:	

ԴՔԲ համար խորհուրդներ

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
ԴՔԲ ժամանակ խորհուրդ է տրվում ալֆա-բլոկատորներ, որպես բուժման տարբերակ	1a	C
Հիվանդներին անհրաժեշտ է տեղեկացնել ներկայիս մեծածավալ մուլտիցենտր հետազոտություններում անբավարար արդյունավետության վերաբերյալ, ԴՔԲ-ի հետ կապված վտանգների մասին, ներառյալ դեղորայքի	1b	A*

կողմնակի էֆեկտները, ինչես նաև տեղեկացնել հիվանդներին, որ ալֆա-բլոկատորները նշանակվում են off-label (դեղը նշանակվում է մի հիվանդության բուժման համար, որը նշված չէ դեղի ինստրուկցիայում)		
Հսկել հիվանդին կարճ ժամկետներում՝ դիտարկելով քարի դիրքը և գնահատելով հիդրոնեֆրոզը	4	A

† Հայտնի չէ, թե տամսուլոզինը վնասում է արդյոք մարդու սաղմը կամ այն հայտնաբերվում է կրծքի կաթի մեջ:

*Թարմացված տվյալները հիմնված են աշխատանքային խմբի ընդհանուր կարծիքի վրա:

**ԴՔԲ երեխաների մոտ չենք կարող խորհուրդ տալ, քանի որ այս պոպուլյացիայում տվյալները սահմանափակ են:

ԴՔԲ= դեղորայքային քարահեռացնող բուժում:

3.4.3.1.2.1. Դեղորայքային քարահեռացնող բուժումը հեռահար հարվածաալիքային քարափշրումից հետո

ՌՎՀ և մետա-անալիզները ցույց են տվել, որ ԴՔԲ նշանակումը միզաձորանի կամ երիկամի քարի ՀԱՔ-ից հետո կարող է արագացնել քարաթափումը և բարձրացնել ՔԱԱ և նվազեցնել ցավազրկող պրեպարատների անհրաժեշտությունը [163, 166, 262] (ՀՏ. 1a):

3.4.3.1.2.2. Դեղորայքային քարահեռացնող բուժումը ուրեթերոսկոպիայից հետո

Դեղորայքային քարահեռացնող բուժումը հոլմիումային (Ho:YAG) լազերային լիթոտրիպսիայից հետո բարձրացնում է ՔԱԱ և նվազեցնում է կոլիկաների էպիզոդները [271] (ՀՏ. 1b),

3.4.3.1.2.3. Դեղորայքային քարահեռացնող բուժումը և միզածորանային ստենտները (տես 3.4.3.1.4.1.2)

3.4.3.1.2.4. Դեղորայքային քարահեռացնող բուժման տևողությունը

Շատ հետազոտություններում ԴԲԲ ունի 1 ամսվա տևողություն: Ներկայումս չկան մատչելի տվյալներ, որոնք կհաստատեն այլ ժամանակահատվածներ:

3.4.3.1.3. Հարվածաալիքային քարափշրում

Ավելի լավ պրակտիկայի համար տես բաժին 3.4.2.1.4.1.2 (Երիկամի քարեր)

Ստենտավորում

Ըստ ԵՌԻԱ-ի 2007թ ուղեցույցների միզածորանի քարերի մենեջմենտի խորհուրդ չի տրվում ռուտին ստենտավորումը նախքան ՀԱԲ-ը[6]: Ստենտի առկայության պայմաններում հիվանդները հաճախ գանգատվում են դիզուրիկ երևույթներից, հաճախամիզությունից և վերցայլային ցավերից [272]:

Խորհուրդ

ԱՄ ԽԱ

Միզածորանի քարերի ՀԱԲ-եղանակով բուժման դեպքում ցուցված չէ ռուտին ստենտավորում: 1b A

ՀԱԲ=հարվածաալիքային քարափշրում

3.4.3.1.4. Էնդոուրոլոգիական տեխնիկա

3.4.3.1.4.1 Ուրեթերոսկոպիա (URS)

Ներկայումս կոշտ/ռիգիդ/ ուրեթերոռենոսկոպի տրամաչափի համար ստանդարտ է համարվում < 8Ֆ: Կոշտ ՈՒՌՍ-ը կարող է օգտագործվել ամբողջ միզածորանի երկարությամբ [6]: Սակայն տեխնիկայի զարգացումը, գործիքների որակի բարձրացումը, թվային տեսախցիկների առկայությունը նպաստել են միզածորանում նաև ճկուն ուրեթերոռենոսկոպի կիրառմանը[210]:

3.4.3.1.4.1.1 Հակացուցումներ

Բացի ընդհանուր խնդիրներից, օրինակ, կապված անզգայացման կամ չբուժված միզուղիների ինֆեկցիայի հետ, ուրեթերոռենոսկոպիա կարելի է կատարել բոլոր հիվանդներին առանց որևէ հատուկ հակացուցումների:

3.4.3.1.4.1.2 Լավագույն կլինիկական փորձը ուրեթերոռենոսկոպիայում (URS)

Մուտք դեպի վերին միզուղիներ

Միջամտությունների մեծամասնությունը կատարվում են ընդհանուր անզգայացման ներքո, բայց հնարավոր է նաև տեղային կամ ողնուղեղային ցավազրկումը:

Ներերակային սեդացիան հարմար է միզաձորանի դիստալ հատվածի քարերով կին հիվանդների համար [273]:

Անտեգրադ URS-ը միզաձորանի պրոքսիմալ հատվածի խոշոր քարերին հասնելու տարբերակներից մեկն է [274] (Section 3.4.3.1.4.2):

Անվրաժեշտության ասպեկտները

Վիրահատական սրահում անհրաժեշտ է ունենալ ֆլյուրոսկոպիկ սարքավորում: Մենք խորհուրդ ենք տալիս կիրառել ուղեկցորդ, թեև որոշ խմբեր ցույց են տալիս, որ URS-ը կարող է կատարվել առանց դրա [275,276]:

Անրաժեշտության դեպքում բալոնային և պլաստիկ լայնիչները /դիլատատորներ/ պետք է հասանելի լինեն վիրահատարանում:

Նախքան կոշտ ուրեթերոսկոպիան կարող է օգտակար լինել օպտիկական դիլատացիայի նպատակով, հետագա ճկուն //flexible// URS համար: Եթե միզաձորան մուտք գործելն անհնար է, ապա նախքան URS-ը, ալտերնատիվ տարբերակ է 7-14 օրով JJ-ստենտի տեղադրումը:

Խորհուրդ

ԽԱ

Տեղադրեք ուղեկցորդը

C

Միզաձորանի մուտքի պապյան

Հիդրոֆիլային կաղապարով միզածորանի մուտքի պատյանները, որոնք հասանելի են տարբեր տրամաչափերով /ներքին տրամագիծը մեծ 9Ֆ-ից /, կարող են տեղադրվել ուղեկցորդի օգնությամբ դեպի միզածորանի պրոքսիմալ հատվածը:

Միզածորանի մուտքի պատյանները թույլ են տալիս հեշտությամբ բազմաթիվ անգամ մուտք գործել դեպի վերին միզուղիներ, այդպիսով զգալի հեշտացնելով URS-ը: Միզածորանի մուտքի պատյանների կիրառումը բարելավում է տեսանելիությունը՝ ապահովելով շարունակական արտահոսք, նվազեցնում է ներերիկամային ճնշումը և կրճատում է վիրահատության պոտենցիալ տևողությունը [277,278]:

Միզածորանի մուտքի պատյանները տեղադրելիս հնարավոր է վնասել միզածորանը, սակայն նախապես ստենտավորված միզածորանների դեպքում վնասման ռիսկը բավականին ցածր է [279]: Երկարաժամկետ հետևանքների մասին հասանելի տվյալներ չկան: Միզածորանի մուտքի պատյանների կիրառումը կախված է վիրաբույժի նախընտրությունից:

Քարի հեռացում

URS-ի նպատակը քարի լիովին հեռացումն է: <<Փոշիացրու և գնա>> ռազմավարությունը պետք է սահմանափակվի խոշոր /երիկամների/ քարերի բուժման դեպքերով:

Քարերը կարող են հեռացվել էնդոսկոպիկ բռնիչներով կամ զամբյուղներով: Ճկուն ՈՒՌՍ-ի պարագայում կարող են օգտագործվել միայն նիտինոլից պատրաստած զամբյուղներ [281]:

Խորհուրդ

ՀՄ

ԽԱ

Մի կատարեք զամբյուղով քարահեռացում, առանց քարի 4
էնդոսկոպիկ տեսանելիության (կույր basketing) A*

**Նորացված է պանելային կոնսենսուսով*

Ինֆորակորպորալ քարափշրում

Ամենաարդյունավետ քարափշրման համակարգ է համարվում Ho:YAG լազերը, որը ուրետերոսկոպիայի և ճկուն նեֆրոսկոպիայի համար դարձել է ոսկե ստանդարտ, քանի որ արդյունավետ է բոլոր տեսակ քարերի դեպքում [282,283]: Ռիզիկ ՌԻՌՍ-ի ժամանակ պնևմատիկ և ուլտրաձայնային քարափշրող համակարգերը կարող են կիրառվել բարձր ֆրագմենտացիոն էֆեկտիվությամբ [284,285]:

Այնուամենայնիվ, քարի տեղաշարժը /միգրացիա/ դեպի երիկամ տարածված խնդիր է, որը կարող է կանխվել քարից պրոքսիմալ տեղադրելով հատուկ հակամիգրացիոն սարք [286]:

Խորհուրդ

ՀՄ

ԽԱ

Կիրառեք Ho:YAG-լազերը ճկուն ՌԻՌՍ-ի դեպքում

3

B

Ho:YAG-հոլմիում: Իտրի-ալյումինիում-գրանատ: ՌԻՌՍ-ուրետերոռենոսկոպիա

Ստենտավորում ՌԻՌՍ-ից առաջ և հետո

ՌԻՌՍ-ից առաջ անհրաժեշտ չէ ռուտին ստենտավորում: Սակայն, նախորոք ստենտավորումը հեշտացնում է քարի ուրետերոսկոպիկ մենեջմենտը, բարելավում է SFR/stone free/-ցուցանիշը, և նվազեցնում է բարդությունները [287]:

Ռանդոմիզացված պրոսպեկտիվ հետազոտությունները ցույց են տվել, որ չբարդացած ՌԻՌՍ-ից հետո /քարի լիովին հեռացում/ ռուտին ստենտավորումը անհրաժեշտ չէ: Ստենտավորումը հաճախ կարող է լինել հետվիրահատական ճնշվածության պատճառ [288-290]: Միզածորանային կաթետերի կարճաժամկետ տեղադրումը /1օր/ նույնպես կարող է կիրառվել նմանատիպ արդյունքով [291]:

Ստենտն անհրաժեշտ է տեղադրել բարդությունների բարձր ռիսկի դեպքում /միզածորանի վնասվածք, ռեզիդուալ ֆրագմենտներ, արյունահոսություն, պերֆորացիա, ՄՈՒԻ, կամ հղիություն/ և բոլոր կասկածելի դեպքերում, սթրեսային արտակարգ վիճակներից խուսափելու համար: Ստենտավորման իդեալական տևողությունն անհայտ է: Ռիսկոլոգների մեծամասնությունը նախընտրում են 1-2 շաբաթ ՌԻՌՍ-ից հետո:

Ալֆա-բլոկատորները նվազեցնում են ստենտի հետ կապված անհանգստությունը և բարձրացնում են տանելիությունը [292,293]: Վերջերս հրապարակած մետա-անալիզը ապացույցներ է տրամադրում, որ տամսուլոզինը բարելավում է ստենտի տանելիությունը [294]:

Փաստերի ամփոփում

ՀՄ

Չբարդացած ՈԻՌՄ-ից հետո ստենտավորման անհրաժեշտություն 1a
չկա

Ալֆա-բլոկատորները նվազեցնում են ստենտի հետ կապված 1b
սիմպտոմները

ՈԻՌՄ-ուրեթերոռենոսկոպիա

3.4.3.1.4.1.3 Բարդություններ

Ընդհանուր առմամբ ՈԻՌՄ-ից հետո բարդությունների մակարդակը կազմում է 9-25% [6,295,296]: Դրանք հիմնականում աննշան են և միջամտություն չեն պահանջում:

Միզածորանի ավուսիան /պոկում/ և ստրիկտուրան հազվադեպ են հանդիպում (< 1%): Բարդությունների առումով ամենակարևոր ռիսկի գործոնը միզածորանի նախորդող պերֆորացիան է:

3.4.3.1.4.2 Պերկուտան անտեգրադ ուրետերոսկոպիա

Միզածորանի քարերի պերկուտան անտեգրադ հեռացումը կատարվում է հատուկ դեպքերում, ինչպես օրինակ պրոքսիմալ միզածորանային խոշոր, մխրճված քարերի դեպքում՝ երիկամի հավաքող համակարգի լայնացումով [297], կամ, երբ միզածորանը հասանելի չէ ռետրոգրադ միջամտությունների համար [274,298-301]:

Խորհուրդ

ԽԱ

Կիրառեք միզածորանի քարերի պերկուտան անտեգրադ B հեռացումը իբրև ալտերնատիվ մեթոդ, երբ ՀԱՔ-ը ցուցված չէ կամ անարդյունավետ է, և երբ վերին միզուղիները հասանելի չեն ռետրոգրադ ՈՒՌՍ-ի համար

ՀԱՔ-հարվածաալիքային քարափշրում; ՈՒՌՍ-ուրետերոռենոսկոպիա

3.4.3.1.5. Միզածորանային քարերի լապարոսկոպիկ հեռացում

Որոշ հետազոտություններ հաղորդում են քարերի լապարոսկոպիկ հեռացման մասին (Section 3.4.2.1.4.3): Սովորաբար, այս վիրահատությունը համարվում է պահուստային/ռեզերվային/ հատուկ դեպքերի համար, սակայն, առկա տվյալները թույլ չեն տալիս անցկացնել համեմատական ՀԱՔ-ի և ՈՒՌՍ-ի հետ: Սա առավել ինվազիվ միջամտություն է, որը տալիս է բարձր SFRs ցուցանիշ [\[224\]](#):

Խորհուրդ	ՀՄ	ԽԱ
Կատարեք լապարոսկոպիկ ուրետերոլիտոտոմիա մխրճված խոշոր քարերի դեպքում, երբ էնդոսկոպիկ լիտոտրիպսիան կամ ՀԱՔ-ն արդյունավետ չեն	2	B

ՀԱՔ- հարվածաալիքային քարափշրում

3.4.3.2. Միզածորանային քարերի ակտիվ հեռացման ցուցումներ [\[6,259,302\]](#)

Միզածորանի քարերի ակտիվ հեռացման ցուցումներն են՝

- Ցածր հավանականությամբ ինքնուրույն հեռացող քարեր
- Շարունակական ցավ, չնայած ադեկվատ ցավազրկմանը
- Կայուն խցանում
- Երիկամային անբավարարություն /երկկողմանի խցանում, միակ երիկամ/

Ընդհանուր առաջակությունների և նախազգուշացումների համար նայեք 3.4.1.3 բաժինը

Ճարպակալումը կարող է պատճառ դառնալ ՀԱԲ-ի և ՊՆԼ-ի ցածր արդյունավետության և ազդի բուժման մեթոդի ընտրության վրա:

Ապացույցների ամփոփում	ՀՄ
Արտահայտված ճարպակալման դեպքում ՈՒՌՍ-ը բուժման ավելի նախընտրելի տարբերակ է, քան ՀԱԲ-ը:	2b

ՀԱԲ-հարվածաալիքային քարափշրում; ՈՒՌՍ-ուրետերոռենոսկոպիա

3.4.3.2.5.1. Արյան մակարդելիության խանգարում

ՈՒՌՍ-ը կարող է կատարվել արյան մակարդելիության խանգարումներով հիվանդներին, չափավոր բարձրացնելով բարդությունների վտանգը (նայել նաև 3.4.1.3 բաժինը) [[105,108](#)]:


3.4.3.3. Միզածորանային քարերի ակտիվ հեռացման եղանակի ընտրությունը

Ընդհանուր առմամբ, միզածորանային քարերի դեպքում, SFR-ցուցանիշը ՈՒՌՍ-ից և ՀԱԲ-ից հետո համադրելի են: Սակայն, խոշոր քարերի դեպքում ՈՒՌՍ-ի օգնությամբ << stone-free>> վիճակը ավելի արագ հասանելի է: Չնայած ՈՒՌՍ-ն արդյունավետ է միզածորանի քարերի դեպքում, բայց ունի ավելի բարձր բարդությունների հավանականություն: Սակայն, ներկա էնդոուրոլոգիական դարաշրջանում, ուրետերոսկոպիայից հետո բարդությունների հաճախականությունը և հիվանդացությունը զգալի նվազել են [[303,304](#)]:


Այս տվյալները հաստատվում են միզաքարային հիվանդության ուղեցույցի աշխատանքային խմբի կատարած վերջին համակարգված վերանայման նախնական արդյունքներով [[305](#)]: ՀԱԲ-ի համեմատ միզածորանի պրոքսիմալ քարերի ուրետերոսկոպիկ մանենջմենտը զուգակցվում է զգալի բարձր SFR-ցուցանիշով, ցածր կրկնակի և լրացուցիչ միջամտության հավանականությամբ: Սակայն, ուրետերոսկոպիկ միջամտությունը ուղեկցվում է բարդությունների

համեմատաբար բարձր մակարդակով և համեմատաբար երկարատև հոսպիտալիզացիայով: Հետագայում անհրաժեշտ են պատշաճ կազմակերպած բավարար հզորությամբ ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություններ, պարզելու բուժման երկու մեթոդների էֆեկտիվությունը, բարդությունները և բուժման հետ կապված այլ պարամետրերը:

Նկար 3.4.2: Առաջարկվող բուժման տարբերակները (եթե ցուցված է քարի ակտիվ հեռացում) (ԽԱ A*)



Դիստալ միզաձորանային քար



**Թարմացված է աշխարանքային խմբի կոնսենսուսով*

ՀԱՔ-հարվածա-ալիքային քարափշրում; ՈՒՌՍ-ուլտրաթերոռենոսկոպիա

Խորհուրդ	ԽԱ
Տեղեկացրեք հիվանդներին, որ ՈՒՌՍ-ը, որպես միանվագ միջամտություն ունի առավել հնարավորություն հասնելու stone-free կարգավիճակին	A*
Տեղեկացրեք հիվանդներին, որ ՈՒՌՍ-ն ունի համեմատաբար բարձր բարդությունների ռիսկ, քան ՀԱՔ-ը	A*

**Թարմացված է աշխարանքային խմբի կոնսենսուսով*

ՀԱՔ-հարվածա-ալիքային քարափշրում; ՈՒՌՍ-ուլտրաթերոռենոսկոպիա

3.4.4. Ռեզիդուալ քարերով հիվանդների մենեջմենտը

Երիկամի ռեզիդուալ քարերի կլինիկական ռիսկը հետևյալն է՝

- նոր քարերի գոյացում (հետերոգեն կորիզագոյացում)
- մշտական ՄՈՒԻ
- ֆրագմենտների տեղաշարժ օբստրուկցիայի և ախտանիշների առաջացումով կամ առանց դրանց [\[171,306,307\]](#).

Խորհուրդ	ԱՄ	ԽԱ
Որոշեք կենսաքիմիական ռիսկի գործոնները և համապատասխան քարառաջացման կանխարգելումը ռեզիդուալ ֆրագմենտներով հիվանդների մոտ [171,307,308] .	1b	A
Հետևեք ռեզիդուալ ֆրագմենտներ կամ քարեր ունեցող հիվանդներին, պարբերաբար վերահսկեք հիվանդության ընթացքը	4	C

Ինֆեկցիոն քարերի կապակցությամբ բուժված ռեզիդուալ ֆրագմենտներ ունեցող հիվանդների մոտ ռեցիդիվի ռիսկն ավելի բարձր է, քան այլ քարերի դեպքում [\[308\]](#): Բոլոր տեսակի ռեզիդուալ քարեր ունեցող հիվանդների 21-59%-ը 5 տարվա ընթացքում կարիք է ունենում բուժման: 5 մմ-ից մեծ ֆրագմենտները ավելի մեծ հավանականություն ունեն միջամտության, քան ավելի փոքրները: [\[171,306,309\]](#):

3.4.4.1. Թերապիա

Ռեզիդուալ քարերի ակտիվ հեռացման ցուցումները և միջամտության եղանակի ընտրությունը հիմնված է նույն չափանիշների վրա, որոնք օգտագործվում են առաջնային քարերի բուժման համար (Բաժին 3.4.2.4) և ներառում է կրկնակի ՀԱՔ-ը [\[310\]](#):

Եթե միջամտություն չի պահանջվում, ապա քարի բաղադրության, հիվանդների ռիսկի խմբի և մետաբոլիկ հետազոտությունների համաձայն

կատարված դեղորայքային բուժումը կարող է կանխել ռեզիդուալ ֆրագմենտների աճը [311-313]:

Ապացույցների ամփոփում

ՀՄ

Ինվերսիոն թերապիան, մեխանիկական պերկուսիոն մանևրի հետ 1b միասին, խթանված դիուրետիկ պայմաններում նպաստում է ստորին բաժակի բավարար կազմալուծված քարի արտանկմանը [314]:

Խորհուրդ

ՀՄ

ԽԱ

ՀԱՔ-ից և ՈՒՌՍ-ից հետո մնացորդային ֆրագմենտների 1a առկայության դեպքում առաջակեր ԴՔԲ օգտագործելով ալֆա-պաշարիչներ քարի ֆրագմենտներից ազատվելու նպատակով

A

ԴՔԲ- դեղորայքային քարահեռացնող բուժում, ՀԱՔ-հարվածալիքային քարափշրում; ՈՒՌՍ-ուրեթերոռենոսկոպիա

Աղյուսակ 3.4.5 Խորհուրդ ռեզիդուալ ֆրագմենտների բուժման վերաբերյալ

Ռեզիդուալ ֆրագմենտներ, քարեր (մաքսիմալ տրամագիծ)	Սիմպտոմատիկ ռեզիդուալներ	Ասիմպտոմատիկ ռեզիդուալներ	ՀՄ	ԽԱ
< 4-5 մմ	Քարի հեռացում	Ողջամիտ է հետևելը (կախված է ռիսկի գործոններից)	4	C

3.4.5. Հատուկ խմբերի հիվանդների մենեջմենտը

3.4.5.1 Հղիության ընթացքում միզաքարային հիվանդության և դրա հետ կապված խնդիրների մենեջմենտը

Ուրոլիթիազով հղիների կլինիկական մենեջմենտը կոմպլեքսային է և պահանջում է սերտ համագործակցություն հիվանդի, ռադիոլոգի, գինեկոլոգի և ուրոլոգի միջև: Ախտորոշման համար նայեք բաժին 3.3.1:

Եթե քարի սպոնտան ինքնահեռացում տեղի չի ունեցել, կամ զարգացել են բարդություններ (օրինակ ծննդաբերության վաղաժամ խթանում), ապա անհրաժեշտ է տեղադրել միզածորանային ստենտ կամ նեֆրոստոմա [315-317]: Ցավոք, հաճախ այսպիսի սպասողական բուժումը դժվար տանելի է և պահանջում է բազմաթիվ անգամ ստենտերի և ստոմաների փոխարինում, արագ զարգացող ինկրուստացիայի պատճառով: Այս իրավիճակներում ուրեթերոսկոպիան ընդունելի այլընտրանք է: Չնայած նրան, որ հղիության ընթացքում հնարավոր է քարերի ռետրոգրադ էնդոսկոպիկ և պերկուտան հեռացումը, սակայն այն մնում է անհատական որոշման հարց և պետք է կատարվի բարձր մասնագիտացված կենտրոններում [321]:

Հղիությունը մնում է բացարձակ հակացուցում ՀԱԲ-ի համար.

Ապացույցների ամփոփում	ՀՄ
Եթե միջամտության անհրաժեշտություն է առաջանում, ապա հասանելի հիմնական տարբերակ է միզածորանային ստենտի կամ պերկուտան նեֆրոստոմայի տեղադրումը:	3
Երկարատև ստենտավորումից/դրենավորումից խուսափելու համար ուրեթերոսկոպիան ընդունելի տարբերակ է:	1a

Ապացույցների ամփոփում	ՀՄ
Անընդհատ հսկողությունն անհրաժեշտ է մինչև քարի վերջնական հեռացումը, քանի որ հղիության ժամանակ բարձր է ստենտի ինկրուստացիայի հավանականությունը:	

3.4.5.2. Որևէ եղանակով մեզի արտաբերմամբ (դերիվացիայով) հիվանդների քարերի մենեջմենտը

3.4.5.2.1 Էթիոլոգիա

Մեզի արտաբերումով հիվանդների մոտ երիկամների հավաքող համակարգում, միզաձորանում, կոնդուիտներում կամ ուրոռեզերվուարներում քարերի առաջացման

Խորհուրդ	ԽԱ
Հղիների մոտ ուրոլիթիազի չբարդացած դեպքերը բուժեք կոնսերվատիվ եղանակով (բացառությամբ այն դեպքերի, երբ կան կլինիկական ցուցումներ միջամտության համար)	A

ռիսկը բարձր է [\[322-324\]](#): Մետաբոլիկ գործոնները (հիպերկալցիուրիա, հիպերօքսալուրիա և հիպոցիտրատուրիա), ուրեազա-արտադրող բակտերիաներով առաջացած ինֆեկցիաները, օտար մարմինները, լորձարտադրությունը և մեզի կանգը նպաստում են քարերի առաջացմանը [\[325\]](#) (Բաժին 3.1.3): Ուսումնասիրություններից մեկը ցույց է տվել, որ ՊՆԼ-ից հետո մեզի արտաբերումով հիվանդների մոտ վերին միզուղիների քարերի ռեցիդիվը 5 տարվա ընթացքում կազմում է 63% [\[326\]](#):

3.4.5.2.2 Մենեջմենտ

Վերին միզուղիների մանր քարերը կարող են արդյունավետ բուժվել ՀԱԲ-ով [\[299,327\]](#): Հիմնականում անհրաժեշտ են լինում էնդոուրոլոգիական

միջամտություններ stone-free կարգավիճակին հասնելու համար [298]: Երկար, պտտված կոնդուիտներով հիվանդների կամ անտեսանելի միզածորանային բացվացքների դեպքում ռետրոգրադ էնդոսկոպիկ մոտեցումը կարող է լինել դժվարացած կամ անհնարին:

Ապացույցների ամփոփում	ՀՄ
Մուտքի ընտրությունը կախված է աղիքային ռեզերվուարի կամ կոնդուիտի բացվածքի իդենտիֆիկացիայի հնարավորությունից: Երբ ռետրոգրադ մուտքն անհնարին է, ապա այլընտրաքային տարբերակ է հանդիսանում պերկուտան մուտքով անտեգրադ ՈՒՌՍ-ը:	4

Խորհուրդ	ԽԱ
Կատարել ՊՆԼ մեզի արտաբերմամբ հիվանդների մոտ երիկամի մեծ քարերը հեռացնելու նպատակով, ինչպես նաև միզածորանի քարերի այն դեպքերում, որոնք անհասանելի են ռետրոգրադ մուտքով, կամ չեն ենթարկվում ՀԱՔ-ի:	A*

ՊՆԼ-պերկուտան նեֆրոլիտոտոմիա, ՀԱՔ-հարվածաաղիքային քարափշրում; ՈՒՌՍ-ուրեթերոռենոսկոպիա

Կոնդուիտների քարերի դեպքում կարող է կիրառվել տրանսստոմալ մուտքը ամբողջ քարանյութի հեռացման նպատակով (օտար մարմնի հետ միասին), օգտագործելով ստանդարտ մեթոդներ, ներառյալ ինտրակորպորալ լիտոտրիպսիան և ճկուն էնդոսկոպերը: Տրանսստոմալ միջամտությունը կոնտինենտ ուրոթեզերվուարում < continent urinary diversion > անհրաժեշտ կատարել զգուշությամբ, միզապահությունը չխախտելու նպատակով [328]:

Նախքան պերկուտան միջամտությունը անհրաժեշտ է կատարել համակարգչային տոմոգրաֆիա, սերտաճած աղիքի գալար հայտնաբերելու նպատակով, ինչը կարող

է միջամտությունը դարձնել վտանգավոր [329]: Այդ դեպքում անհրաժեշտ է բաց միջամտություն:

3.4.5.2.3 Կանխարգելում

Այս հիվանդների մոտ ռեցիդիվի ռիսկը բարձր է [326]: Ռեցիդիվի արդյունավետ երկարատև կանխարգելման նպատակով ռիսկի գործոնները հայտնաբերելու համար անհրաժեշտ են մետաբոլիկ հետազոտություններ և խիստ հսկողություն: Կանխարգելիչ միջոցառումները ներառում են մետաբոլիկ խանգարումների դեղորայքային կարգավորում, միզային ինֆեկցիայի համապատասխան բուժում, և հիպերդիուրեզ կամ կոնտինենտ ռեզերվուարների մշտական իրրիգացիա [330]:

3.4.5.3. Նեյրոգեն միզապարկով հիվանդների մոտ միզաքարային հիվանդության մենեջմենտը

3.4.5.3.1 Էթիոլոգիա, կլինիկական պատկեր և ախտորոշում

Նեյրոգեն միզապարկով հիվանդների մոտ միզային քարեր են առաջանում, որովհետև նրանք ունեն լրացուցիչ ռիսկի գործոններ, ինչպես օրինակ, բակտերիուրիան, պիելոկալիկոէկտազիան, միզապարկ-միզաձորանային ռեֆլյուքսը, երիկամի կնճռոտումը, ստորին միզուղիների վերակառուցումը և ողնաշարի կրծքային հատվածի դեֆեկտը [331]: Հիմնական խնդիրներն են մեզի կանգը և ինֆեկցիան (Բաժին 3.1.3): Տեղադրված կատետերները և միզապարկի դիսֆունկցիայի բուժման նպատակով կատարված աղիքի հատվածի վիրաբուժական ներդնումը նպաստում են միզուղիների ինֆեկցիայի զարգացմանը: Չնայած քարերը կարող են առաջանալ միզուղիների ցանկացած մակարդակում, բայց առավել հաճախ հայտնաբերվում են միզապարկում, հատկապես, եթե կատարվել է միզապարկի աուգմենտացիա [332,333]:

Քարերի ախտորոշումը կարող է լինել դժվարացած և ուշացած զգայունության խանգարման և վիզիկոուրետորալ դիսֆունկցիայի հետևանքով կլինիկական ախտանշանների բացակայության պատճառով: Ինքնակատետերիզացիայի դժվարությունները պետք է կասկած առաջացնեն միզապարկի քարի առկայության

մասին: Վիզուալիզացնող հետազոտություններն (ՈՒՁՀ և ՀՏ) անհրաժեշտ են վիրահատական միջամտությունից առաջ կլինիկական ախտորոշումը հաստատելու նպատակով:

3.4.5.3.2 Մենեջմենտ

Նեյրոգեն միզապարկով հիվանդների քարերի մենեջմենտը նույնն է, ինչպես նկարագրված է բաժին 3.3.3-ում: Լատեքսային/latex/ ալերգիան բնորոշ է միելոմենինգոցելեով հիվանդների մոտ, հետևաբար անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ անկախ բուժումից [334]: Այս հիվանդների մոտ ցանկացած վիրաբուժական միջամտություն պետք է կատարվի ընդհանուր անզգայացման ներքո, քանի որ ողնուղեղային ցավազրկումն անհնար է: Ոսկրային դեֆորմացիաները դժվարացնում են վիրահատական սեղանի վրա համապատասխան դիրք տալը [335]: Աուգմենտացիոն ցիստոպլաստիկայից հետո, զգայունության խանգարումով անշարժ հիվանդների մոտ քարերի առաջացման ռիսկը զգալի նվազում է իրրիգացիոն համակարգի շնորհիվ [330].

Նեյրոգեն միզապարկով հիվանդների քարառաջացման արդյունավետ երկարատև կանխարգելման համար անհրաժեշտ են մետաբոլիկ խանգարումների կարգավորում, համապատասխան ինֆեկցիայի վերահսկում և միզապարկի պահել/դատարկելու ֆունկցիայի վերականգնում:

Ապացույցների ամփոփում	ՀՄ
Մեզի արտաբերման ենթարկված և/կամ նեյրոգեն միզապարկի դիսֆունկցիայով տառապող հիվանդները պատկանում են քարերի կրկնակի առաջացման ռիսկի խմբին	3

Խորհուրդ	ԽԱ
Ձեռնարկեք համապատասխան միջոցներ միելոմենինգոցելեյով	B

հիվանդների մոտ, անկախ նախատեսվող բուժումից, քանի որ տարածված է լատեքսային ալերգիան	
--	--

3.4.5.4 Փոխպատվաստված երիկամների քարերի մենեջմենտ

3.4.5.4.1. Էթիոլոգիա

Փոխպատվաստված երիկամով հիվանդները կախված են իրենց միակ երիկամի ֆունկցիայից: Հետևաբար մեզի կանգի/օբստրուկցիայի բերող վնասումը պահանջում է անմիջապես կատարել միջամտություն կամ փոխպատվաստված երիկամի դրենավորում: Այս հիվանդների մետ ռիսկի գործոնները բազմաթիվ են.

- Իմունոսուպրեսիան բարձրացնում է ինֆեկցիայի ռիսկը, արդյունքում բերելով կրկնվող ՄՈՒԻ-րի:
- Կինսաքիմական ռիսկի գործոններն են հիպերֆիլտրացիան, չափազանց հիմնային մեզը, երիկամախողովակային աղիոզը և կայուն երրորդային հիպերպարաթիրեոիզմով պայմանավորված կալցիումի ավելացումը շիճուկում [336]:

Ալլոտրասալանտատ երիկամում քարի հանդիպման հաճախականությունը 0.2-1.7% է [337-339]:

Խորհուրդ	ՀՄ	ԽԱ
Կատարեք ՈՒՁՀ կամ ոչ կոնտրաստային ՀՏ բացառելու համար քարերի արկայությունը փոխպատվաստված երիկամներում, անհայտ ծագման տենդի և աճի անհասկանալի խանգարման դեպքերում (մասնավորապես երեխաների մոտ) [340].	4	B

ՀՏ-համակարգչային զոմոգրաֆիա, ՈւՁՀ-ուլտրաձայնային հեղազոտություն

3.4.5.4.2 Մենեջմենտ

Փոխպատվաստված երիկամի քարի հեռացման մեթոդի ընտրությունը բարդ որոշում է: Չնայած մենեջմենտի սկզբունքները նույնն են, ինչ որ միակ երիկամի դեպքում

[341-344], սակայն լրացուցիչ գործոնները, ինչպես օրինակ տրանսպլանտանտի ֆունկցիան, մակարդեղիության վիճակը, երիկամի զստային տեղակայմամբ պայմանավորված անատոմիական խոչընդոտները ուղղակի ազդում են վիրաբուժական մարտավարության վրա:

Խոշոր կամ միզածորանի քարերի դեպքում զգուշությամբ պերկուտան մոտեցումը՝ հետագա անտեգրադ էնդոսկոպիայով, ավելի նախընտրելի է: Փոքր տրամագծի ճկուն ուրետերոսկոպի և հոլմիումային լազերի ներդրումը ուրետերոսկոպիան դարձրեցին տրանսպլանտանտի քարերի բուժման ընդունելի տարբերակ: Սակայն, չպետք է մոռանալ հարևան օրգանների վնասման պոտենցիալ ռիսկի մասին [345-347]: Ռետրոգրադ մուտքը դեպի փոխպատվաստված երիկամ բարդացած է միզածորանի անաստամոզի առաջային տեղակայման և ոլորված լինելու հետևանքով [348-350]:

Ապացույցների ամփոփում	ՀՄ
------------------------------	-----------

Խորհուրդ	ԽԱ
-----------------	-----------

Փոքր ասիմպտոմատիկ քարերի կոնսերվատիվ բուժումը հնարավոր է միայն խիստ հսկողության ներքո և ամբողջովին ադեկվատ հիվանդներին:	
Բաժակների փոքր քարերի համար ընտրության տարբերակ է ՀԱՔ-ը, բարդությունների նվազագույն ռիսկով, սակայն քարի տեղակայումը կարող է փոփոխվել, և SFRs ցուցանիշը ցածր լինել [351,352].	4

Փոխապատվաստված երիկամներով հիվանդներին առաջարկեք ժամանակակից բուժման ցանկացած տարբերակ, ներառյալ հարվածաալիքային քարափշրումը, ուրետերոսկոպիան (ճկուն) և պերկուտան նեֆրոլիտոտոմիան որպես մենեջմենտի մեթոդ	B
Քարերը հեռացնելուց հետո կատարեք ամբողջական մետաբոլիկ հետազոտում	A*

Թարմացված է աշխարանքային խմբի կոնսենսուսով

3.4.5.4.3 Քարերի հեռացման առանձնահատկությունները

Աղուսյակ 3.4.6 Քարերի հեռացման առանձնահատկությունները

- | | |
|---------------------------|---|
| Բաժակի դիվերտիկուլի քարեր | <ul style="list-style-type: none"> · ՀԱՔ, պերկուտան նեֆրոլիտոտոմիա (եթե հնարավոր է) կամ ռետրոգրատ ներերիկամային վիրահատություն (RIRS): · Կարելի է նաև հեռացնել կատարելով լապարոսկոպիկ հետորովայնամզային վիրահատություն [356-357]: · Քարի փշրման հետևանքով հիվանդները կարող են դառնալ անախտանիշ այն ժամանակ, երբ փշրված քարի կտորները մնում են ելային դիրքում՝ բաժակի նեղ վզիկով պայմանավորված: |
| Պայտածն երիկամներ | <ul style="list-style-type: none"> · Կարող են բուժվել վերը նկարագրվածին համապատասխան տարբերակներով [358]: · ՀԱՔ-ից հետո ֆրագմենտների դուրսբերումը կարող է լինել դժվարացած: · Քարահեռացման ընդունելի տարբերակ կարող է լինել |

նաև ճկուն ուրետերոսկոպիան [359]:

- | | |
|---|--|
| Երիկամի
ավազանի քարեր | <ul style="list-style-type: none">· ՀԱՔ, ռետրոգրադ ներերիկամային վիրահատություն (RIRS), պերկուտան նեֆրոլիտոտոմիա կամ լապարոսկոպիկ վիրահատություն:· Ճարպակալումով հիվանդներին ռետրոգրադ ներերիկամային վիրահատություն (RIRS), պերկուտան նեֆրոլիտոտոմիա կամ բաց վիրահատություն: |
| Քարեր, որոնք
ձևավորվել են
կոնտինենտ
ռեզերվուրարում | <ul style="list-style-type: none">· Նայեք 3.4.4 բաժինը:· Յուրաքանչյուր քար պետք է առանձին հետազոտել և բուժել: |
| Ավազան-
միզաձորանային
սեզմենտի
նեղացումով
հիվանդներ | <ul style="list-style-type: none">· Երբ արտահոսքի խանգարումը պահանջում է շտկում, ապա քարերը կարող են հեռացվել ՊՆԼ եղանակը զուգակցելով միջմաշկային էնդոպիելոտոմիայի կամ բաց/լապարոսկոպիկ ռեկոնստրուկտիվ վիրաբուժության հետ:· ՈւՒՍ զուգակցված Ho:YAG- լազերով էնդոպիելոտոմիայի հետ:· Acucise բալոնային կատետրի օգնությամբ կարող է կատարվել ավազան-միզաձորանային սեզմենտի կտրվածք, պայմանով, որ հնարավոր է կանխել քարի անցումն այդ կտրվածքի հատված: |

3.4.6 Երեխաների մոտ ուրոլիթիազի մենեջմենտը

Զարգացած երկրներում դիտվում է ՄՔՀ-ի հաճախականության աճ, և առաջին անգամ քարի հանդիպման տարիքային խմբի փոփոխություն [11,364,365]: Միզային քարերի ավելի քան 1%-ը հանդիպում է մինչև 18 տարեկան հիվանդների մոտ: Որպես թերսնուցման և ռասայական գործոնների հետևանք, մանկական ՄՔՀ-ը

մնում է որոշ շրջաններում էնդեմիկ հիվանդություն (օրինակ Թուրքիա և հեռավոր արևելք), մնացած դեպքերում, հաճախականությունը նույնն է ինչ զարգացած երկրներում [366-369]: Ախտորոշիչ ընթացակարգերը նայեք բաժին 3.3.3.2, սուր դեկոմպրեսիայի դեպքում նայեք բաժին 3.4.1.2:

3.4.6.1 Քարերի հեռացում

Երեխաների բուժման մեթոդի ընտրության համար պետք է հաշվի առնել որոշ գործոններ: Մեծահասակների հետ համեմատած՝ երեխաների մոտ ՀԱՔ-ից հետո ֆրագմենտացիան ավելի արագ է դիտվում [49]. Էնդոուրոլոգիական միջամտությունների դեպքում պետք է հաշվի առնել երեխաների օրգանների փոքր լինելը ՊՆԼ-ի կամ ՈՒՌՍ-ի գործիքի ընտրության հարցում: Քարահեռացման միջոցի ընտրության համար պետք է հաշվի առնել քարի հավանական բաղադրությունը (ցիստինային քարերն ավելի կայուն են ՀԱՔ-ի նկատմամբ):

Ապացույցների ամփոփում

ՀԱ

Քարերի ինքնաբուխ (սպոնտան) հեռացումն ավելի հավանական է երեխաների մոտ, քան մեծահասակների [59]:

4

3.4.6.1.1. Դեղորայքային քարահեռացնող բուժումը երեխաների մոտ

Դեղորայքային քարահեռացնող բուժումն արդեն իսկ քննարկվել է 3.4.3.1.2 բաժնում, բայց ոչ երեխաների համար: Չնայած ալֆա-պաշարիչների օգտագործումը շատ տարածված է մեծահասակների մոտ, սակայն կան որոշ տվյալներ երեխաների մոտ նրանց անվտանգության և արդյունավետության վերաբերյալ. Տամսուլոզինը դիտարկվում է որպես քարերի հեռացմանը նպաստող միջոց [62,370-372]:

3.4.6.1.2. Էքստրակորպորալ հարվածալիքային լիտոտրիպսիա (ՀԱՔ):

Էքստրակորպորալ հարվածալիքային լիթոտրիպսիան երեխաների մոտ համարվում է քարերի բուժման մինիմալ ինվազիվ մեթոդ [373-378]:

Կարճաժամկետ հսկողության ժամանակ քարից ազատման ցուցանիշը դիտվել է 67-93% դեպքերում, իսկ երկարաժամկետ հսկողության ժամանակ՝ 57-92%

դեպքերում: Երեխաների մոտ, համեմատած մեծահասակների հետ, ՀԱԲ-ը կարող է ավելի արդյունավետ լինել խոշոր քարերի փշրման համար, իսկ խոշոր ֆրագմենտների դուրս գալն ավելի արագ ու առանց բարդությունների: Ինչպես և մեծահասակների մոտ, հարվածային ալիքների դանդաղ տարածումը կարող է նպաստել քարերի դուրս բերման հաճախականության ավելացմանը: Քարերը, որոնք տեղակայված են բաժակներում, շատ ավելի դժվար են մաքրվում և հեռացվում, այնպես, ինչպես արատով երիկամների և խոշոր քարերը: Նման դեպքերում միզուղիների օբստրուկցիայի հավանականությունը բարձր է, ուստի երեխաները պետք է գտնվեն հսկողության տակ: Կրկնակի բուժման հաճախականությունը կազմում է 13.9-53.9%, իսկ լրացուցիչ միջամտությունների կարիք է լինում 7-33% դեպքերում:

ՀԱԲ-ն ժամանակ, հիվանդի տարիքից եւ լիտոտրիպտորի ձևից կախված, կարող է անհրաժեշտ լինել ընդհանուր անզգայացում: Ընդհանուր անզգայացումը կիրառվում է մինչև 10 տարեկան երեխաների մոտ, որպեսզի խուսափեն հիվանդի և քարերի շարժումներից, ինչպես նաև կարողանում են խուսափել հիվանդի դիրքի փոփոխությունից: Մեծ երեխաների մոտ նորագույն լիտոտրիպտորներով քարափշրում կատարելիս կիրառվում է ներերակային սեդացիա կամ տեղային ցավազրկում: ՀԱԲ-ի կիրառման ժամանակ կան մտավախություններ դեռահաս երեխաների ոչ հասուն երիկամների եւ հարակից օրգանների հնարավոր կենսաբանական ազդեցության և վնասման վերաբերյալ: Սակայն, կարճաժամկետ և երկարաժամկետ դիտարկումների արդյունքում, բարձր հաճախականությամբ հարվածային ալիքներից անվերադարձ ֆունկցիոնալ կամ մորֆոլոգիական կողմնակի ազդեցություններ չեն հայտնաբերվել: Եթե կա երիկամի վնասման պոտենցիալ վտանգ, կարելի է նվազեցնել հարվածային ալիքների քանակը և օգտագործվող էներգիան, որը կօգնի բուժման ժամանակ պաշտպանել երիկամները: Բացի այդ, եթե հաշվի առնենք երիկամների ֆունկցիայի հնարավոր վատացումը (թեկուզ և անցողիկ), ապա ամեն սեանսի ժամանակ օգտագործվող հարվածային ալիքների քանակի ու էներգիայի նվազեցումը կօգնի պաշտպանել երիկամները:

Եթե քարի բուժման նպատակով կա ալտերնատիվ բուժման անհրաժեշտություն, անհրաժեշտ է տեղադրել միզածորանային ստենտ: Միզածորանի ստենտավորումը հազվադեպ է կիրառվում վերին միզուղիների ՀԱՔ-ից հետո: ՀԱՔ-ից առաջ միզածորանային ստենտի տեղադրումը նվազեցնում է քարից ազատման ցուցանիշը:

Ապացույցների ամփոփում	ԱՄ
ՀԱՔ –ի ցուցումները երեխաների մոտ նույնն են, ինչ մեծահասակների մոտ:	3
Մինչև 20 մմ տրամագծով (~300 մմ ²) երիկամային քարերով երեխաները հանդիսանում են ՀԱՔ-ի թեկնածուներ	1b

3.4.6.1.3. Էնդոուրոլոգիական միջամտություններ

Ինտրակորպորալ քարափշրող սարքերի բարելավումը և փոքր գործիքների ստեղծումը նպաստել են պերկուտան նեֆրոլիթոտրիպսիայի (ՊՆԼՏ) և ութետերոռենոսկոպիայի (ՈւՌՍ) կիրառմանը երեխաների մոտ:

3.4.6.1.3.1: Պերկուտան նեֆրոլիթոտրիպսիա (ՊՆԼՏ):

Նախավիրահատական գնահատումը և ցուցումներն ՊՆԼՏ-ի ժամանակ նույնն են ինչ մեծահասակների համար: Համապատասխան գործիքների և ուլտրաձայնի օգտագործման դեպքում տարիքը ՊՆԼՏ-ի համար սահմանփակող գործոն չէ: Այն կարող է անվտանգ կատարվել նաև մեծ քարերի դեպքում հմուտ վիրաբուժի կողմից օգտագործելով քիչ ռենտգեն ճառագայթում: Քարից ազատման հաճախականությունը վիրահատությունից հետո կազմում է 68% -ից մինչև 100%, և արդյունավետությունն ավելանում է հավելյալ միջամտությունների ժամանակ՝ կրկնակի ՊՆԼՏ, ՀԱՔ և ՈւՌՍ:

Որոշ դեպքերում երեխաների մոտ, ինչպես մեծահասակների մոտ, առանց խողովակի ՊՆԼՏ-ն համարվում է անվտանգ:

Ապացույցների ամփոփում	ԱՄ
-----------------------	----

Երեխաների եվ մեծահասակների մոտ ՊՆԼՏ-ի ցուցումները նույնն են:	1a
Խորհուրդներ	ԽԱ
Երեխաների մոտ երիկամի ավազանի և բաժակների 20մմ-ից մեծ տրամագծով քարերի դեպքում պետք է կիրառել ՊՆԼՏ:	C

ՊՆԼՏ=Պերկուտան նեֆրոլիթոտրիպսիա

3.4.6.1.3.2. Ուրետերոսկոպիա

Չնայած ՀԱՔ-ը շարունակում է մնալ առաջնային մեթոդ միզածորանի քարերի բուժման համար, սակայն այն նրա արդյունավետությունը քիչ հավանական է 10մմ-ից մեծ տրամագծով, կալցիումի օքսալատային, ցիստինային, սերտաճած քարերի դեպքերում և այն երեխաների մոտ, որոնք ունեն անատոմիական շեղումներ և դժվար տեղակայման քարեր:

Եթե ՀԱՔ-ը արդյունավետ չէ, կարելի է կիրառել ուրետերոսկոպիան: Զարգացնելով ավելի փոքր տրամաչափի գործիքները, երեխաների մոտ միզածորանի դիստալ հատվածում գտնվող միջին և մեծ չափերի քարերի դեպքում ուրետերոսկոպիան համարվում է բուժման ընտրության մեթոդ:

Առկա են տարբեր քարափշրման մեթոդներ՝ ուլտրաձայնային, պնևմատիկ և լազերային, որոնք բոլորն էլ անվտանգ եւ արդյունավետ են:

Խորհուրդներ	ԱՄ	ԽԱ
Ինտրակորպորալ քարափշրման համար օգտագործել նույն սարքավորումները, ինչ մեծահասակների մոտ (հոլմիում լազեր, պնևմատիկ և ուլտրաձայնային քարափշրման սարքեր)	3	C

Ճկուն ուրետերոսկոպը դարձել է արդյունավետ մեթոդ երեխաների վերին միզուղիների քարերի բուժման համար: Այն կարող է լինել հատկապես արդյունավետ պրոքսիմալ միզածորանային և ստորին բաժակախմբի <1,5սմ չափի քարերի դեպքերում [398-401].

3.4.6.1.3. Բաց կամ լապարոսկոպիկ վիրաբուժություն

Շատ քարեր երեխաների կարելի է բուժել ՀԱԲ և էնդոսկոպիկ մեթոդներով [402-404]. Այդ պատճառով, բաց միջամտությունների հաճախությունը զգալի նվազել է: Վիրահատության համար ցուցումներ են. քարահեռացման համար առաջնային միջամտության անհաջողությունը, շատ փոքր երեխաներ՝ բարդ քարերով, բնածին օբստրուկցիա, որը պահանջում է միաժամանակյա վիրաբուժական կորեկցիա, բարդ օրթոպեդիկ դեֆորմացիա, որն անհնար է դարձնում էնդոսկոպիկ միջամտության համար դիրք տալը, երիկամի անոմալ տեղակայում [373,374,386]. Բաց վիրահատությունը կարելի է փոխարինել լապարոսկոպիկով, եթե հմուտ մասնագետ կա [403,404].

3.4.6.1.3.4. Ռեցիդիվի կանխարգելման հատուկ նկատառումներ

Քարեր առաջացնող բոլոր երեխաները կարիք ունեն նյութափոխանակության ստուգման և ռեցիդիվի կանխարգելման ըստ քարի տիպի: Ռենտգեն-նեգատիվ քարերի օրալ քիմիոլիզը կարելի է համարել որպես ՀԱԲ-ի այլընտրանք [405]. Օբստրուկցիայով պայմանավորված և հաստատված նյութափոխանակային շեղումներով երեխաների բուժումը չպիտի հետաձգվի: Երեխաներն կրկնակի քարառաջացման առումով համարվում են բարձր ռիսկայնությամբ հիվանդներ [62,406] (Գլուխ 4).

4. Հսկողություն: Նյութափոխանակության հետազոտում եւ ռեցիդիվի կանխարգելում

4.1. Ընդհանուր նյութափոխանակային նկատառումներ հիվանդների կլինիկական հետազոտման համար


4.1.1 Հիվանդի ռիսկի գնահատում


Քարի հեռացումից հետո յուրաքանչյուր հիվանդ պետք է ընդգրկվի կրկնակի քարառաջացման ցածր կամ բարձր ռիսկի խմբերում (Գծապատկեր 4.1):

Ճիշտ դասակարգման համար երկու բաղադրիչ հանդիսանում են պարտադիր պայման

- Քարի վստահելի հետազոտություն ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայով կամ ռենտգեն դիֆրակցիայով;
- Հիմնական հետազոտություններ (Բաժին 3.3.2).

Գծապատկեր 4.1 Հիվանդների ընդգրկումը կրկնակի քարառաջացման ցածր կամ բարձր ռիսկի խմբերում





Միայն բարձր-ռիսկային քարառաջացնողներն են պահանջում հատուկ նյութափոխանակային հետազոտում: Քարի տեսակը որոշիչ գործոն է հետագա ախտորոշիչ տեստերի համար: Տարբեր քարերի տեսակներն են՝

- կալցիումի օքսալատ,
- կալցիումի ֆոսֆատ,
- միզաթթու,
- ամոնիումի ուրատ,
- ստրուվիտ (և ինֆեկցիոն քարեր),
- ցիստին,
- քսանտին,
- 2,8-դիհիդրօքսիադենին,
- դեղորայքային քարեր,
- անհայտ բաղադրությամբ քարեր:

4.1.2. Մեզի քննություն

Հատուկ նյութափոխանակային գնահատումը պահանջում է մեզի երկու՝ 24-ժամյա հաջորդական քննություններ[407,408]: Հավաքման տարաները պետք է մշակվեն 5%-անոց թիմոլով՝ իզոպրոպանոլի մեջ, կամ հավաքելու ընթացքում պահվեն $\leq 8^{\circ}\text{C}$ պայմաններում՝ մեզի սպոնտան բյուրեղացման ռիսկը նվազեցնելու նպատակով [409,410]: Նախաանալիզային սխալները կարող են նվազագույնի հասցվել անմիջապես հավաքելուց հետո իրականացվող մեզի քննությամբ: Այլընտրանքային է բորաթթվի օգտագործումը (10 գրամ փոշի՝ յուրաքանչյուր տարայում): Հավաքման մեթոդը պետք է ընտրվի հատուկ լաբորատորիայի հետ սերտ համագործակցության պայմաններում: Մեզի pH-ը պետք է որոշվի թարմ ստացված մեզում՝ օրվա ընթացքում 4 անգամ[17,409]՝ օգտագործելով զգայուն pH-թաղանթներ կամ pH-չափիչներ:

Մեզի կաթիլային քննությունը այլընտրանքային մեթոդ է, հատկապես երբ 24-ժամյա մեզի հավաքումը դժվարացած է (օրինակ զուգարաններից օգտվել չկարողացող երեխաների դեպքում)[411]: Մեզի կաթիլային ուսումնասիրությունները սովորաբար ինֆորմատիվ են կրեատինինի արտազատման հարաբերակցության որոշման համար [411], սակայն այն ունի սահմանափակ կիրառելիություն, քանի որ արդյունքները կարող են տատանվել՝ կախված հավաքման ժամանակից, հիանդի սեռից, մարմնի քաշից և տարիքից:

4.1.3. Հադուկ մետաբոլիկ հետազոտման ժամանակացույց

Սկզբնական հատուկ մետաբոլիկ հետազոտման համար հիվանդը պետք է հետևի իրեն հարմար սննդակարգին, գտնվի առօրյա նորմալ պայմաններում և առնվազն 20 օրերի ընթացքում ազատ լինի միզային քարերից [412]:

Անհրաժեշտ են հետազոտություններ հետագա հսկողության վերաբերյալ այն հիվանդների համար, ովքեր ընդունում են ռեցիդիվ կանխարգելող դեղամիջոցներ [413]: Հսկողության ընթացքում կատարվող 24-ժամյա մեզի 1-ին քննությունը խորհուրդ է տրվում կատարել ռեցիդիվ կանխարգելող դեղորայքի ընդունումից 8-12 շաբաթ անց: Վերջինս հնարավորություն է տալիս կորեկցիայի ենթարկել ընդունվող դեղի դեղաչափը, եթե մեզի ռիսկային գործոնները նորմայի սահմաններում չեն՝

անհրաժեշտության դեպքում կատարելով մեզի հետագա 24-ժամյա քննություններ: Միզային պարամետրերի նորմալացումից հետո հետագայում յուրաքանչյուր 12 ամիսը 1 անգամ կատարված 24-ժամյա մեզի քննությունը բավարար է: Խումբը տեղեկացնում է, որ այս հարցի վերաբերյալ տպագրված տվյալները բավականին սահմանափակ են: Միզաքարային հիվանդության ուղեցույցի խումբը նպատակ ունի իրականացնել համակարգային դիտարկում 24-ժամյա մեզի հավաքման կատարյալ ժամանակային տվյալների հաստատման վերաբերյալ:

4.1.4. **Լաբորատոր տվյալների թույլատրելի սահմանները**

4.1 - 4.4 աղյուսակներում տարբեր լաբորատոր տվյալների համար ներկայացված են միջազգային թույլատրելի սահմանները շիճուկում և մեզում:

Աղյուսա 4.1 - Արյան լաբորատոր ցուցանիշների նորմալ արժեքները չափահասների մոտ [414]:

Արյան ցուցանիշ	Թույլատրելի սահման	
Կրեատինին	20-100 $\mu\text{mol/L}$	
Նատրիում	135-145 mmol/L	
Կալիում	3.5-5.5 mmol/L	
Կալցիում	2.0-2.5 mmol/L (ընդհանուր կալցիում)	
	1.12-1.32 mmol/L (իոնիզացված կալցիում)	
Միզաթթու	119-380 $\mu\text{mol/L}$	
Քլորիդ	98-112 mmol/L	
Ֆոսֆատ	0.81-1.29 mmol/L	
Արյան գազային հագեցվածության	pH	7.35-7.45
	pO ₂	80-90 mmHg

Արյան ցուցանիշ	Թույլատրելի սահման	
քննություն	pCO ₂	35-45 mmHg
	HCO ₃	22-26 mmol/L
	BE	± 2 mmol/L

BE = հիմնային ավելցուկ (բուֆերային հիմքի պահանջվող չափաբաժինը թթուն չեզոքացնելու համար), HCO = բիոկարբոնատ, PCO = ածխածնի երկօքսիդի պարզիալ ճնշում, PO = թթվածնի պարզիալ ճնշում:

4.1.5. Ռիսկային ինդեքսներ եւ լրացուցիչ ախտորոշիչ գործիքներ

Մի շարք ռիսկային ինդեքսներ են մշակվել նկարագրելու համար մեզում առկա կալցիումի ֆոսֆատի կամ կալցիումի օքսալատի բյուրեղացման ռիսկը [415-418]: Սակայն ռեցիդիվի կանխատեսման կամ թերապիայի բարելավման համար նախատեսված այս ռիսկային ինդեքսների կլինիկական վավերացումը դեռ ընթացքի մեջ է:

Աղյուսակ 4.2: Մեզի լաբորատոր ցուցանիշների նորմալ արժեքները չափահասների մոտ

Մեզի ցուցանիշներ	Բժշկական ուշադրության արժանի տվյալների թույլատրելի արժեքներ և սահմաններ
pH	կայուն > 5.8 (RTA-ի կասկած)
	կայուն > 7.0 (ինֆեկցիայի կասկած)
	կայուն ≤ 5.8 (թթվային արգելափակման կասկած)
Տեսակարար կշիռ	> 1.010

Մեզի ցուցանիշներ	Բժշկական ուշադրության արժանի տվյալների թույլատրելի արժեքներ և սահմաններ
Կրեատինին	7-13 մմոլ/օր՝ իգական սեռ
	13-18 մմոլ/օր՝ արական սեռ
Կալցիում	> 5.0 մմոլ/օր (տես աղյուսակ 4.2)
	≥ 8.0 մմոլ/օր (տես աղյուսակ 4.2)
Օքսալատ	> 0.5 մմոլ/օր (աղիքային հիպերօքսալուրիայի կասկած)
	≥ 1.0 մմոլ/օր (առաջնային հիպերօքսալուրիայի կասկած)
Միզաթթու	> 4.0 մմոլ/օր (կանայք), 5 մմոլ/օր (տղամարդիկ)
Ցիտրատ	< 2.5 մմոլ/օր
Մագնեզիում	< 3.0 մմոլ/օր
Անօրգանական ֆոսֆատ	> 35 մմոլ/օր
Ամոնիում	> 50 մմոլ/օր
Ցիստին	> 0.8մմոլ/օր

RTA = Երիկամա-խողովակային ացիդոզ:

Աղյուսակ 4.3: Կաթիլային մեզի նմուշների նորմալ արժեքներ.Կրեատինինի հարաբերակցությունները (լուծույթ/ կրեատինին) մեծահասակների մոտ [419]

Ցուցանիշ/Հիվանդի տարիք	Լուծույթ/կրեատինինին հարաբերակցություն	Միավորներ
Կալցիում	մոլ/մոլ	մգ/մգ
< 12 ամիս	< 2.0	0.81
1-3 տարի	< 1.5	0.53
1-5 տարի	< 1.1	0.39
5-7 տարի	< 0.8	0.28
> 7 տարի	< 0.6	0.21
Օքսալատ	մոլ/մոլ	մգ/գ
0-6 ամիս	< 325-360	288-260
7-24 ամիս	< 132-174	110-139
2-5 տարի	< 98-101	80
5-14 տարի	< 70-82	60-65
> 16 տարի	< 40	32
Ցիտրատ	մոլ/մոլ	գ/գ
0-5 տարի	> 0.25	0.42
> 5 տարի	> 0.15	0.25
Մագնեզիում	մոլ/մոլ	գ/գ
	> 0.63	> 0.13
Միզաթթու	< 0.56 մգ/դլ (33 imol/L) ամեն GFR համար (հարաբերակցություն x պլազմայի կրեատինին)	
> 2 տարի		

Աղյուսակ 4.4. 24-ժամյա մեզի նմուշների մեջ լուծույթի արտազատումը երեխաների մոտ [419] **

Կալցիում/24 ժ	Ֆիտրատ/24 ժ		Ֆիստին/24 ժ		Օքսալատ/24 ժ		Ուրատ/24 h	
Բոլոր տարիքային խմբեր	Տղաներ	Աղջիկներ	< 10 տարի	> 10 տարի	Բոլոր տարիքային խմբեր	< 1 տարի	1-5 տարի	> 5 տարի
< 0.1 մմոլ/կգ/24 ժ	> 1.9 մմոլ/24 ժ	> 1.6 մմոլ/24 ժ	< 55 մմոլ/24 ժ	< 200 μ mol/24 ժ	< 0.5 մմոլ/24 ժ	< 70 μ mol/24 ժ	< 65 $\text{m}\mu\text{mol/kg/24 ժ}$	< 55 $\mu\text{mol/kg/24 ժ}$
< 4 մգ/կգ/24 ժ	1.73 մմոլ/24 ժ	1.73 մմոլ/24 ժ	1.73 մմոլ/24 ժ	1.73 մմոլ/24 ժ	1.73 մմոլ/24 ժ	1.73 $\mu\text{mol/24 ժ}$	< 11 մգ/կգ/24 ժ	< 9.3 մգ/կգ/24 ժ
	> 365 մգ/24 ժ	> 310 մգ/24 ժ	< 13 մգ/1.73 մմոլ/24 ժ	ժ< 48 մգ/1.73 մմոլ/24 ժ	< 45 մգ/1.73 մմոլ/24 ժ	< 13 մգ/կգ/24 ժ		
	1.73 մմոլ/24 ժ	1.73 մմոլ/24 ժ						

**** 24-ժամյա մեզի ցուցանիշները կախված են սննդակարգից և սեռից և կարող են տարբերվել կախված աշխարհագրական դիրքից**

4.2. Ռեցիդիվի կանխարգելման ընդահանուր դրույթներ

Միզաքարային հիվանդությամբ բոլորը հիվանդները, անկախ նրանց անհատական ռիսկից, պետք է հետևեն Աղյուսակ 4.5-ում ներկայացված կանխարգելիչ միջոցառումներին: Վերջիններիս հիմնական նպատակը սննդակարգի և կենսակերպի ռիսկերի կարգավորումն է: Հիվանդները, ովքեր ունեն քարագոյացման բարձր ռիսկ, ռեցիդիվի սպեցիֆիկ պրոֆիլակտիկայի կարիք ունեն, որը սովորաբար կատարվում է դեղորայքային բուժմամբ և հիմնված է քարի հետազոտման վրա:

Աղյուսակ 4.5: Հիմնական կանխարգելիչ միջոցառումներ

Հեղուկի օգտագործում (խմելու խորհուրդ)	Հեղուկի չափաբաժինը՝ 2.5-3.0 լ/օր Հեղուկի ցիրկադային ընդունում Չեզոք pH-ով ըմպելիքներ Միզարտադրություն՝ 2.0-2.5 լ/օր Մեզի տեսակարար կշիռ՝ <1010
Խորհուրդներ բալանսավորված սննդակարգի համար	Հավասարակշռված սննդակարգ * Բանջարեղենով եւ մանրաթելով հարուստ սննդակարգ Կալցիումի նորմալ պարունակություն՝ 1-1.2 գ/օր NaCl-ի սահմանափակ պարունակություն՝ 4-5 գ/օր Կենդանական սպիտակուցի սահմանափակում՝ 0.8-1.0 գ/կգ/օր
Կենսակերպի խորհուրդներ ընդհանուր ռիսկային գործոնների կարգավորման համար	Մարմնի զանգվածի ինդեքս՝ պահպանել նորմալ ՄՁԻ մակարդակ Ադեկվատ ֆիզիկական ակտիվություն Ավելորդ հեղուկի կորստի բալանսավորում

Ջգուշացում. Սպիտակուցային պահանջը կախված է տարիքից, այնպես որ, երեխաների մոտ սպիտակուցային սահմանափակմանը պետք է վերաբերվել զգուշությամբ:

* Խուսափեք վիտամինային հավելումների ավելորդ ընդունումից

4.2.1. Հեղուկի օգտագործում

Մեծ ծավալով հեղուկի օգտագործման և քարերի ձևավորման միջև առկա հակադարձ համեմատականությունը բազմիցս ցուցադրվել է [420-422]: Մրգային հյուսքերի ազդեցությունը հիմնականում պայմանավորված է ցիտրատի կամ բիոկարբոնատի առկայությամբ: Եթե առկա են ջրածնի իոններ, ապա վերջնական արդյունքը չեզոքացումն է: Սակայն, եթե առկա է կալիում, բարձրանում է և pH-ի, և ցիտրատի մակարդակը [424,425]:

4.2.2. Մանդակարգ

Պետք է խելամիտ մոտեցում ցուցաբերել, այսինքն ընդունել բալանսավորված խառը սննդակարգ՝ սննդի բոլոր խմբերի օգտագործմամբ, առանց որևէ ավելցուկների [422,427,428]:

Մրգեր, բանջարեղեն և մանրաթել. մրգերի և բանջարեղենի օգտագործումը պետք է խրախուսվի մանրաթելի օգտակար ազդեցությունների պատճառով, չնայած վերջինիս դերը քարերի ռեցիդիվը կանխարգելելու համար հստակեցված չէ [429-432]: Բանջարեղենային դիետայի հիմնային պարունակությունը ավելացնում է նաև միզային pH-ը:

Օքսալատ: Օքսալատով հարուստ մթերքների ավելցուկային օգտագործումը պետք է սահմանափակել կամ խուսափել վերջիններից, որպեսզի կանխվի օքսալատի գերծանրաբեռնվածությանը [423], մասնավորապես այն հիվանդների մոտ, ովքեր ունեն օքսալատի բարձր արտազատում:

Վիտամին C: Չնայած վիտամին C-ն հանդիսանում է օքսալատի նախանյութը, վերջինիս դերը կալցիումի օքսալատային քարերի ձևավորման մեջ մնում է

հակասական [433]: Այնուամենայնիվ, կալցիումի օքսալատային քարերի առաջացումը կանխելու նպատակով խորհուրդ է տրվում խուսափել ավելորդ ընդունումից:

Կենդանական սպիտակուց. Պետք է խուսափել ավելցուկային ընդունումից [434,435] և անհրաժեշտ է սահմանափակել ընդունումը դարձնելով այն 0.8-1.0գ/կգ ըստ մարմնի քաշի: Կենդանական սպիտակուցի ավելցուկային ընդունումն ունի մի շարք ազդեցություններ, որոնք նպաստում են քարագոյացմանը, ներառյալ՝ հիպոցիտրատուրիան, մեզի ցածր pH-ը, հիպերքսալուրիան և հիպերուրիկոզուրիան:

Կալցիումի ընդունում: Չպետք է սահմանափակել, քանի դեռ չկան սննդային կալցիումի և քարագոյացման մեջ եղած հակադարձ համեմատականության հետ կապված հիմնավոր պատճառներ [430,436]: Կալցիումի օրական պահանջը կազմում է 1000 - 1200 մգ [17]: Կալցիումի հավելյալ օգտագործումը խորհուրդ չի տրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ կա աղիքային հիպերօքսալուրիա, որի դեպքում սննդի հետ պետք է ընդունել լրացուցիչ կալցիում կապելու համար աղիքային օքսալատը [422,435,437]:

Նատրիում: Նատրիումի (NaCl) օրական պահանջը չպետք է գերազանցի 3-5 գ-ը [17]:

Հավելյալ օգտագործումը բացասաբար է անդրադառնում մեզի բաղադրության վրա՝

- կալցիումի արտազատումը ավելանում է խողովակային ռեաբսորբցիայի նվազման հետևանքով,
- միզային ցիտրատը նվազում է բիկարբոնատի կորստի պատճառով,
- նատրիումի ուրատի բյուրեղների ձևավորման ռիսկը ավելանում է:

Կալցիումական քարերի ձևավորումը կարող է ընկճվել նատրիումի և կենդանական սպիտակուցի սահմանափակման հետևանքով [434,435]: Նատրիումի ընդունման և առաջին անգամ քարի ձևավորման ռիսկի միջև առկա դրական կորելացիան հաստատված է միայն կանանց մոտ [436,438]: Պրոսպեկտիվ կլինիկական

հետազոտություններ չկան պարզելու համար, որ նատրիումի սահմանափակումը քարառաջացման ռիսկը նվազեցնելու գործում անկախ գործոն է:

Ուրադ: Հիպերուրիկոզուրիկ կալցիումի օքսալատով և միզաթթվային քարերով պացիենտների մոտ պուրինով հարուստ սննդամթերքի ընդունումը պետք է սահմանափակվի [439,440]: Այն չպետք է գերազանցի 500 մգ/օր-ը [17]:

4.2.3. Կենսակերպ

Կենսակերպի գործոնները, ինչպես օրինակ, գիրությունը [441], զարկերակային գերճնշումը [442,443] կարող են ազդեցություն ունենալ քարառաջացման ռիսկի վրա:

4.2.4. Խորհուրդներ ռեցիդիվի կանխարգելման համար

Խորհուրդներ	ԱՄ	ԽԱ
Խորհուրդ տվեք հիվանդներին ընդունել հեղուկի մեծ քանակ, որպեսզի 24-ժամյա մեզի ծավալը լինի > 2.5 լ	1b	A
Փոքր մեզի ծավալ ունեցող հիվանդներին խորհուրդ տվեք ավելացնել հեղուկի օգտագործումը	1b	A

4.3. Քարին-հատուկ նյութափոխանակային հետազոտում և ռեցիդիվի դեղորայքային կանխարգելում

4.3.1. Ներածություն

Դեղորայքային բուժումն անհրաժեշտ է այն հիվանդներին, ովքեր գտնվում են քարառաջացման ռեցիդիվի բարձր ռիսկային խմբում: Կատարյալ դեղանյութը պետք է դադարեցնի քարառաջացումը, չունենա կողմնակի ազդեցություններ և լինի հեշտ օգտագործելի: Սրանցից յուրաքանչյուրը կարևոր է լավ արդյունքի հասնելու համար:

Աղյուսակ 4.6-ում ընդգծված են հիմնական օգտագործվող դեղամիջոցների կարևորագույն հատկանիշները:

Աղյուսակ 4.6: Դեղորայք, որոնք օգտագործվում են քարառաջացման կանխարգելման համար. բնութագրեր, առանձնահատկություններ և դեղաչափեր

Նյութ	Հիմնավորում	Դեղաչափ	Առանձնահատկություններ և կողմնակի ազդեցություններ	Քարի տեսակ	Հղումներ
Հիմնային ցիտրատ	Հիմնայնացում Հիպոցիտրատուրիա Կալցիումի օքսալատի բյուրեղացման ընկճում	5-12 գ/օր (14-36 մմոլ/օր) Երեխաներ. 0.1-0.15 գ/կգ/օր	Մեզի հիմնայնացման օրական դոզան կախված է մեզի pH-ից	Կալցիումի օքսալատ Միզաթթու Ցիստին	[47,422,444-450]
Ալլոպուրինոլ	Հիպերուրիկ օզուրիա Հիպերուրիկ եմիա	100-300 մգ/օր Երեխաներ. 1-3 մգ/կգ/օր	100 մգ իզոլացված հիպերուրիկոզուրիա դեպքում Երիկամային անբավարարո	Կալցիումի օքսալատ Միզաթթու Ամոնիումի ուրատ 2,8-	[451-455]

Նյութ	Հիմնավորում	Դեղաչափ	Առանձնահատկություններ և կողմնակի ազդեցություններ	Քարի տեսակ	Հղումներ
			կայունը պահանջում է դեղաչափի կորեկցիա	դիհիդրոքսիադենին	
Կալցիում	Աղիքային հիպերօքսալուրիա	1,000 մգ/օր	Ընդունել սնվելուց 30 րոպե առաջ	Կալցիումի օքսալատ	[435-437]
Կապտոպրիլ	Ֆիստինուրիա Միզային ցիստինի մակարդակի ակտիվ իջեցում	75-150 մգ	Երկրորդ տարբերակ նշանակալի կողմնակի էֆեկտների պատճառով	ցիստին	[456,457]
Ֆերուկսոսատ	Հիպերուրիկոզուրիա Հիպերուրիկեմիա	80-120 մգ/օր	Հակացուցված է սուր պոդագրայի, հղիության, քսանտինային քարերի ժամանակ	Կալցիումի օքսալատ Միզաթթու	[458,459]

Նյութ	Հիմնավորում	Դեղաչափ	Առանձնահատկություններ և կողմնակի ազդեցություններ	Քարի տեսակ	Հղումներ
Լ-մեթիոնին	Թթվեցում	600-1,500 մգ/օր	Հիպերկալցիումիա, ոսկորների դեմիներալիզացիա, համակարգային աղիքային Ոչ երկարատև թերապիա	Ինֆեկցված քարեր Ամոնիումի ուրատ Կալցիումի ֆոսֆատ	[47,460,461]
Մագնեզիում	Իզոլացված հիպոմագնեզիումիա Աղիքային հիպերօքսալուրիա	200-400 մգ/օր Երեխաներ. 6մգ/կգ/օր	Երիկամային անբավարարությունը պահանջում է դեղաչափի կորեկցիա Դիարեա, հիմքերի խրոնիկ կորուստ, հիպոցիտրատուրիա	Կալցիումի օքսալատ	[462,463] Ցածր ապացույցներ

Նյութ	Հիմնավորում	Դեղաչափ	Առանձնահատկություններ և կողմնակի ազդեցություններ	Քարի տեսակ	Հղումներ
Նատրիումի բիկարբոնատ	Հիմնայնացում Հիպոցիտրատուրի	4.5 գ/օր		Կալցիումի օքսալատ Միզաթթու Ցիստին	[464]
Պիրիդոկսին	Առաջնային հիպերօքսալուրիա	Սկզբնական դեղաչափ 5 մգ/կգ/օր Մաքսիմալ 20 մգ/կգ/օր	Պոլիներոպաթիա	Կալցիումի օքսալատ	[465]
Թիազիդ (Հիդրոքլորոթիազիդ)	Հիպերկալցիուրիա	25-50 մգ/օր Երեխաներ. 0.5-1 մգ/կգ/օր	Դեղորայքով առաջացած զարկերակային ճնշման իջեցման ռիսկ, դիաբետ, հիպերուրիկեմիա, հիպոկալեմիա, հետևել ներբջջային	Կալցիումի օքսալատ Կալցիումի ֆոսֆատ	[47,462,466-474]

Նյութ	Հիմնավորում	Դեղաչափ	Առանձնահատկություններ և կողմնակի ազդեցություններ	Քարի տեսակ	Հղումներ
			ացիդոզին և հիպոցիտրատուրիային		
Թիոպրոնին	Ցիստինուրիա Միզային ցիստինի մակարդակի ակտիվ իջեցում	Նախնական դեղաչափ 250 մգ/օր Մաքսիմալ 2,000 մգ/օր	Տախիֆիլակսիայի և պրոտեինուրիայի ռիսկ	Ցիստին	[475-478]

4.4. Կալցիումի օքսալատային քարեր

Օքսալատային քարերի ձևավորման չափանիշները թվարկված են բաժնում 3.1.2.

4.4.1 **Ախտորոշում:**

Վերլուծություն- Արյան կրեատինինի չափումներ , նատրիումի, կալիումի, քլորիդի, կալցիումի կամ ընդհանուր ալբումինի, վահանաձև գեղձի հորմոն (PTH) (վիտամին D):

Մեզի անալիզը պահանջում է մեզի ծավալի չափում, մեզի pH, տեսակարար կշիռ, կալցիումի օքսալատ, ցիտրատ, նատրիում, մագնեզիում.

4.4.2. **Արդյունքների մեկնաբանում և էթիոլոգիա:**

Կալցիումի օքսալատային քարերի ախտորոշիչ և բուժման ընթացակարգը ներկայացված է գծապատկերում 4.2 [47,422,445-447,451-453,458,462-464,466-473,479-483].

Կալցիումական քարերի ձևավորմամբ ամենատարածված նյութափոխանակության խանգարումներից են հանդիսանում հիպերկալցիուրիան, որն հանդիպում է 30-60% մեծահասակների, հիպերօքսալուրիան (26-67%), որոնց հաջորդում են հիպերուրիկոզուրիան (15-46%), հիպոմագնեմիան (7-23%) և հիպոցիտրատուրիան (5-29%): Այս բոլորը տարբերվում են էթնիկական պատկանելությամբ [479]:

• Իոնացված կալցիումի մակարդակի բարձրացումը արյան շիճուկում պահանջում է պարատիորմոնի գնահատում, պարաթիրոիդոնը բացառելու կամ հաստատելու համար:

• Թթվի բլոկադա (մեզի pH շարունակաբար <5.8) կարող է նպաստել համատեղ կալցիումի և միզաթթվի բյուրեղացմանը: Միզաթթվի ավելացումը կարող է նպաստել որպես խթանող երևույթ (մեծահասակների >4 մգ/օր կամ > 12 մգ / կգ / օր երեխաների մոտ):

• Մշտական մեզի pH > 5.8 ցերեկը ցույց է տալիս ացիդոզ, այն պայմանով, որ UTI հերքվել է: Ամոնիումի, քլորիդի թեստը հաստատում է RTA – ի հետ և իդենտիֆիկացնում է նրա ենթատիպ RTA-ն (Բաժին 4.6.5):

• հիպերկալցիուրիան կարող է կապված լինել նորմոկալցեմիայի հետ (իդիոպաթիկ հիպերկալցիուրիայով, կամ գոանուլեմատոզ հիվանդությամբ)

• հիպոցիտրատուրիա (արական <1.7 մմոլ / գ, իգական <1.9 մմոլ / g) կարող է լինել իդիոպատիկ կամ երկրորդական նյութափոխանակություն ացիդոզ կամ հիպոկալեմիա.

• օքսալատի արտազատում > 0.5 մմոլ / օր ,մեծահասակների մոտ > 0.37 մմոլ / օր,երեխաների 1.73 մ 2 / օր) հաստատում է հիպերօքսալուրիան.

Առաջնային հիպերօքսալուրիան հայտնվում է երեք ձևերով, որոնք գենետիկորեն սահմանված են/օքսալատի եքսկրեկցիան >1/

Կրկնված հիպերօքսալուրիան(էքսկրեկցիան > 0.5 մմոլ / օր, ինչը պայմանավորված է օքսալատի մեծ աղիների ուտիլիզացիայով

Կուպիտ հիպերօքսալուրիան (արտազատվող 0.45-0.85 մմոլ / օր), սովորաբար հայտնաբերվել է իդիոպատիկ օքսալատային քարերում և դիոպաթիկ օքսալատային քարերում.

•Հիպոմագնեմիան կարող է կապված լինել վատ դիետիկ օգտագործումով, կամ քրոնիկական դիարեայով.

Մագնեզիում	Մեկուսացված հիպոմագնեզիումիա Աղիքային հիպերօքսալուրիա	200-400 մգ/օր Երեխա՝ 6 մգ/կգ/օր	Երկամային Կալցիումի անբավարարություն օքսալատ նը պանջում է դեղաչափի ճշգրտում: Փորլուծություն, հիմքերի քրոնիկ կորուստներ, հիպերցիտրատուրիա:	Կալցիումի [462,463] Ցածր ապացուցողական հիմք
Նատրիումի բիկարբոնակ	Հիմնայնացում հիպերցիտրատուրիա	4.5 գ/օր	Կալցիումի օքսալատ միզաթթու, ցիստին	[464]
Պիրիդոքսին	Առաջնային հիպերօքսալուրիա	Սկզբնական դեղաչ	Պոլինկրոպաթիա օքսալատ	Կալցիումի [465]

		ափ 5 մգ/կգ/ օր Առավել լազույն ը՝ 20 մգ/կգ/ օր		
Թիագիդ(Հիդրոք լորոթիագիդ)	Հիպերկալցիուրի ա	25-50 մգ/օր Երեխ ա՝ 0.5-1 մգ/կգ/ օր	Risk for agent- induced ցածր արյան ճնշում, շաքարախտ, հիպերուրիկեմիա, Կալցիումի օքսալատ Կալցիումի ֆոսֆատ հիպոկալեմիա, որին հետևում է միջբջջային ացիդոզ և հիպոցիտրատուրի ա	[47,462, 466- 474]
Թիոպրոնին	Ցիստինուրիա մակարդակի արագ աճ մեզում	Սկզբն ական դեղաչ ափ 250 մգ/օր Առավել լազույն ը՝	Տախիֆիլաքսիայի Ցիստին և պրոտեինուրիայի ռիսկ	[475- 478]

		2,000 մգ/օր		
--	--	----------------	--	--

4.4. Կալցիում օքսալատային քարեր

Բարձր ռեցիդիվի հավանականությամբ կալցիումի օքսալատային քարեր առաջացնողներին ախտորոշելու չափանիշները ներկայացված են 3.1.2. բաժնում:

4.4.1. Ախտորոշում

Արյան անալիզը պահանջում է կրեատինինի, նատրիումի, կալիումի, քլորիդի, իոնիզացված կալցիումի (կամ ընդհանուր կալցիում+ալբումին), միզաթթվի, և պարատ հորմոնի (PTH) (և D վիտամինի) չափում կալցիումի բարձր մակարդակի դեպքում:

Մեզի անալիզը պահանջում է մեզի ծավալի, մեզի pH-ի, տեսակարար կշռի, կալցիումի, օքսալատի, միզաթթվի, ցիտրատի, նատրիումի և մագնեզիումի որոշում:

4.4.2. Արդյունքների և պատճառաբանության մեկնաբանում

Կալցիում օքսալատային քարերի ախտորոշման և թերապևտիկ ընթացակարգները նշված են 4.2 աղյուսակում [[47](#),[422](#),[445-447](#),[451-453](#),[458](#),[462-464](#),[466-473](#),[479-483](#)].

Կալցիումական քարերի գոյացման հետ համակցված հիմնական նյութափոխանակային շեղումներն են՝ հիպերկալցիորիան, որը պայմանավորում է մեծահասակների քարերի ձևավորման 30-60%-ը, և հիպերօքսալուրիան (26-67%), որը ուղեկցվում է հիպերուրիկոզուրիայով (15-46%), հիպերմագնեզիուրիայով (7-23%), և հիպերցիտրատուրիայով (5-29%): Սակայն, ազգային պատկանելիությունից կախված, այս տվյալները կարող են տատանվել:

· Կալցիումի բարձր մակարդակը շիճուկում (կամ կալցիում + ալբումին) պահանջում է ազատ պարատ հորմոնի գնահատում՝ հիպերպարաթիրեոիդիզմի (HPT) հերքման կամ հաստատման համար:

· <<Թթվային շրջափակումը>> (մեզի pH հաստատուն ≤ 5.8) կարող է նպաստել միզաթթվի և կալցիումի օքսալատի բյուրեղացմանը: Միզաթթվի ավելացած

արտազատումը (> 4 մմոլ/օր մեծահասակ, կամ > 12 մգ/կգ/օր երեխա) նույնպես կարող է հանդես գալ որպես նպաստող գործոն:

- Մեզի pH մակարդակը հաստատուն > 5.8 օրվա պրոֆիլում վկայում է երիկամա-խողովակային աջիդոզի մասին (RTA), պայմանով, որ միզուղիների ինֆեկցիան բացառված է: Ամոնիումի քլորիդային թեստը հաստատում է երիկամա-խողովակային աջիդոզը և առանձնացնում է նրա ենթատիպը (Բաժին 4.6.5).

- Հիպերկալցիուրիան կարող է համակցված լինել նորմոկալցեմիայի (իդիոպաթիկ հիպերկալցուրիա կամ գրանուլեմատոզ հիվանդություններ) կամ հիպերկալցեմիայի (հիպերպարաթիրոիդիզմ, գրանուլեմատոզ հիվանդություններ, վիտամին D ավելցուկ, կամ չարորակացում) հետ:


- Հիպոցիտրատուրիան (տղամարդ < 1.7 մմոլ/օր, կին < 1.9 մմոլ/օր) կարող է լինել իդիոպաթիկ, կամ նյութափոխանակային աջիդոզի կամ հիպոկալցեմիայի հետևանք:

- Օքսալատի արտազատումը > 0.5 մմոլ/օր մեծահասակների մոտ (> 0.37 մմոլ/1.73 մ²/օր երեխաների մոտ) հաստատում է հիպերօքսալուրիան:

- առաջնային հիպերօքսալուրիա (օքսալատի արտազատում գերազանցապես ≥ 1 մմոլ/օր), առաջ է գալիս գենետիկորեն պայմանավորված 3 տարբերակով.
- երկրորդային հիպերօքսալուրիա (օքսալատի արտազատում ≥ 0.5 մմոլ/օր, սովորաբար < 1 մմոլ/օր), առաջ է գալիս օքսալատի աղիքային գերներծծման կամ սննդակարգում օքսալատի ավելցուկի դեպքում
- չափավոր հիպերօքսալուրիա (օքսալատի արտազատում $0.45-0.85$ մմոլ/օր), հիմնականում հանդիպում է իդիոպաթիկ կալցիումի օքսալատային քարեր արտադրողների մոտ:

- Հիպոմագնեզիուրիան (< 3.0 մմոլ/օր) կարող է պայմանավորված լինել սննդակարգում վերջինիս պակասով կամ աղիքային թերներծծումով (խրոնիկ դիարեա).

Աղյուսակ 4.2: Կալցիում օքսալատային քարերի ախտորոշման և թերապևտիկ ընթացակարգ



1 Հետևել Կալցիումի գերարտադարձությունը:

2 Օրը 3 անգամ (24ժ).

3 Բացառել մագնեզիումային թերապիան երիկամային անբավարարությամբ հիվանդների համար:

4 Ապացուցված չէ, որ կոմբինացված թերապիան (թիազիդ+ցիտրապ) (թիազիդ + ալոպուրինոլ) առավելություններ ունի թիազիդային թերապիայի նկատմամբ [466,473].

5 Ֆերուքսուսուրա 80 մգ/օր:

4.4.3. Սպեցիֆիկ բուժում

Որպես ընդհանուր կանխարգելիչ միջոցառումներ խորհուրդ է տրվում հետևել սննդակարգին և հեղուկների ընդունմանը: Հիպերօքսալուրիկ քարերով հիվանդները պետք է ընդունեն քիչ օքսալատ պարունակող սնունդ, իսկ հիպերուրիկոզուրիկ հիվանդների սննդակարգում պետք է պակասեցնել պուրինը: Աղյուսակ 4.2 ամփոփում է կալցիում օքսալատային քարերի ախտորոշիչ ընթացակարգը և դեղորայքային բուժումը [47,422,445-447,451-453,458,462-464,466-473,479-483]:

Քարառաջացման կանխարգելման համար վիրահատությունից առաջ քարի բաղադրության և բիոքիմիական չափորոշիչների կամ վիրահատության ընթացքում բիոքիմիական չափորոշիչների օգտագործման վերաբերյալ տվյալները ցածր ապացուցման մակարդակ ունեն: [422].

4.4.4. Մեզի բաղադրության հատուկ շեղումներով հիվանդների դեղորայքային բուժման վերաբերյալ խորհուրդներ

Մեզի ռիսկի գործոններ	Առաջարկվող բուժում	ԱՄ	ԽԱ
Հիպերկալցիուրիա	Թիազիդ+կալիումի ցիտրատ	1a	A
Հիպերօքսալուրիա	Օքսալատի սահմանափակում	2b	A
Աղիքային հիպերօքսալուրիա	Կալիումի ցիտրատ	3-4	C
	Կալցիումի լրացում	2	B
	Ճարպի և օքսալատների սահմանափակում	3	B
Հիպոցիտրատուրիա	Կալիումի ցիտրատ	1b	A
Հիպոցիտրատուրիա	Նատրիումի բիկարբոնատ՝ կալիումի ցիտրատի նկատմամբ անհանդուրժողականության	1b	A

Մեզի ռիսկի գործոններ	Առաջարկվող բուժում	ԱՄ	ԽԱ
Հիպերուրիկոզուրիա	դեպքում		
	Ալլոպուրինոլ	1a	A
	Ֆեբուքսոստատ	1b	A
Նատրիումի ավելցուկային արտազատություն	Կերակրի աղի ընդունման սահմանափակում	1b	A
Մեզի փոքր ծավալ	Հեղուկների ընդունման ավելացում	1b	A
Միզանյութի մակարդակը վկայում է կենդանական սպիտակուցների ավելցուկային ընդունման մասին	Խուսափել կենդանական սպիտակուցների ավելցուկային ընդունումից	1b	A
Շեղումներ հայտնաբերված չեն	Հեղուկների ընդունման ավելացում	2b	B

4.5. Կալցիումի ֆոսֆատային քարեր

Կալցիումի ֆոսֆատային քարերով որոշ հիվանդներ ունեն կրկնակի քարառաջացման բարձր ռիսկ: Բարձր ռիսկով հիվանդների հայտնաբերման վերաբերյալ հետագա տեղեկատվությունը տրված է Բաժին 3.1.2-ում:

Կալցիումի ֆոսֆատը հիմնականում հանդիպում է երկու տարբեր հանքանյութերի ձևով՝ կարբոնատային ապատիտ և բրուշիտ: Կարբոնատային ապատիտի բյուրեղացումը կատարվում է $\text{pH} \geq 6.8$ դեպքում և կարող է համակցված լինել ինֆեկցիայի հետ: Բրուշիտի բարենպաստ բյուրեղացման pH -ն է 6.5-6.8, մեզում կալցիումի (> 8 մմոլ/օր) և ֆոսֆատի (> 35 մմոլ/օր) բարձր պարունակության դեպքում: Դրա առաջացումը կապված չէ միզուղիների ինֆեկցիաների հետ: Կալցիումի ֆոսֆատային քարերի առաջացման հնարավոր պատճառներն են հիպերպարատիրոիդիզմը, երիկամա-խողովակային աղիոգը և միզուղիների ինֆեկցիան, որոնք պահանջում են տարբեր բուժում:


4.5.1. Ախտորոշում

Ախտորոշումը պահանջում է արյան կազմում կրեատինինի, նատրիումի, կալիումի, քլորիդի, իոնիզացված կալցիումի (կամ ընդհանուր կալցիում+ալբումին), և պարատհորմոնի (կալցիումի բարձր մակարդակի դեպքում) որոշում: Մեզի անալիզը ներառում է ծավալի, թթվա-հիմնային պրոֆիլի, տեսակարար կշռի, կալցիումի, ֆոսֆատի և ցիտրատի որոշումը:

4.5.2. Արդյունքների և պատճառաբանության մեկնաբանություն

Ընդհանուր կանխարգելիչ միջոցառումները ներառում են հեղուկների ավելցուկային ընդունումն ու սննդակարգը: Կալցիումի ֆոսֆատային քարերի ախտորոշման և բուժման ընթացակարգը ցուցադրված է աղյուսակ 4.3-ում.

Աղյուսակ 4՝3՝ Կալցիումի ֆոսֆատային քարերի ախտորոշման և բուժման ընթացակարգ



4.5.3. Դեղորայքային բուժում [47,422,466,467,471,483]

Հիպերպարաթիրոիդիզմը և երիկամա-խողովակային աջիդողը կալցիումի ֆոսֆատային քարերի առաջացման հիմնական պատճառներն են: Թեև առաջնային պարաթիրոիդիզմով հիվանդների մեծամասնությունը պահանջում է վիրաբուժական միջամտություն, երիկամա-խողովակային աջիդողը կարող է շտկվել դեղամիջոցներով: Եթե առաջնային պարաթիրոիդիզմը և երիկամա-խողովակային

ացիդոզը բացառվել են, ապա կալցիումի ֆոսֆատային քարերի դեղորայքային բուժումը կախված է թիազիդի օգնությամբ մեզում կալցիումի մակարդակի իջեցման արդյունավետությունից: Եթե մեզի pH հաստատուն մեծ է 6.2-ից, ապա մեզի թթվայնացումը L-մեթիոնինով կարող է օգտակար լինել, սակայն, այն հիմնականում չի կիրառվում: Անհրաժեշտ է համակարգային ացիդոզի զարգացման վերահսկում: Ինֆեկցիոն ծագման կալցիումի ֆոսֆատային քարերի դեպքում կարևոր է օգտվել ինֆեկցիոն ծագման քարերի համար նախատեսված ուղեցույցից:

4.5.4. **Կալցիում ֆոսֆատային քարերի բուժման խորհուրդներ**

Ռիսկի գործոններ և առաջարկվող բուժում	ԱՄ	ԽԱ
Նշանակել թիազիդ հիպերկալցիուրիայի դեպքում	1a	A
Խորհուրդ տալ հիվանդին թթվայնացնել մեզը անբավարար Ph-ի դեպքում	3-4	C
Նշանակել հակաբիոտիկներ միզուղիների ինֆեկցիաների դեպքում	3-4	C

4.6. Հիվանդությունների և խանգարումների հետ կապված կալցիումական քարեր

4.6.1. **Հիպերպարաթիրոիդիզմ [\[484-487\]](#)**

Առաջնային հիպերպարաթիրոիդիզմը պատասխանատու է մոտավորապես 5% կալցիումական քարերի ձևավորման համար: Երիկամային քարեր առաջանում են հիպերպարաթիրոիդիզմով հիվանդների մոտավորապես 20%-ի մոտ:

Պարատհորմոնի բարձր մակարդակը զգալիորեն բարձրացնում է շրջանառող կալցիումի քանակը՝ հանգեցնելով հիպերկալցիուրիայի և հիպերկալցեմիայի: Շճային կալցիումի մակարդակը կարող է լինել քիչ բարձրացած, և պարատհորմոնը կարող է լինել նորմալի վերին արժեքի սահմանում, ուստի կարող են պահանջվել կրկնակի չափումներ: Ցանկալի է նաև հիվանդի ծոմ պահելը: Հիպերպարաթիրոիդիզմով հիվանդների քարերը կարող են պարունակել և կալցիումի օքսալատ, և կալցիումի ֆոսֆատ:

Եթե հիպերպարաթիրոիդիզմը կասկածի տակ է, անհրաժեշտ է կատարել պարանոցի հետազոտություն՝ ախտորոշումը հաստատելու համար: Առաջնային հիպերպարաթիրոիդիզմը բուժելի է միայն վիրաբուժական ճանապարհով:

4.6.2. Գրանուլոմատոզ հիվանդություններ [487]

Գրանուլոմատոզ հիվանդությունները, ինչպես օրինակ սարկոիդոզը, կարող են բարդացված լինել հիպերկալցեմիայով և հիպերկալցիուրիայով կալցիտրիոլի ավելցուկային արտադրության պատճառով: Վերջինս կախված չէ պարատիրոնինից և բերում է կալցիումի ակտիվ ներծծմանը ստամոքս-աղիքային տրակտում և պարատիրոնին ընկճմանը: Բուժումը կենտրոնացված է գրանուլոմատոզ հիվանդության ակտիվության վրա և կարող է պահանջվել ստերոիդների, հիդրօքսիքլորիսինին կամ կետոկոնազոլի օգտագործում: Բուժումը պետք է իրականացվի մասնագետի կողմից:

4.6.3. Առաջնային հիպերօքսալուրիա [465]

Առաջնային հիպերօքսալուրիայով հիվանդները պետք է դիմեն մասնագիտացված կենտրոններ, քանի որ հաջող բուժումը պահանջում է փորձառու մասնագետներ: Բուժման հիմնական նպատակն է էնդոգեն օքսալատի արտադրության նվազեցումը, ինչն այս հիվանդների մոտ բարձր է լինում: Առաջին տիպի առաջնային հիպերօքսալուրիայով հիվանդների մոտավորապես 1/3 -ի մոտ պիրիդոքսինը կարգավորում կամ զգալիորեն նվազեցնում է մեզոլ օքսալատի արտազատությունը: Մեզի անհրաժեշտ նոսրացմանը մեծահասակները կարող են հասնել կանոնավոր, օրական 3.5-4 լ հեղուկ ընդունելով (երեխաները 1.5լ/մ2) և հետևելով խմելու ցիրկադային ռեժիմին:

Կալցիումի օքսալատի բյուրեղացումը կանխարգելող թերապևտիկ միջոցներն են՝ հիպերդիուրեզը, հիմնային ցիտրատը, մագնեզիումը: Սակայն, տերմինալ երիկամային անբավարարության ժամանակ, առաջնային հիպերօքսալուրիան պահանջում է միաժամանակյա լյարդ-երիկամային փոխպատվաստում:

Բուժման սխեմա

· Պիրիդոքսին առաջնային հիպերօքսալուրիայի առաջին տիպի դեպքում. 5-20մգ/կգ/օր՝ կախված մեզոլ օքսալատի արտազատությունից և հիվանդի տոլորանելիությունից

- Հիմնային ցիտրատ՝ 9-12 գր/օր մեծահասակների համար, 0.1-0.15 մեգ/կգ/օր երեխաների համար
- Մազնեզիում՝ 200-400 մգ/օր (բացառել մազնեզիումը երիկամային անբավարարության դեպքում):

Ռիսկի գործոններ և առաջարկվող բուժումը առաջնային հիպերօքսալուրիայի ժամանակ	ԱՄ	ԽԱ
Առաջնային հիպերօքսալուրիայով հիվանդները պետք է ուղղվեն մասնագիտացված կենտրոններ, որտեղ նրանց կարող է ցուցաբերվել բազմակողմանի խնամք		
Նշանակել պիրիդոքսին առաջնային հիպերօքսալուրիայի դեպքում	3	B

4.6.4. Աղիքային հիպերօքսալուրիա [437,488]

Աղիքային հիպերօքսալուրիան խնդրահարույց վիճակ է հատկապես աղիքային մալաբսորբցիայով և ճարպակալումով հիվանդների համար: Այս խանգարումը կապված է քարառաջացման բարձր ռիսկի հետ և հանդիպում է աղիների մասնահատման, մալաբսորպտիվ բարիատրիկ վիրահատության, Կրոնի հիվանդության և ենթաստամոքսային գեղձի անբավարարության ժամանակ: Հիպերօքսալուրիայի հետ մեկտեղ այս հիվանդները սովորաբար ունենում են հիպոցիտրատուրիա՝ պայմանավորված հիմքերի կորստով: Մեզի pH-ը սովորաբար ցածր է, ինչպես նաև ցածր են մեզի ծավալը և կալցիումի պարունակությունը: Բոլոր այս խանգարումները նպաստում են կալցիումի օքսալատով գերհագեցմանը, կրիստալուրիային և քարառաջացմանը:

Հատուկ կանխարգելիչ միջոցառումներ են՝

- Օքսալատով հարուստ սննդի սահմանափակ ընդունում
- Ճարպերի սահմանափակ ընդունում
- Կալցիումի լրացում սննդի ընդունման ժամանակ, ինչը կնպաստի բավարար քանակի կալցիումի օքսալատային կոմպլեքսի ձևավորմանը աղիներում [437,488];

- Բավարար հեղուկի ընդունում դիարեայի հետևանքով առաջացած հեղուկի կորուստը հավասարակշռելու համար
- Հիմնային ցիտրատ մեզի pH-ը և ցիտրատի մակարդակը բարձրացնելու համար:


Ռիսկի գործոններ և առաջարկվող բուժում աղիքային հիպերօքսալուրիայի ժամանակ	ԱՄ	ԽԱ
Նշանակել կալիումի ցիտրատ	4	C
Խորհուրդ տալ հիվանդներին ընդունել լրացուցիչ կալցիում	2	B
Խորհուրդ տալ հիվանդներին սահմանափակել սննդակարգի ճարպն ու օքսալատը	3	B

4.6.5. Երիկամա-խողովակային ացիդոզ [489,490]

Երիկամա-խողովակային ացիդոզը պայմանավորված է նեֆրոնում պրոտոնների կամ բիկարբոնատի փոխանակության լուրջ խանգարումներով:

Երիկամների քարառաջացումն ավելի հաճախ հանդիպում է դիստալ երիկամա-խողովակային ազիդոզի առաջին տիպով հիվանդների մոտ: 4.4 աղյուսակում ամփոփված է երիկամա-խողովակային ացիդոզի ախտորոշումը:

Աղյուսակ 4.4. Երիկամա-խողովակային ացիդոզի ախտորոշում



Ամոնիումի քլորիդով ծանրաբեռնման թեստը (3 և ավել օր տևողությամբ օգտագործելով 0.05գ/կգ դեղաչափով NH4CL) կարող է տալ նույն արդյունքները և հիվանդի կողմից կարող է ավելի տանելի լինել: Այս դեպքում որպես երկրորդ տարբերակ կարող է լինել ֆուրոսեմիդային թթվայնեցման թեստը:

Երիկամա-խողովակային աջիդոզը կարող է լինել ձեռքբերովի կամ ժառանգական: Ձեռքբերովի երիկամա-խողովակային աջիդոզի պատճառ կարող են լինել օբստրուկտիվ ուրոպաթիան, ռեցիդիվող պիելոնեֆրիտը, սուր խողովակային ներկոզը, երիկամի փոխապատվաստումը, անալգետիկ նեֆրոպաթիան, սարկոիդոզը, իդիոպաթիկ հիպերկալցիուրիան, առաջնային պարաթիրոիդիզմը, և կարող է լինել դեղորայք-կախյալ (օր.՝ զոնիսամիդ):

Աղյուսակ 4.7՝ Երիկամա-խողովակային ազիդոզի ժառանգական պատճառներ

Տեսակ- ժառանգականություն	Գեն/գենի արտադրանք/գործառույթ	Ֆենոտիպ
Աուտոսոմ դոմինանտ	SLC4A1/AE1/Cl- բիկարբոնատային փոխանակիչ	հիպերկալցիուրիա, հիպոկալեմիա, օստեոմալացիա
Աուտոսոմ ռեցեսիվ խողովայն կորստով	Վակուլար H-ATP-ազայի ATP6V1B1/B1 ենթամիավոր/պրոտոնային սեկրեցիա	հիպերկալցիուրիա, հիպոկալեմիա, ռախիտ
Աուտոսոմ ռեցեսիվ	Վակուլար H-ATP-ազայի ATP6V0A4/A4 ենթամիավոր/պրոտոնային սեկրեցիա	հիպերկալցիուրիա, հիպոկալեմիա, ռախիտ

Բուժման գլխավոր նպատակն է նորմալ թթվահիմնային հավասարակշռության վերականգնումը: Չնայած, երիկամա-խողովակային ազիդոզի ժամանակ մեզի հիմնային pH-ին, հիմնայնացման նպատակով հիմնային ցիտրատի և կալիումի բիկարբոնատի կիրառումը հանդիսանում է նյութափոխանակային փոփոխությունների (ներբջջային ազիդոզ) կարգավորման բանալին, որոնք պատասխանատու են քարառաջացման համար (աղյուսակ 4.8): Հիմնային ծանրաբեռնվածությունը նվազեցնում է ցիտրատի ռեաբսորբցիան խողովակներում, ինչն էլ իր հերթին կարգավորում է ցիտրատային արտազատությունը և միաժամանակ նվազեցնում է կալցիումի շրջանառությունը: Ամբողջական երիկամա-խողովակային ազիդոզի դեպքում թերապևտիկ հաջողությունները կարելի է վերահսկել երակային արյան գազերի անալիզով (հիմնային ավելցուկ: ± 2.0 մմոլ/լ): Եթե կալցիումի ավելցուկային արտազատությունը (> 8 մմոլ/օր) պահպանվում է

կրկնակի ստուգման դեպքում, ապա դրա մեզով արտազատությունը կարելի է նվազեցնել թիագիդներով:

Աղյուսակ 4՝8՝ Երիկամա-խողովակային ացիդոզի դեղորայքային բուժումը

Բիոքիմիական	Հիմնավորում	Դեղորայք
ռիսկի գործոններ	դեղորայքային բուժման համար	
Հիպերկալցիուրիա	Կալցիումի արտազատում մեծ 8մմոլ/օր	Հիդրոքլորոթիազիդ - Չափահասների մոտ՝ սկզբնական 25մգ/օր, ավելացնել մինչև 50մգ/օր - Երեխաների մոտ՝ 0,5-1մգ/կգ/օր Չափահասների համար այլընտրանք՝ Քլորտալիդոն 25մգ/օր Ինդապամիդ 2,5մգ/օր
Անբավարար մեզի pH	Նեֆրոնների ներբջջային ացիդոզ	Հիմնային ցիտրատ, 9-12գ/օր բաժանված 3 դոզայի, կամ Նատրիումի բիկարբոնատ, 1,5գ, օրը 3 անգամ

Ռիսկի գործոններ և երիկամա-խողովակային ացիդոզի առաջարկվող բուժում

Նշանակեք կալիումի ցիտրատ երիկամա-խողովակային ացիդոզի ժամանակ

Նշանակեք կալիումի ցիտրատ+թիագիդ հիպերկալցիուրիայի

4.6.6. Նեֆրոկալցինոզ [419]

Նեֆրոկալցինոզը վերաբերում է երիկամների կեղևային կամ միջուկային շերտում բյուրեղների ավել կուտակմանը, որը հանդիպում է առանձին կամ երիկամային քարեր հետ զուգակցված: Այն ունի տարբեր նյութափոխանակային պատճառներ: Հիմնական դիսկի գործոններն են՝ հիպերպարաթիրոիդիզմ, առաջնային հիպերօքսալուրիա, երիկամա-խողովակային ացիդոզը, վիտամին D-ի նյութափոխանակային խանգարումները, իդիոպաթիկ հիպերկալցիւրիան և հիպոցիտրատուրիան, գենային խանգարումները, ներառյալ Դենտի հիվանդությունը, Բարտոների սինդրոմն ու մեդուլյար սպունգանման երիկամը: Նեֆրոկալցինոզի բազմաթիվ պատճառները ցույց են տալիս, որ բուժման համար ստանդարտ մեթոդներ չկան: Բուժման ժամանակ ուշադրությունը պետք է կենտրոնացնել պատճառ հանդիսացող նյութափոխանակային կամ գենետիկ խանգարումների վրա՝ միաժամանակ նվազեցնելով դիսկի կենսաքիմիական գործոնները:

4.6.6.1. Ախտորոշում

Ախտորոշումը պահանջում է արյան հետևյալ հետազոտությունները՝ պարասիտորոն (կալցիումի մակարդակի բարձրացման դեպքում), վիտամին D և մետաբոլիտներ, վիտամին A, նատրիում, կալիում, մագնեզիում, քլորիդ և արյան գազային կազմ: Մեզի հետազոտությունը պետք է ընդգրկի մեզի թթվահիմնային պրոֆիլը (ամենաքիչը օրը 4 անգամ), օրեկան մեզի ծավալը, մեզի տեսակարար կշիռը և կալցիումի, օքսալատի, ֆոսֆատի, միզաթթվի, մագնեզիումի և ցիտրատի մակարդակները:

4.7. Միզաթթվային և ամոնիումի ուրատային քարեր

Բոլոր միզաթթվային ու ամոնիումի ուրատային քարառաջացնող հիվանդները դիտարկվում են որպես ռեցիդիվի բարձր հավանականություն ունեցողներ: [17].

Միզաթթվային նեֆրոլիթիազը երիկամային քարերի 10%-ի պատճառ է հանդիսանում: [491]. Դրանք կապված են հիպերուրիկոզուրիայի կամ մեզի ցածր pH-ի հետ: Հիպերուրիկոզուրիան կարող է սննդակարգում ավելցուկի, էնդոգեն գերարտադրության (ֆերմենտային արատներ), միելոպրոլիֆերատիվ խանգարումների, ուռուցքի քայքայման համախտանիշի, դեղորայքի, պոդագրայի կամ կատաբոլիզմի արդյունք լինել [492]. Մեզի ցածր pH-ը կարող է առաջանալ մեզում ամոնիումի թերարտադատման (ինսուլի ռեզիստենտություն կամ պոդագրա), թթվի էնդոգեն գերարտադրության (ինսուլինի ռեզիստենտություն, նյութափոխանակային սինդրոմ կամ ֆիզիկական վարժություններով խթանված կաթնաթթվային ացիդոզ), թթուների ավելցուկային ընդունման (կենդանական սպիտակուցների գերընդունում) կամ հիմքերի կորստի ավելացման (դիառեա) հետևանքով [492].

Ամոնիումի ուրատային քարերը շատ հազվադեպ են հանդիպում՝ բոլոր երիկամային քարերի 1%-ից պակաս դեպքերում: Նրանք կապված են միզուղիների ինֆեկցիաների, թերնեթոման (աղիքային բորբոքային հիվանդություններ և իլեոստոմայի դուրսբերում կամ լուծողականների չարաշահում), կալիումի պակասի, հիպոկալիեմիայի և թերսնուցման հետ:

Միզաթթվի և ամոնիումի ուրատային նեֆրոլիթիազի հետ կապված առաջարկները հիմնվում են ապացուցման երրորդ և չորրորդ մակարդակների վրա:

4.7.1. Ախտորոշում

Նկար 4.5 ցույց է տալիս միզաթթվային և ամոնիումի ուրատային քարերի ախտորոշման և բուժման ընթացակարգը: Արյան հետազոտությունը պահանջում է կրեատինինի, կալիումի և միզաթթվի մակարդակների որոշում: Մեզի հետազոտությունը պահանջում է մեզի ծավալի, pH պրոֆիլի, մեզի տեսակարար կշռի և միզաթթվի մակարդակի որոշում: Ամոնիումի ուրատային քարերի դեպքում պահանջվում է կատարել նաև մեզի ցանքս:

4.7.2. Արդյունքների ամփոփում

Միզաթթվային և ամոնիումի ուրատային քարերը կազմավորվում են միանգամայն տարբեր կենսաքիմիական պայմաններում: Թթվային շրջափակումը (մեզի pH մշտապես ≤ 5.8) նպաստում է միզաթթվի բյուրեղացմանը:

Հիպերուրիկոզուրիան սահմանվում է որպես միզաթթվի գերարտադրություն ≥ 4 մմոլ/օր մեծահասակների կամ > 0.12 մմոլ/կգ/օր երեխաների մոտ:

Կարող է լինել հիպերուրիկեմիա, սակայն ապացույցները քարառաջացման հետ նրա կապի վերաբերյալ շատ քիչ են:


Հիպերուրիկոզուրիկ կալցիումի օքսալատային քարերի կազմավորումը կարելի է տարբերակել միզաթթվային քարերի կազմավորումից հետևյալ ցուցանիշներով՝ մեզի pH, որը սովորաբար > 5.5 կալցիումի օքսալատային քարառաջացման դեպքում և < 5.5 միզաթթվային քարառաջացման դեպքում և երբեմն հիպերուրիկոզուրիայի բացակայությամբ մաքուր միզաթթվային քարեր ունեցող հիվանդների մոտ: [493,494]

Ամոնիումի ուրատի բյուրեղներն առաջանում են մեզի pH > 6.5 , միզաթթվի բարձր կոնցենտրացիայի դեպքում, երբ ամոնիումն առկա է որպես կատիոն: [495-497].

4.7.3. Հալուկ բուժում

